

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Գիտական ղեկավար՝
մանկ. գիտ. թեկնածու,
պրոֆեսոր՝ Կ. Ա. Հայրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ	
1.1. Օտար լեզվով ունկնդրության հիմնական բնութագրերը.....	12
1.2. Օտարալեզու ունկնդրության ուսուցման օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները.....	38
1.3. Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման բովանդակությունը և ծրագրային պահանջները ոչ լեզվական ֆակուլտետում.....	50
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	66
ԳԼՈՒԽ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	
2.1. Ունկնդրության փոխկապվածությունը խոսքային գործունեության մյուս տեսակների հետ.....	68
2.2. Օտար լեզվով ունկնդրությունը մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիայի համատեքստում.....	79
2.3. Անգլերեն պատմագիտական ենթալեզվի համատեքստում մշակված ունկնդրության ուսուցման համալիր վարժությունների համակարգը.....	85
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	135
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	137
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	139
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	154

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման կարևոր պահանջներից է ոչ լեզվական ֆակուլտետում անգլերենի ուսուցման բովանդակության արդիականացումը: Տվյալ դասընթացի բարեփոխման շրջանակներում անհրաժեշտ է շարունակաբար վերանայել մասնագիտական կողմնորոշման անգլերենի (ESP) ուսուցման ողջ համակարգը, քանի որ այն չի բավարարում այդ լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցվելու ապագա մասնագետների մերօրյա պահանջները:

Օտարալեզու հաղորդակցությունը թե՛ միջանձնային, թե՛ մասնագիտական մակարդակներում չի կարող տեղի ունենալ առանց ունկնդրության կարողությունների և հմտությունների: Մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիաների կարևոր բաղադրիչ է ունկնդրության կոմպետենցիան, որը մասնագիտական կողմնորոշման դասընթացներում անհրաժեշտ չափով չեն զարգացնում, չնայած գործող ESP ուսումնական ծրագրերում խնդիր է դրվում զարգացնել խոսքային գործունեության բոլոր հմտությունները՝ խոսելու, ունկնդրելու, կարդալու և գրելու: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուների ուսուցման մանկավարժական պայմանները հեռու են բավարար լինելուց: Նույնիսկ ծրագրային պահանջներն իրականացվում են մասնակիորեն: Ընդ որում, խոսքային գործունեության չորս տեսակից ունկնդրության կարողության ձևավորումն, առանց բացառության, բոլոր դասընթացների ամենաթերի կողմն է: Կարևոր է նշել, որ մշակված չեն մասնագիտական կողմնորոշման դասընթացի համար նախատեսված ունկնդրության ուսուցման արդյունավետ ռազմավարություններ:

Վերջինիս ուսուցման համատարած բարձիթողի վիճակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, որոնցից ամենաէականն այն է, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ունկնդրությունը դիտվում է իբրև խոսքային ընկալողական գործունեության առավել դժվար յուրացվող տեսակ:

Հետազոտության նպատակի և խնդիրների տեսանկյունից կարևորվում են ոչ լեզվական ֆակուլտետներում ունկնդրության ուսուցմանը (E.B. Александрова 2001, A.B.

Гаврилова 2006, О.А. Обдалова 2001, В. А. Яковлева 2003), ունկնդրության վարժությունների մշակմանը (CEFR¹, М. П. Базина 1988, Е. Г. Богданова 1984, К. М. Бржозовская 2003, Н. В. Войтик 2015), ունկնդրության խոսակցական հայեցակերպին (А.В. Гаврилова 2000), օտարալեզու ունկնդրության տեքստերի ընտրության և կիրառման սկզբունքներին, չափանիշներին (И.А. Гончар 2011, Е.С. Горюнова 2011, Е. И. Латушко 2004, М. В. Куимова 2005, Е. А. Карташова 2017, И.Д. Попова 2012), ունկնդրության դժվարություններին (Ռ.Ռ. Խաչատրյան 2012, Н.В. Елухина, М.Г. Каспарова 1991), ունկնդրության դիդակտիկական հիմքերին (Я.В. Зудова 1997, Е. В. Крылова 1994), ունկնդրության արտալսարանային, ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը, ունկնդրության տեսակներին (Л.Ю. Кулиш 1991, Л.И. Иванова 1997, Е.И. Пассов 1991), ունկնդրությանը վերաբերող դասագրքերի, դասանյութերի վերլուծությանը (Черкашина 2003) նվիրված աշխատանքները: Վերոնշյալ աշխատությունները մեծ ներդրում ունեն օտարալեզու ունկնդրության ուսումնասիրման և ուսուցման բարելավման գործում, սակայն նշված և այլ աշխատանքներում ուսումնասիրության առարկա չեն դարձել անգլերենի ունկնդրության կարողությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, հաշվի առնելով հայալեզու ուսանողների լսարանը, նրանց լեզվական մակարդակը՝ B1, B2, ունկնդրության կարողությունների ձևավորման դժվարությունները, մասնագիտական և ճանաչողական պահանջմունքները, ինչպես նաև ունկնդրության կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

Հիմք ընդունելով ESP դասընթացում ունկնդրության ուսուցումը բարելավելու կարևորությունը՝ սույն հետազոտության առաջ խնդիր է դրվում մշակել անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ, որն առավելագույնս կնպաստի ուսումնական ծրագրերով նախատեսված ինչպես գործնական, այնպես էլ կրթական և մշակութային նպատակների իրականացմանը:

Առաջարկվող մեթոդական համակարգը մշակելու արդիականությունը հիմնավորվում է մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացի

¹ The Common European Framework of Reference. (2001). <http://culture.coe.fr/lang/eng/eedu2.4.htm>

կազմակերպման որակը բարելավելու կարևորությամբ, քննարկվող հիմնախնդրի թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում ոչ բավարար մշակվածությամբ, ունկնդրության ուսուցման և ուսումնառության, օտարալեզու բանավոր հաղորդակցման մակարդակն արդի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Վերոնշյալից հետևում է, որ սույն **հետազոտության նպատակը** մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ունկնդրության ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգի մշակումն է:

Հետազոտության օբյեկտը՝ ոչ լեզվական ֆակուլտետում մասնագիտական կողմնորոշման անգլերենի ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային գործունեության գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ունկնդրության ուսուցման մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածը. ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով ունկնդրության կարողությունների և հմտությունների ձևավորման և զարգացման գործընթացը կհամապատասխանի արդի պահանջներին, եթե

- վերլուծվեն մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ուսումնամեթոդական համալիրները, ուսումնական ծրագրերը, ուսանողների լեզվական ընկալողական մակարդակը, ճանաչողական և մասնագիտական պահանջմունքները,

- մշակվի ունկնդրության կարողությունների և հմտությունների զարգացման մեթոդական համակարգի շարժընթացը ներկայացնող օրինակելի մոդել, որի հիմքում ընկած են հստակ մեթոդաբանությամբ ընտրված ուսուցման մեթոդներ և ռազմավարություններ, տեսական և փորձարարական վերլուծությամբ նախատեսված ընթացակարգեր, ունկնդրության տեքստեր և վարժություններ, ապա փորձարարական ուսուցման ընթացքում և տվյալների ամփոփմամբ կհիմնավորվի առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Նշված նպատակն իրականացնելու և առաջ քաշված վարկածը ստուգելու համար առաջադրվել են **հետազոտության հետևյալ խնդիրները.**

1. վերլուծել մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում շրջանառվող անգլերենի չափորոշիչները, ուսումնական ծրագրերը, դասագրքերը, ուսանողների լեզվական մակարդակը և նպատակադիրքորոշումները,

2. բացահայտել ունկնդրության կոմպետենցիայի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև նրա զարգացմանը խոչընդոտող ընդհանուր և մասնակի, օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները,

3. ընտրել ունկնդրության ուսուցման օպտիմալ ռազմավարություններ և մեթոդներ, տեքստեր և վարժություններ, որոնք ընկած են ունկնդրության կազմակերպման օրինակելի մոդելի հիմքում և փորձարարական ուսուցմամբ հիմնավորել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ **մեթոդներով**.

1. **Տեսական մեթոդներ**. Թեմային վերաբերող գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, ունկնդրությանը վերաբերող տարբեր տեսությունների դասակարգում, ստացված արդյունքների ընդհանրացում:

2. **Էմպիրիկ հետազոտության մեթոդներ**. Անկետավորում, թեստավորում, հարցազրույց, ուսանողների աշխատանքի դիտարկում, ստացված արդյունքների համեմատություն, չափում:

3. **Վիճակագրական մեթոդներ**. Ուսանողների անձնային և լեզվական տվյալների գրանցում, հաշվառում, ըստ ցուցիչների նրանց լեզվական մակարդակների սանդղակավորում, փորձարարական և ստուգողական խմբերի փորձարկման արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են երկլեզվության և բազմալեզվությանը (Dewaele 2012, Canale, M. & Swain, M. 1980, Joe Sheils² 1993 և ուրիշ.), հնչյունական փոխազդեցությանը (Մ. Գ. Աստվածատրյան 1985, Կ. Ա. Հայրյան 2008 և ուրիշ.), օտարալեզու բնագրերի ունկնդրության ընտրության և կիրառման սկզբունքներին (E. A. Карташова 2017, E. B. Носонович, P. П. Мильруд 1999, И. Д. Попова 2012 և ուրիշ.), ունկնդրության հոգեբանական, լեզվաբանական,

² Sheils, Joe. Communication in the Modern Languages Classroom : project n° 12 "Learning and Teaching Modern Languages for Communication". Strasbourg, 1993.

հոգելիցվաբանական դժվարություններին (A. Bradford 2007, S. A. Bird, & J. N. Williams 2002, D. Evans, P. Zeun, & R. Stanier 2013, C. Goh 2008, S. A. McLeod 2010, Wang, Wudong 2004, M. Wilson 2003, И. А. Зимняя 1973, Я. М. Колкер, Е. С. Устинова 2002), հնչյունական, ունկնդրության կոմպետենցիաներին (V. Cook 1995, I. Luka 2007, P. Nathan 2008, И. А. Зимняя 2003, А. А. Шахназарян 2014), ունկնդրության ուսուցման մոդելներին (И. В. Щукина 2009, J. H. Hulstijn 2003), ունկնդրության ուսուցման ռազմավարություններին (J. Cross 2011, S. Graham 2003, T. S. Lee 2015, T. Lynch 1995, E. Macaro 2001, 2007, D. Mendelsohn 2006, M. H. Tafaghodtari 2010) վերաբերող տեսությունները և հայեցակարգերը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ

➤ ստեղծվել է ունկնդրության ուսուցման հստակ ընթացակարգերով իրականացվող եռափուլ մոդել, որը ներկայացնում է հաղորդակցական մոտեցման սկզբունքներով մշակված ընթացակարգեր, ունկնդրողական մասնագիտական տեքստեր, դրանց հետ աշխատանքի նախատեքստային, տեքստային, հետտեքստային վարժություններ,

➤ համապատասխան մեթոդաբանական և մեթոդական գրականության ուսումնասիրության արդյունքում ներդրվել են օտարալեզու ունկնդրության ուսուցման արդյունավետ ռազմավարություններ, մեթոդներ, անգլերեն պատմագիտական ենթալեզվի յուրացմանը միտված վարժություններ, առաջադրանքներ և տեքստեր,

➤ ըստ նշված մոդելի մշակվել և փորձարկվել է մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ունկնդրության ուսուցման մեթոդական համակարգ, որը ներկայացնում է մասնագիտական և ոչ մասնագիտական ունկնդրողական տեքստեր, դրանց հետ աշխատանքի վարժությունները: Թե՛ տեքստերը, թե՛ վարժությունները ընտրվել և մշակվել են հաշվի առնելով ունկնդրման վերճանաչողական, փոխհատուցման ռազմավարությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսությունն ու պրակտիկան հարստացել են օտարալեզու ունկնդրության ուսումնասիրության շուրջ վերոնշյալ ձեռքբերումներով՝ հաշվի առնելով բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերենի

ունկնդրության ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները: Աշխատության տեսական նշանակությունն այն է, որ ճանաչողական-հաղորդակցական մոտեցման սկզբունքներով մշակվել, տեսականորեն հիմնավորվել և փորձարարական ուսուցմամբ հաստատվել է առաջարկվող մոդելի արդյունավետությունը:

Ըստ այդմ՝ առաջարկվում է ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվին հատկացվող սահմանափակ դասաժամերը փոխհատուցող մեթոդական ճկուն, դինամիկ համակարգ, որը խոսքային գործունեության մյուս տեսակների հետ կնպաստի ունկնդրության ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Մշակված և փորձարարական ուսուցմամբ փորձարկված ունկնդրության զարգացման եռափուլ ընթացակարգային մոդելը կարող է կիրառվել մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացներում: Հետազոտության եզրակացությունները և վերջնարդյունքները, առաջադրված դրույթները կարող են օգտագործվել այլ դասընթացներ նախագծողների, ուսումնական պլաններ, ծրագրեր կազմողների, դասագրքերի հեղինակների և գործնական անգլերեն դասավանդողների կողմից:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունը հավաստվում է մանկավարժական սույն գործընթացի ելակետային սկզբունքների և գիտության արդի պահանջների համապատասխանությամբ, անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման մշակված մեթոդական համալիրի բարձր արդյունավետությամբ, ինչը հաստատվել է մեծաթիվ ուսանողների մասնակցությամբ անցկացված երկամյա փորձարարական ուսուցմամբ, որի ընթացքում արձանագրված ստույգ տվյալները և դրանց օբյեկտիվ վերլուծությունը, ստացված արդյունքների համակողմանի և անկողմնակալ գնահատականը լիովին համապատասխանում են աշխատանքում առաջադրված կանխավարկածին և տեսական այլ դրույթների:

Հետազոտության հիմնական փուլերը.

Սույն հետազոտությունը իրականացվել է հինգ տարվա ընթացքում հետևյալ 3 փուլերով.

Առաջին փուլում (2010-2011) հավաքագրվել, ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական, մանկավարժական, լեզվաբանական, հոգեբանական, լեզվահոգեբանական և բազմալեզվադիդակտիկական գրականություն: Զրույցի, հարցման և անկետավորման միջոցով բացահայտվել են ուսանողների ճանաչողական, մասնագիտական պահանջմունքները և դրդապատճառները: Տվյալ փուլի ավարտին մշակվել է հետազոտության գիտական-հասկացական ապարատը:

Երկրորդ փուլում (2011-2013) հետազոտական աշխատանքը հիմնականում ծավալվել է ձևավորող, որոնողական և ստուգողական փորձարարության ուղղությամբ: Բազմակողմանի հարցումների և թեստավորման արդյունքների ամփոփման հիման վրա ի հայտ է բերվել մասնագիտական կողմնորոշման անգլերեն բանավոր խոսքը ընկալելու կարողությունների և հմտությունների զարգացման առավել տիպական երեք փուլ:

Տվյալ համակարգի փորձարարական ուսուցման համար կազմվել են համապատասխան վարժություններ և տեքստի շուրջ աշխատելու առաջադրանքներ ունկնդրության ուսուցման գործընթացը եռափուլ ընթացակարգերով կազմակերպելու նպատակով: Այս փուլում սկսվել է ատենախոսության շարադրումը:

Երրորդ փուլում (2013-2014) իրականացվել է հաստատող փորձարարական աշխատանք, որի ընթացքում լրամշակվել և ավարտուն տեսքի են բերվել ունկնդրության ուսուցման վարժությունները, առաջադրանքները, վերլուծվել և ամփոփվել են փորձարարական ուսուցման արդյունքները:

Ավարտվել է ատենախոսության շարադրումը և ներկայացվել մասնագիտական քննարկման:

Հետազոտության փորձաքննությունը և ներդրումն իրականացվել են Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում (ՀՊՄՀ), Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) և Երևանի «Հայբուսակ» համալսարանում:

Փորձարարական ուսուցումը կազմակերպվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության բաժնի առաջին և երկրորդ կուրսերում: Հետազոտության հիմնական դրույթները և փորձարարական ուսուցման արդյունքները պարբերաբար ներկայացվել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների 2013-2015 թվականների տարեկան գիտաժողովներում, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտների և հայցորդների 2012 - 2015 թվականներին անցկացված տարեկան ատեստավորման նիստերին, ինչպես նաև անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնում օտար լեզուների դասավանդման այլ խնդիրների նվիրված սեմինարներին:

Ատեսախոսության վերաբերյալ հրապարակվել է 7 գիտական հոդված:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացում ունկնդրության ուսուցումը պետք է կազմակերպվի խոսողության, ինչպես նաև հնչյունաբանության, բառապաշարի և քերականության գործնական ուսուցման հետ փոխկապակցված և փոխհամաձայնեցված, ինչը հնարավորություն է ընձեռում ապահովել ունկնդրության կարողությունների և հմտությունների բնականոն զարգացումը:

2. Անգլերեն պատմական կողմնորոշման դասընթացում արդյունավետ է կիրառել լսարանային և արտալսարանային աշխատանքի շրջանակներում կիրառվող ունկնդրության ուսուցման հաղորդակցական, վերճանաչողական և փոխհատուցման ռազմավարությունները, հաշվի առնելով ազգային լսարանում ծագող ունկնդրության օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները:

3. Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման առաջարկվող համակարգում առաջին պլան են մղվում հաղորդակցական և փոխհատուցման ռազմավարությունները, քանի որ ոչ բավարար լսարանային ժամերի պայմաններում, սկզբունքային նշանակություն են ստանում ուսանողների արտալսարանային ունկնդրության կազմակերպման, նրանց ինքնուրույն աշխատանքի մշակույթի ձևավորման հիմնախնդիրները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է 153 համակարգչային էջից (առանց հավելվածների): Այն ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ, 5 գծապատկեր, 13 աղյուսակ և 3 տրամագիր:

ԳԼՈՒԽ 1. ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ

1.1. Օտար լեզվով ունկնդրության հիմնական բնութագրերը

Հայաստանի բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն լեզվով ունկնդրելու, խոսելու, կարդալու և գրելու ունակությունների համալիր զարգացման գործընթացի առավել թերի և անկատար կողմը ունկնդրության ուսուցումն է:

Մեր դիտարկումների համաձայն՝ Հայաստանի ոչ լեզվական ֆակուլտետներում, մասնավորապես անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման հետ կապված բամաթիվ չլուծված խնդիրների հիմնական պատճառը տվյալ դասընթացի շրջանակում ընթերցանության ուսուցման ավանդական գերակայությունն է:

Տարիների ընթացքում ձևավորված և մինչ օրս պահպանվող այդ ավանդույթը սկիզբ է առել 1970-ական թվականներից՝ որպես օտարալեզու աղբյուրներից մասնագիտության վերաբերյալ լրացուցիչ և օգտակար տեղեկատվություն ստանալու հույժ կարևոր գործառույթ, որին ստորադասվում էին խոսքային գործունեության մյուս տեսակների ուսուցման գործընթացները:

Իհարկե, 20-րդ դարի 70-ական թվականներին, երբ ԽՍՀՄ-ի կազմում այլ հանրապետությունների հետ միասին Հայաստանի բնակչության փոխշփումները արտասահմանյան երկրների հետ խիստ սահմանափակ էին, բուհերում օտար լեզվով գրավոր հաղորդակցման կարողությունների զարգացման գերակայությունը միանգամայն արդարացված էր: Հետագա տասնամյակներում՝ հատկապես Հայաստանի անկախացումից հետո, անգլերեն լեզվով բանավոր հաղորդակցվելու հանրային պահանջի մեծացմանը զուգընթաց այդ լեզվով խոսողության ունակությունների զարգացմանը ոչ լեզվական բուհերում սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել: Այդուհանդերձ, չնայած այն հանգամանքին, որ 21-րդ դարում անգլերեն լեզվով բանավոր հաղորդակցվելու պահանջը ողջ աշխարհում կտրուկ աճել է, Հայաստանի ոչ լեզվական ֆակուլտետներում այդ լեզվով ընթերցանության

ուսուցումը ավանդաբար շարունակում է պահպանել իր հարաբերական կարևորությունը, ինչը մեծ չափով ստվերում է ունկնդրության և խոսողության ուսուցման գործառույթները:

Ելնելով օտար լեզուների ուսուցման տարածաշրջանային առանձնահատկություններից՝ պետք է նշել, որ ինչպես ունկնդրության, այնպես էլ խոսքային գործունեության մյուս տեսակների փոխկապակցված գործածության ունակությունների զարգացման օբյեկտիվ հնարավորությունները համընդհանուր առումով պայմանավորված են լեզվաքաղաքականության և հաղորդակցման միջավայրի գործոններով: Հայաստանի Հանրապետությունում օտար լեզուների տարբեր նպատակներ հետապնդող ուսուցումը ներկա ժամանակահատվածում իրականացվում է «Լեզուների իմացության համաեվրոպական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, գնահատում» Եվրոխորհրդի կողմից մշակված լեզվաքաղաքականության շրջանակներում (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ 2005):

Տվյալ ծրագրի առանցքային դրույթներից մեկի համաձայն՝ «...Եվրոպայի խորհրդի կողմից որդեգրված քաղաքականության մեջ վերջին տարիներին կարևորվում է բազմալեզվության հայեցակարգը: Անհատի բազմալեզվությունը (plurilingualism) նույնը չէ, ինչ հասարակության բազմալեզվությունը (multilingualism), որը ենթադրում է մի քանի լեզուների իմացության կամ տվյալ հասարակության մեջ տարբեր լեզուների համագոյակցություն» (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ 2005: 5):

«Ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերենին տիրապետելու ուսանողների ամենագործուն դրդապատճառը, անտարակույս, հանդիսանում է իրենց ընտրած մասնագիտության մեջ խորանալու և կայանալու, միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական գործառույթներ իրականացնելու նպատակով այդ լեզվի համակողմանի յուրացումը, որի շրջանակում «...արդյունավետ ունկնդրելն առանցքային նշանակություն ունի հաղորդակցական ունակությունների ձևավորման և զարգացման գործընթացում» (Խաչատրյան 2012: 3):

Ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուն ուսուցանվում է գիտության կամ հանրային գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու և փոխանակելու, այս կամ այն բնագավառում տվյալ լեզվով մասնագիտական բազմակողմանի գործունեություն ծավալելու, ինչպես նաև օտարերկրացիների հետ շփվելու նպատակներով: Այդ ամենը կյանքի կոչելու համար մասնագիտական կողմնորոշման օտար լեզուների բուհական ծրագրերով նախատեսված է գրավոր և բանավոր խոսքի ներդաշնակ զարգացում:

Մասնագիտական ուղղվածության օտարալեզու ունկնդրության ուսուցումն իր նպատակին հասցնելու համար ձեռնարկվող համալիր միջոցառումների շրջանակում անհրաժեշտ է հաշվի առնել այն բոլոր գործոնները, որոնք այս կամ այն չափով առնչվում են ունկնդրական ունակությունների ձևավորման և զարգացման գործընթացի հետ: Այդ տեսանկյունից ունկնդրության նպատակների և խնդիրների հստակեցումը, ծրագրային չափանիշների սահմանումը, ուսուցման բովանդակության վերանայումը հանդիսանում են խոսքային գործունեության այդ տեսակի արդյունավետ ուսուցման անհրաժեշտ, բայց ոչ բոլոր բավարար պայմանները:

Տվյալ դասընթացից ակնկալվող վերջնարդյունքը հայտնի չափով պայմանավորված է նաև հայկական լեզվահաղորդակցական միջավայրին բնորոշ որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի գործոններով: Մեր կարծիքով դրանց թվին պետք է դասել առանձին մասնագիտություններն արտացոլող օտարալեզու ենթալեզվի շրջանակում ունկնդրության ուսուցման նախորդ փորձը և արմատավորված ավանդույթները, ուսուցանողների մասնագիտական և ուսանողների ակադեմիական բնութագրերը, լեզվահաղորդակցական միջավայրը, պայմանները և այլն:

Ստորև ներկայացնում ենք քննարկվող դասընթացում ընդհանուր տարածում գտած այն երևույթները, որոնք զգալի ազդեցություն ունեն անգլերենի ունկնդրության ունակությունների զարգացման վրա.

1. Հայաստանի ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն լեզու դասավանդողների շրջանում գերիշխում է այն թյուր տեսակետը, որ օտարալեզու բանավոր խոսքի ուսուցման արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված է խոսելու ունակություններ և կարողություններ զարգացնելու հետ: Ինչ վերաբերում է

բանավոր խոսքի կայացման երկրորդ բաղադրիչին՝ ունկնդրության ունակություններին, ապա, այդ նույն տեսակետի համաձայն, անգլերենն ուսումնասիրողին դրանք փոխանցվում են ինքնաբերաբար՝ մայրենի լեզվով ունկնդրելու փորձառությունից, ինչը նշանակում է, որ օտար և մայրենի լեզուներով արտահայտված խոսքը ընկալելու ունակությունների միջև, ըստ էության, տարբերություն չի դրվում:

Դրանով պետք է բացատրել, որ օտարալեզու ունկնդրության համեմատ խոսողությունը համարվում է ավելի կարևոր և դժվար ուսուցանելի հաղորդակցական տեսակ, որի արդյունավետ կազմակերպումը դիտվում է որպես բանավոր խոսքի զարգացման վճռորոշ գործոն: Բնականաբար, այդ վնասաբեր մոտեցումը փոխանցվում է նաև ուսանողներին, որի արդյունքում հայկական ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման և յուրացման ուղղությամբ ներկայումս գրեթե ոչ մի համակարգված աշխատանք չի ձեռնարկվում:

2. Օտար լեզվով ունկնդրության ունակությունների զարգացման գործընթացն անվերապահորեն ներառում է հնչյունաբանության ուսուցումը, քանի որ բանավոր խոսքն ընկալելու կարևորագույն նախապայմանը տվյալ լեզվի հնչյունական համակարգին տիրապետելն է (Դանիելյան 2006: 185):

Հայաստանի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզվի դասընթացի սուղ դասաժամերի պարագայում հնչյունաբանության ուսուցումը սահմանափակվում է մասնագիտական բառապաշարի արտասանության ուսուցմամբ, որն ինքնին նաև ունկնդրության ուսուցման գործառույթ է: Այդ հանգամանքը բազմաթիվ դասախոսների կողմից ունկնդրության և հնչյունաբանության ուսուցման գործառույթների ոչ հստակ տարանջատման տեղիք է տալիս:

Չնայած հնչյունաբանության ուսուցման ուղղությամբ կատարվող աշխատանքն ունկնդրության ուսուցման մի շարք գործառույթներից միայն մեկն է, սակայն պրակտիկայում այն հաճախ ներկայացվում է իբրև ունկնդրության լիարժեք ուսուցում: Մեզանում համատարած այդ իռացիոնալ պրակտիկայի բուն պատճառն, իհարկե, այն չէ, որ օտար լեզվի դասախոսները տեղյակ չեն ունկնդրության և հնչյունաբանության ուսուցման նպատակների, խնդիրների և գործառույթների տարբերություններին: Որոշ

դասախոսներ ունկնդրության և հնչյունաբանության ուսուցման նույնացումը պատճառաբանում են նրանով, որ դա թելադրված է դասաժամերի անբավարարությամբ: Սակայն օտար լեզվի դասախոսների ճնշող մեծամասնությունը խոստովանում է, որ դրա բուն պատճառը ունկնդրության ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական համալիրների և փորձի բացակայությունն է:

Անգլերեն լեզվի մասնագիտական կողմնորոշման ամեն մի դասընթաց ներկայացնում է գիտության կամ հանրային գործունեության մի բնագավառի ենթալեզու, որի շրջանակում կազմակերպվում է բանավոր և գրավոր խոսքի զարգացումը: Անգլերեն լեզվով խոսքային գործունեության բոլոր տեսակների հաղորդակցական ունակությունների զարգացման ուսումնամեթոդական աշխատանքը հիմնականում իրականացվում է տվյալ ենթալեզվի ուսուցման համար նախատեսված դասագրքի կամ ձեռնարկի հիման վրա:

Հետևաբար, ուսումնական այդ նյութերի որակական և քանակական բնութագրերը վճռորոշ նշանակություն ունեն տվյալ դասընթացի ընդհանուր արդյունավետության համար (Հայրյան 2008: 333-335):

Հայտնի է, որ Հայաստանի ոչ լեզվական ֆակուլտետների համար նախատեսված անգլերեն լեզվի մասնագիտական կողմնորոշման դասագրքերն ու ձեռնարկները ³սակավաթիվ են, մինչդեռ բուհերում ուսուցանվում են հարյուրավոր մասնագիտություններ:

³ Khasapetian S. English-Armenian Armenian-English Dictionary of Genocide Terms (Ցեղասպանագիտական եզրույթների անգլերեն-հայերեն հայերեն-անգլերեն բառարան), YSU press, 2015, 408 p.

Khasapetyan S. English for history students, 2009,

Ուսումնական ձեռնարկ, <<Լիմուշ>> հրատ, Երևան, 276 էջ

Khasapetian S., Grigorian A. Culture for everyone, Երևան, Լիմուշ հրատարակչություն, 2008թ., 296 էջ:

S. Khasapetian, A. Grigorian English for history students: Դասագիրք, Երևան, «Լիմուշ» հրատ., 2005թ., 234 էջ:

Խասապետյան Ս. Ռ. Պատմական տերմինների անգլերեն-հայերեն բառարան / English-Armenian dictionary of historical terms: Բառարան, Երևան, <<Ասողիկ> Հրատարակչություն, 2004թ., 68 էջ:

Mkrtchyan Ch, Khasapetyan S. From our experience of teaching English at the faculty of history : FLSP N4, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2004թ., 59-63 էջ:

Խասապետյան Ս. Անգլերենի ձեռնարկ պատմության ֆակուլտետի ուսանողների համար: Ձեռնարկ/ Manual/ Yerevan University Press, ԵՐԵՎԱՆ-1988-YEREVAN, 168p.

Խասապետյան Ս. Ռ. Անգլերենի ձեռնարկ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների համար: Ձեռնարկ /Manual/ Yerevan University Press, ԵՐԵՎԱՆ-1987-YEREVAN, 170p.

Թոքմաջյան Հ. Ա., Մխիթարյան Ե. Ս. Անգլերենի դասագիրք ոչ մասնագիտական հումանիտար ֆակուլտետի համար, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, 449 էջ

Նշված դասագրքերը նախատեսված չեն ՀՀ բուհերի պատմական ֆակուլտետների համար: Պատահական չէ, որ ՀՊՄՀ Օտար լեզուների դասավանդման ամբիոնի ծրագրերում դրանց հետ զուգահեռ առաջարկվում է ամբիոնի կողմից ստեղծած մշակում և ուսումնամեթոդական ձեռնարկներ: Նշված դասագրքերն ունեն ըստ մակարդակների դասական կառուցվածք:

Սովորողները ըստ բաժինների զարգացնում են իրենց քերականական, բառապաշարային, արտասանական, ունկնդրողական, ընթերցանական, խոսողության ու գրության հմտությունները:

Ինչ վերաբերում է ունկնդրությանը, ապա բոլոր նշված դասագրքերում բավականին ամբողջական է են տրված ունկնդրողությանը վերաբերող առաջադրանքները: Սակայն դրանք չեն վերաբերում անգլերեն պատմական, պատմագիտական ենթալեզվին, և նպատակաուղղված չեն ներառում պատմական հիմնահարցերին վերաբերող տեքստեր կամ բնագրեր: Դրական է այն, որ վերջին տարիներին պատմական կողմնորոշման անգլերենի ուսուցման տևողությունը ավելացել է և չորս կիսամյակից դարձել է յոթ կիսամյակ:

Սակայն, թե՛ ծրագրերում, թե՛ կիրառվող դասագրքային համալիրներում չի ավելացել ինքնուրույն ունկնդրության ժամերը, հատկապես երբ խոսք է գնում է գնում բնագիր պատմական ֆիլմերի դիտմանը կամ անգլալեզու պատմական թեմատիկայով դասախոսությունների ունկնդրմանը:

Անհրաժեշտ է հաշվի առնել ռուսական բուհերի հարուստ փորձն անգլերեն պատմական ենթալեզվի ուսուցման գործում:⁴

1. ⁴ Амбрамчик Е.Ф. и др. English for History Students. Achievement Tests Минск : БГУ, 2010. – 87 с.
2. Бонди Е.А. Английский язык для студентов-историков / English for Specific Purposes → Для исторических специальностей / English for History Studies, Изд-во: АСТ-2001. – 213с.
3. Гончарова Л.Ю. Early Russian History (key issues): Для специалистов / English for Specific Purposes → Для исторических специальностей / English for History Studies: Учебно-методическое пособие по английскому языку. – Воронеж: Изд-во ВГУ, 2005. – 36 с.
4. Капустина Т.В. (сост.) Задания для чтения текстов на английском языке: Для специалистов / English for Specific Purposes → Для исторических специальностей / English for History Studies: Для студ. истор. фак. – Брест: Изд-во БрГУ, 2006. – 39 с.
5. Khasapetian S.R. English for History Students: Asogik, 2005. – 234 с.

Мартемьянова Н.В., Петросян Ж.В. English for Historians (английский язык для историков): Для специалистов / English for Specific Purposes → Для исторических специальностей / English for History Studies: Минск : БГУ, 2010. – 87 с.

Седелкина Л. Н., Яковлева Е. Б., Миньяр-Белоручева А. П. English for history students : Учебно-методическое пособие под ред. С.Г. Тер-Минасовой и Е.Б. Яковлевой. — Издательство Московского университета Москва, 1988. — С. 80

Հատկանշական է այն, որ նույն ՌԴ լայնորեն շրջանառվում է Ս. Խասապետյանի դասագիրքը, որը աչքի է ընկնում նրանով, որ ստեղծված է ՀՀ-ում, ընդ որում՝ վերջին շրջանում: Նշված դասագրքերի կարևոր թերություններից մեկն այն է, որ նախատեսված չեն հայալեզու լսարանի համար և ստեղծված չեն պահանջներին համահունչ տեսահավելվածներ կամ սկավառակներ:

Մեր կարծիքով պատմություն ուսումնասիրող ցանկացած անձ պետք է օգտվի Top free resources for teaching and learning Social Studies (Top free resources for teaching and learning Social Studies: <http://classroom-aid.com/educational-resources/social-study/>) և նմանատեսակ կայքէջերից, քանի որ հնարավորություն է ընձեռվում օգտվել անգլերեն պատմահասարակական բնագրերից և նյութերից ցանկացած պահի, օգտվելով համացանցի ընձեռած հնարավորություններից (Տե՛ս հավելված resources):

Փաստորեն, բազմաթիվ մասնագիտությունների անգլերեն ենթալեզուն մեզանում, ինչպես հարկն է, չի ուսուցանվում, որովհետև հատուկ հայախոս միջավայրի համար մշակված նման ուսումնական նյութեր չկան:

Գործածվող դասագրքերի մի մասն էլ նախատեսված է ոչ թե հատուկ ենթալեզու սովորեցնելու, այլ բնասիրական, բնագիտական և այլ ուղղվածության տեքստերի հիման վրա ընդհանուր հաղորդակցական ունակություններ զարգացնելու համար, ինչը մերօրյա ուսանողության պահանջները, բնականաբար, չի կարող բավարարել⁵:

Հայաստանում անգլերեն լեզվի մասնագիտական կողմնորոշման դասընթացները մեծ մասամբ կազմակերպվում են արտերկրում հրատարակված դասագրքերի հիման

Шакирова Т.И. Сборник текстов по специальности (Английский язык) Учебно-методическое пособие по развитие навыков чтения и реферирования текстов по специальности (для студентов исторического факультета): Для специалистов / English for Specific Purposes → Для исторических специальностей / English for History Studies. - Калуга, КГУ им. К.Э. Циолковского, 2005. - 58 с.

5 “Empower”, Student's Book, Elementary, Adrian Doff, Craig Thaine, Herbert Puchta, Jeff Stranks, Peter Lewis-Jones Cambridge University Press, 2015 (Unit 1-6, pp. 6-68, 136-147)

“Empower”, Workbook, Elementary, Peter Anderson Cambridge University Press, 2015 (Unit 1-6, pp. 4-39)

“Cutting Edge”, Student's Book, Pre-Intermediate. Sarah Cunningham, Peter Moor. Pearson Longman (Modules 1,2,3,4,5,7,8,9 pp. 6-87)

“Cutting Edge”, Workbook, Pre-Intermediate. Sarah Cunningham, Peter Moor. Pearson Longman (Modules 1,2,3,4,5,7,8,9 pp. 4-59).

“Cutting Edge”, Student's Book, Intermediate. Sarah Cunningham, Peter Moor. Pearson Longman (Module 1-2, pp. 6-25)

“Cutting Edge”, Workbook, Jane Comyns Carr, Frances Eales Intermediate. J. Pearson Longman (Module 1-2, pp. 4-21)

“Cutting Edge”, Student's Book, Intermediate. Sarah Cunningham, Peter Moor. Pearson Longman (Module 5-6 pp. 48-69)

“Cutting Edge”, Workbook, Jane Comyns Carr, Frances Eales Intermediate. J. Pearson Longman (Module 5-6 pp. 36-50)

վրա: Քանի որ այդ դասագրքերը նախատեսված են լեզվահաղորդակցական այլ միջավայրի համար, ապա հայախոս լսարանում արտասահմանյան դասագրքերի արդյունավետությունն ապահովելու փորձված միջոցը դրանց տեղայնացումն է, այսինքն՝ անհրաժեշտ կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների ենթարկելով՝ դրանք սովորողների տվյալ քանակակազմի հնարավորություններին և պահանջներին համապատասխանեցնելը: Ընդ որում՝ նշված փոփոխությունները պետք է առավելապես նպաստեն խոսքային գործունեության բոլոր տեսակների համակողմանի զարգացմանը, որը ոչ բոլոր դասախոսներն են ի զորու պատշաճ մակարդակով իրականացնելու:

Հիմք ընդունելով հումանիտար որոշ մասնագիտություններ արտացոլող անգլերեն լեզվի դասագրքերի կառուցվածքն ու բովանդակությունը, ինչպես նաև դասախոսների անձնական կարծիքը՝ կարելի է եզրակացնել, որ մի շարք չափանիշներով դրանք համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, դրանք նպատակաուղղված են մասնագիտական բառապաշարի ստեղծմանը, քերականական նյութի կիրառության ամրապնդմանը, տվյալ ենթալեզվի շրջանակներում խոսողության, ընթերցանության և թարգմանության ունակությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է ունկնդրության ուսուցմանը, ապա պետք է փաստել, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում մշակված մասնագիտական կողմնորոշման անգլերեն դասագրքերը, որպես կանոն, նման նպատակ չեն հետապնդում:

3. Հայաստանի ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն լեզվով ունկնդրության ունակությունների զարգացմանը էականորեն խոչընդոտող պատճառներից մեկն էլ այդ գործընթացի վերահսկման հետ կապված բարդություններն են: Օտար լեզվի պարագայում խոսքային գործունեության տեսակների ուսուցման արդյունավետ կազմակերպումը պահանջում է շարունակաբար հսկողություն սահմանել հաղորդակցական ունակությունների և կարողությունների զարգացման ընթացքի վրա, որը հնարավորություն է ընձեռում ի հայտ բերել այդ գործընթացի առանձին փուլերում առկա արդյունքների օբյեկտիվ պատկերը և անհրաժեշտ փոփոխություններ կատարել ուսումնամեթոդական աշխատանքում (Դանիելյան 2008, Айрян 2006): Այդ տեսանկյունից, եթե ուսուցանողի համար խոսողության և գրության ուսուցման իրական

պատկերը միշտ ակնհայտ է, իսկ ընթերցանության ունակությունների զարգացումը թարգմանության միջոցով վերահսկվում և ինքնավերահսկվում է, ապա ունկնդրության ունակությունների զարգացման ընթացքը միշտ չէ, որ անհրաժեշտ պահի կարող է բացահայտվել, ինչը պայմանավորված է այդ գործընթացի ներքին բնույթով: Խոսքն այն երևույթի մասին է, որ դասախոսը հաճախ չի կարողանում կռահել, թե ինչքանով է ունկնդրված խոսքը հասկացվել, քանի որ մի դեպքում ուսանողներն իրենք չեն կարողանում կողմնորոշվել այդ հարցում, մյուս դեպքում չնայած անգլերեն խոսքը մասամբ կամ լրիվ չեն հասկանում, տարբեր պատճառներով դասախոսին չեն հայտնում այդ մասին:

ՀՀ-ում անգլերեն լեզվի մասնագիտական կողմնորոշման դասընթացում ունկնդրության ուսուցման վերը նշված բացասական երևույթները, բնականաբար, միանգամից և պատահականորեն չեն առաջացել: Դրանք ձևավորվել և արմատավորվել են երկար տարիների ընթացքում, և քանի որ համատարած բնույթ են կրում, ուստի ունեն որոշակի իրողությունների վրա հիմնված բացատրություններ:

Բազմալեզվության զարգացման համատեքստում մեծապես կարևորվում է անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվով ունկնդրության ունակությունների յուրացման ընթացքում և՛ երկրորդ, և՛ առաջին լեզուների փոխանցման և փոխներթափանցման հետևանքների պարզաբանման հիմնախնդիրը: Լեզուների փոխազդեցության հիմնախնդրի արդի մոտեցումներից մեկի՝ բազմալեզու լեզվական շփման (multilingual language contact) համաձայն՝ խաչաձև-լեզվաբանական ազդեցությունն ի հայտ է գալիս թե՛ յուրացված և թե՛ յուրացվող լեզուների փոխհարաբերություններում (Հայրյան, Աղաջանյան 2009: 69):

Այլ կերպ ասած՝ ուսումնասիրվող նոր լեզվի գործընթացը ենթարկվում է մինչ այդ այս կամ այն չափով յուրացված լեզուների ազդեցությանը, որի արդյունքում ինչպես փոխանցման, այնպես էլ փոխներթափանցման դրանց փոխներգործությունը չի կարող համարժեք լինել, ուստի ներազդող լեզուների առանձնահատկությունների բացահայտումը պահանջում է մեթոդական որոշակի մոտեցում և իրականացում: Այդ առումով խնդիրն ուսանողի կողմից գործածվող լեզուների հաղորդակցական կարողությունների միջև առկա հարաբերական տարբերությունները բացահայտելն

է, որոնց համարժեքությունն արտահայտվում է «համադաս» (coordinative), իսկ անհամարժեքությունը՝ «ենթադաս» (subordinative) եզրույթներով:

Խաչաձև-լեզվաբանական ազդեցության շրջանակում երկու և ավելի լեզուների յուրացման վերաբերյալ կան երկու հիմնական մոտեցում: Դրանցից առաջինի համաձայն՝ երկուսից ավելի լեզուների յուրացումը նույնպես դիտարկվում է որպես երկլեզվության (bilingualism) դրսևորում:

Ըստ երկրորդ տեսակետի՝ երրորդ և ավելի լեզուների յուրացումը դիտարկվում է բազմալեզվության համատեքստում՝ իբրև լեզվահաղորդակցական ինքնատիպ գործընթաց (Հայրյան, Աղաջանյան 2009: 70): Իզուր չէ, որ երրորդ լեզու ուսումնասիրողի հաղորդակցական կոմպետենտության առնչությամբ Վ. Քուկը գործածում է «բազմակոմպետենտություն» (multi-competence) եզրույթը, քանի որ, ի տարբերություն երկլեզվակրի, դրանով ընդգծվում են բազմալեզվակրի խոսքային գործունեության առանձնահատկությունները (Cook 1995: 93-95):

«Ակնհայտ է, որ երեք և ավելի լեզուների շրջանառության պարագայում խաչաձև-լեզվաբանական ազդեցությունն ավելի զգալի կլինի, իսկ բազմալեզվակիրը երկլեզվակրի համեմատ կդրսևորի լեզուների յուրացման առանձնահատուկ մոտեցումներ» (Հայրյան, Աղաջանյան 2009: 70):

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ Հայաստանում ձևավորված բազմալեզվության ինքնատիպ պայմաններում ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնելու և նպատակները կյանքի կոչելու անհրաժեշտությունն առաջ է քաշում առավել նպատակահարմար հայեցակարգ որդեգրելու խնդիրը: Նման հայեցակարգի համապատասխանության լավագույն ցուցանիշ կարող է հանդիսանալ դրա հիման վրա առավել նպատակասլաց ռազմավարություն մշակելու հնարավորությունը:

Մասնավորապես մասնագիտական կողմնորոշման անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման արդյունավետ կազմակերպումը ենթադրում է այնպիսի ռազմավարության մշակում, որը լավագույնս կնպաստի խաչաձև-լեզվաբանական փոխազդեցություններն ի նպաստ այդ գործընթացին ծառայեցնելը:

Մեր կարծիքով նշված ռազմավարության կարևորագույն ուղենիշներ պետք է համարվեն՝

- սովորողների լեզվագիտակցության և լեզվամտածողության կառուցվածքի ճկունությունը, բազմալեզվության զարգացմանը ներդաշնակելու եղանակների խթանումը,

- մասնագիտական կողմնորոշման օտարալեզու խոսքային գործունեության տեսակների ուսուցումը՝ փոխադարձ կապի մեջ կազմակերպելով, մի կողմից, փոխհամաձայնեցված, մյուս կողմից, տարբերակված մոտեցում ցուցաբերելով դրանցից յուրաքանչյուրի զարգացմանը,

- յուրացված լեզուներից ձեռք բերված լեզվական գիտելիքները և լեզվահաղորդակցական փորձը երրորդ և ավելի լեզուների յուրացման գործընթացում լայնորեն կիրառելու հնարավորությունների ստեղծումը,

- հաղորդակցական դաշտ ներմուծվող նոր և նախորդ լեզուների դրական և բացասական փոխազդեցությունը հարուցող գործոնների համապատասխանաբար համակարգված խթանումը և խոչընդոտումը,

- յուրացված և յուրացվող լեզուներով արտացոլվող մշակութային ընդհանրությունների ինտեգրումը և ուշագրավ առանձնահատկությունների շեշտադրումը,

- սովորողների ուսումնաճանաչողական գործողությունների բազմալեզվության ձևաչափով ընդհանրացմանն ուղղված գործառույթների ապահովումը,

- սովորողների ինքնակրթության ունակությունների և ուսումնական ինքնավարության կարողությունների զարգացման խթանումը:

«Ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման վերը նշված ինքնատիպ դժվարությունները համակարգված հաղթահարելու հիմքում պետք է ընդունվի հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը: Որպես օտար լեզուների ուսուցումն արդյունավետ կազմակերպելու ծանրակշիռ գործոն՝ սույն մոտեցումը ենթադրում է բարելավել, առավել արդյունավետ դարձնել այդ գործընթացը նաև ինքնակրթության ճանապարհով ուսանողներին սովորեցնելով տվյալ լեզվին ինքնուրույն տիրապետելու սկզբունքներն ու հմտությունները (Аствацатрян 1990: 23-

24): ESP դասընթացի նպաստավոր պայմաններում դա այն իրական լծակն է, երբ նպատակաուղղված կառավարման միջոցով կարելի է օպտիմալացնել և առավել արդյունավետ դարձնել օտարալեզու ունկնդրության յուրացման գործընթացը:

Որպես խոսքային գործունեության տեսակ՝ ունկնդրությունը հանդիսանում է ցանկացած լեզվի ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մասը: Սակայն օտար լեզուների ուսուցման բնագավառում ունկնդրությանն առաջատար դեր և նշանակություն է տրվում, մասնավորապես՝ բնական, ուղիղ, բանավոր, լսալեզվական (audiolingual), լսատեսողական (audiovisual) և ակադեմիկոս Լոզանովի կողմից մշակված, այսպես կոչված՝ սուզգեստոպեդիական մեթոդում:

Ունկնդրությունն ընկալողական գործընթաց է, որի իրականացումը գերազանցապես պայմանավորված է լեզվաբանական, հոգեբանական, լեզվահոգեբանական և ֆիզիոլոգիական մի շարք գործոններով, որոնք «... փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին և մեկուսացված չեն գործում» (Աստվածատրյան 1985: 201):

Հայտնի է, որ ունկնդրությունն ուղեկցվում է տրամաբանական այնպիսի երևույթներով, ինչպիսիք են վերլուծությունը, համադրությունը, ինդուկցիան, դեդուկցիան, համեմատությունը, վերացարկումը, կոնկրետացումը, մոտավորեցումը և այլն: Բազմաթիվ հետազոտողներ (Պետրոսյան 1987, Բաղդասարյան 2006, Խաչատրյան 2008, Bachman 1991, Corson 1997, Buck 1992, Field 2002 և այլք) իրենց հետազոտություններում հանգել են այն եզրակացության, որ ունկնդրությունը մտավոր գործողությունների չափազանց բարդ ընթացակարգ է, որի մեխանիզմները դեռևս լրիվ բացահայտված չեն:

Մասնագիտական գրականության մեջ շրջանառվող «ունկնդրություն» հասկացությունը և եզրույթը միանշանակորեն չեն ընկալվում և հաճախ երկակի մեկնաբանությունների տեղիք են տալիս: Ոմանք այդ հասկացությունը նկարագրում են որպես խոսքը միայն լսելու, մյուսները՝ լսելով նաև այն հասկանալու գործառույթ: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ արևմտյան երկրների մեթոդական գրականության մեջ «ունկնդրել» հասկացությունը հիմնականում արտահայտվում է «լսել» (listening) կամ (listening comprehension) եզրույթներով, որոնք Ջ. Իզանը բնութագրում է որպես

լսողի՝ հաղորդումը ընկալելու և հասկանալու ընդունակություն՝ անկախ այն բանից, թե դա փոխանցվում է խոսքով, թե այլ կերպ՝ հստակ, թե ոչ հստակ (Egan 1990 71):

Անհրաժեշտ է նշել, որ ESP շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում ունկնդրման ուսուցման վրա, քանի որ ունկնդրման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է մոդելավորել, ինչպես Թոմ Հաչինսոնն է նշում, «հեռանկարային լեզվահաղորդակցական այն իրադրությունները, որոնք բնորոշ են անգլալեզու մարդկանց» (T.Hutchinson, 1993:55):

Թոմ Հաչինսոնն առանձնացնում է հեռանկարային իրադրությունների հիմնական բաղադրիչները՝ խոսության (դիսկուրսիվ), գործառական, կառուցվածքային, բառական: Ըստ այդմ, ամեն մի հնչյունական միավոր ուսանողները յուրացնում են գիտակցելով իրենց մտագործունեության քայլերը:

Մեթոդական գրականությունից հայտնի է, որ բոլոր լեզուներով դրսևորվող ունկնդրությանը հատկանշական են ընթացակարգային և գործանական որոշակի ընդհանրություններ, որոնք հայտնի չափով նպաստում են նոր ուսումնասիրվող լեզվով ունկնդրության յուրացմանը: Այսպես, իբրև ունկնդրության գործունեության առարկա հանդես է գալիս ուրիշի խոսքով արտահայտված որևէ միտք, իբրև այդ գործընթացի արդյունք, հասկանալը կամ չհասկանալը: Խոսքը ըմբռնելու ողջ գործընթացը բնութագրվում է ունկնդրի ուշադրությամբ և ներքին ակտիվությամբ: Ունկնդրության հիմնական բաղադրիչներն են լսելու ունակությունը, կարճատև հիշողությունը, հավանական կռահումը և ասույթի իմաստավորումը:

Ինչպես նշում է Ռ.Ռ. Խաչատրյանը. «Հնչյունական համակարգի ուսուցման և յուրացման գործընթացը բարդ է և պահանջում է «հնչյունաբանություն», «հնչերանգ», «առոգանություն», «շեշտադրություն», «վանկաչափական յուրահատկություններ», «խոսքի տեմպ», «տատանումներ և խոսքի կառուցվածք» հասկացությունների համապատասխան ուսումնասիրություն.

1. հնչյունական փոփոխություն,
2. կապը խոսքի տեմպի և ընկալման միջև,
3. մանուկ հասակում ձեռք բերված լսողական հմտություններ,
4. ունկնդրման համեմատական առանձնահատկություններ՝ երկու

մակարդակներում (մայրենի լեզվում և օտար լեզվում)» (Էսաչատրյան 2010: 35):

Բոլոր լեզուներով ընթացող ունկնդրության հիշյալ ընդհանրություններից զատ, այդ գործընթացը ներառում է մի շարք լրացուցիչ, հիմնականում՝ փորձի հիման վրա ձեռք բերվող ինքնատիպ ունակություններ: Ջ. Վիլիսի բնորոշմամբ՝ դրանք, այսպես կոչված, խթանող ունակություններ են (enabling skills), որոնք հնարավորություն են ընձեռում՝

- կանխորոշել, թե մարդիկ ինչի մասին են պատրաստվում խոսել,
- փորձել անշփոթ կռահել անձանոթ բառերի և արտահայտությունների իմաստը,
- լսվածի իմաստը կռահելու համար հիմնվել սեփական գիտելիքների և փորձի վրա,

- ապավինել ստույգ տեղեկություններին, անտեսել ոչ հավաստի տեղեկատվությունը,

- մտապահել միայն արժանահավատ տեղեկատվությունը,
- խոսքում ճանաչել առօրեական գործածության արտահայտությունները,
- խոսքում ճանաչել բառերը շաղկապող միավորները, ինչպես, օրինակ՝ շաղկապը, բայ-հանգույցը, դերանունը և այլն,

- ընկալել խոսքի ձայնային ելևէջները՝ բարձրացող և իջնող հնչերանգ /ինտոնացիան/, մեղեդայնությունը, ռիթմը, շեշտադրումները և այլն, որոնք կարող են հուշել ասույթի իմաստը,

- բացահայտել խոսքի ամփոփիչ բովանդակությունը, խոսողի վերաբերմունքը և մտադրությունը (Willis 1977: 189):

Պետք է նկատել, որ մայրենի և օտար լեզուներով ունկնդրելու ունակությունների և կարողությունների կայացման իրական պայմաններն ու հնարավորություններն այնքան անհավասար են, որ չեն կարող իրենց էական ազդեցությունը չունենալ դրանց ձևավորման, զարգացման և դրսևորման վրա: Ասվածը վերաբերում է օտար լեզվով խոսքային գործունեության բոլոր տեսակներին, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի

ուսուցման և յուրացման իր առանձնահատուկ դժվարությունները: Մասնավորապես իբրև օտար լեզվով ունկնդրության ուսուցման անբավարար արդյունավետության հիմնական պատճառներ մեթոդիստները հաճախ նշում են առաջինը՝ ուսումնամեթոդական անհրաժեշտ համալիրների բացակայությունը, երկրորդը՝ այն, որ մեթոդիկայի տեսության մեջ և պրակտիկայում ունկնդրությունը երկար ժամանակ չի դիտվել իբրև խոսողությանը համարժեք՝ խոսքային հաղորդակցման լիարժեք տեսակ, այլ որպես խոսողությանը սուկ համալրող, ուստի՝ ոչ նույնքան էական ունակություն:

Ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվով ունկնդրության ուսուցումը կազմակերպելու տեսամեթոդական հիմք են ծառայում օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և առնչակից գիտությունների՝ մանկավարժության, լեզվաբանության և հոգեբանության առանցքային դրույթները:

Հոգելեզվաբանական տեսություններում ունկնդրությունը դիտարկվում է կողավորման և ապակողավորման տեսանկյունից (Treiman, R., Clifton, C., Jr, Meyer, A. S., & Wurm, L. H. 2003: 527-548.): Ընդ որում, լեզվաբանության, հոգեբանության, ինչպես նաև ինֆորմատիկայի տեսության մեջ արժարժվում է այն տեսակետը, որ խոսքային ազդանշանի ապակողավորումը ներառում է տեղեկացման տարբեր մակարդակներ՝

1. ճանաչման մակարդակ, երբ լեզվական ազդանշանները բաղդատվում են ըստ դրանց ֆիզիկական հատկանիշների,
2. հստակեցման մակարդակ, երբ ընկալվում են ձայնակապակցությունները,
3. իմաստային ընկալման մակարդակ, որի առկայությունը վկայում է այդ գործընթացի կայացման մասին (Dunked, P. A. 1991, Feyten, C. M. 1991, Hongqin 2003, Wang, Wudong 2004, Yang, Juan & Yi, Demo 2005, Yu, Shanzhi 2003):

Բազմաթիվ մեթոդիստների և հոգեբանների կարծիքով ունկնդրությունը մտածողության ակտիվ գործընթաց է, որն ուղղված է ընկալելու, ճանաչելու և հասկանալու խոսքային անընդհատ նոր հաղորդումներ, ինչը ենթադրում է այդ փոխկապակցված գործառույթներն իրականացնելու համարժեք ունակությունների և կարողությունների առկայություն:

Հայտնի է, որ խոսքային գործունեության հիմքում ընկած են համապատասխան ունակություններ և կարողություններ: Անդրադառնալով ունկնդրության գործունեությունն իրականացնող ունակություններին՝ Ե. Պասովը դրանք դասակարգում է երեք խմբի՝

1. ունկնդրության քերականական ունակություններ, որոնք ձևաբանական և շարահյուսական մակարդակով ենթագիտակցորեն ճանաչում են քերականական կառույցներ և դրանք հարաբերակցում որոշակի իմաստի,

2. ունկնդրության բառագիտական ունակություններ, որոնք անմիջականորեն ըմբռնում են բառերի և բառակապակցությունների նշանակությունը,

3. ունկնդրության հնչյունաբանական ունակություններ, որոնք ենթագիտակցորեն ընկալում և զանազանում են խոսքի հնչյունները, հնչույթները, հնչունակապակցությունները և հնչերանգային ելևէջները (Пассов 1975: 227):

Ունկնդրության ունակությունների միագումար արդյունավետությունը պայմանավորված է ինչպես նշված խմբերից յուրաքանչյուրի, այնպես էլ՝ դրանց փոխկապակցված գործողություններով: Ընդ որում, հատկապես կարևորվում են մի կողմից՝ առաջին երկու խմբերի, մյուս կողմից՝ երրորդ խմբի ունակությունների միջև առկա փոխգործողությունները, քանի որ այդպիսով բացահայտվում են ունակությունների ձևավորվածության քանակական և որակական չափանիշները, կամ այլ կերպ ասած՝ ի հայտ է բերվում ունկնդրության զարգացման աստիճանը:

Մեթոդիկայից հայտնի է, որ ըստ ունկնդրի նպատակադրվածության՝ ունկնդրությունը կարող է լինել ընտրողական (*selective comprehension*), ընդհանուր իմաստին ուղղված (*listening for gist*), մանրամասները հասկանալուն ուղղված (*listening for details*) և ուղղված տեղեկատվության ստացմանը (*listening for information*): ESP-ի շրջանակներում կարևորվում է տեղեկատվության ստացման ունկնդրական տեսակը, քանի որ առաջնայինը հենց տեղեկատվությունն է, դրա ստացումը և իմաստավորումը:

Թ. Լինչը բացահայտում է ակադեմիական ունկնդրման առանձնահատկությունները (Lynch 2011: 79–88): Ս. Գոհն առաջարկում է կիրառել ունկնդրման վերճանաչողական ռազմավարություն (Goh 2008): Լ. Վադերգրիֆթը մշակել է երկրորդ լեզվի ունկնդրման փոխհատուցող ռազմավարությունները, շեշտադրելով ինքնուրույն աշխատանքի

մշակույթի ձևավորման հիմնախնդիրը (Vandergrift 1997: 387–409): Դ. Մենդելսոնը և Յ. Ֆիլդը բացահայտում են նեքևից վերև (bottom up) և վերևից ներքև (top down) ռազմավարությունների առանձնահատկությունները երկրորդ լեզվի ունկնդրման գործընթացում (Mendelsohn 1994, Field 2000: 29–34):

Հիմք ընդունելով օտար լեզվով ունկնդրության վերաբերյալ մի շարք հետազոտությունների վերլուծությունը կարելի է եզրակացնել, որ իբրև ունկնդրության գործունեության կարևորագույն բաղադրամասեր հանդես են գալիս՝

1. խոսքային լսողությունը,
2. խոսքային լսողության տեսողական հենարանը,
3. հիշողությունը,
4. խոսքի հավանական կռահումը,
5. ներքին խոսքը:

Խոսքային լսողությունը համարվում է օտար լեզվով ունկնդրության կարևորագույն բնութագրերից մեկը, քանի որ դրանով սկզբնավորվում է խոսքային գործունեությունը, և ունկնդրի տվյալ ունակությամբ է պայմանավորված այդ գործընթացի ինչպես հաջորդական գործողությունների, այնպես էլ ընդհանուր արդյունավետությունը: Անշուշտ, «խոսքային լսողություն» ասելով՝ պետք է հասկանալ ոչ թե սոսկ ուշադիր կամ սուր լսողությունը, այլ տվյալ օտար լեզվի հնչյունական համակարգը տարբերակված ընկալելուն վարժված՝ հնչույթային լսողությունը, որի գործառույթը, մեր կարծիքով, մոտավորապես նույնն է, ինչ երաժշտական լսողությունը այդ բնագավառում:

Օտար լեզուների դասավանդման փորձը վկայում է, որ սկսնակ լեզու ուսումնասիրողները հաճախ լարվածությունից այնքան են շփոթվում, որ ի վիճակի չեն լինում հասկանալ նույնիսկ իրենց ծանոթ բառերը: Անտարակույս, դա ունկնդրության փորձի պակասի, այսինքն՝ համապատասխան ունակության բացակայության արդյունք է: Ակնհայտ է, որ օտար լեզվով բանավոր խոսքը հնարավոր է հասկանալ սոսկ պատշաճ մակարդակով խոսքային լսողության առկայությամբ:

Խոսքային լսողությունն ապահովում է բանավոր խոսքի ընկալումը՝ այն մասնատելով իմաստային միավորների՝ բառերի և բառակապակցությունների: Տվյալ ունակության շնորհիվ ունկնդիրը ճանաչում է իմաստային միավորները բանավոր

խոսքում: Սակայն դա կատարվում է «...ոչ թե առանձին բառերի վերլուծության և հետագա համադրման միջոցով, այլ տարբերակիչ հատկանիշների ճանաչման շնորհիվ» (Աստվածատրյան 1985: 207):

Որպես օտար լեզվով խոսքի տարբերակիչ գործոններ առավելաչափ կարևորվում են, այսպես կոչված՝ հնչերանգային և հնչյունաբանական լսողությունը: «Եթե հնչերանգային լսողություն ասելով ընդունված է հասկանալ ասույթի հնչերանգային կառուցվածքի ընկալումը և այն տվյալ տեսակին հարաբերակցելու ունակությունը, ապա հնչյունաբանական լսողություն ասելով հասկացվում է խոսքի ձայները տարբերելու և դրանք համապատասխան հնչույթներին վերագրելու ունակությունը» (Гез, Ляховицкий 1982: 216):

Հ.Զ. Պետրոսյան **դիփարկում է հնչերանգը որպես** ձայնի տոնի փոփոխություն, որը տեղի է ունենում արտահայտության մեջ: Ըստ նրա՝ «Հնչերանգը հնչյունաբանական վերհատույթային (առոգանական) միավոր է, որի ոլորտի մեջ է առնվում ասույթը կամ նախադասությունը՝ ամբողջությամբ վերցրած, ինչպես և դրանց բաղադրիչներն՝ առանձին-առանձին: Հնչերանգը հորինվածքով բարդ է, կազմված արտասանական ավելի փոքր տարրերից» (Պետրոսյան 1987: 384):

Առանձնացնելով հնչերանգի հաղորդակցական, շարահյուսական, տրամաբանական և եղանակավորող գործառույթները, Մ. Աստվածատրյանը գրում է. «Խոսքը լսելիս ունկնդրողն առաջին հերթին ճանաչում է հնչերանգի հաղորդակցական ֆունկցիան, որի հիման վրա նա տարբերակում է պատմողական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները» (Աստվածատրյան 1985: 208):

Հնչերանգը էական դերակատարում ունի ոչ միայն ունկնդրության կայացման, այլև խոսքային գործունեության այդ տեսակը ուսուցանելու գործում: Ընդ որում, ուսուցման առանձին փուլերում հնչերանգի միջոցով լուծվում են մեթոդական տարբեր խնդիրներ: Ուսուցման սկզբնական փուլում իրականացվում է օտարալեզու խոսքին սովորողների լսողական ապարատը վարժեցնելու գործընթացը: Այդ իսկ պատճառով ուսուցման այդ փուլի կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է «...ընկալողական ռիթմային-հնչերանգային ունակությունների ձևավորումը, որը նկատի ունի հնչերանգի և ռիթմի

առումով խոսքի ճիշտ ընկալումը» (Egan 1990, Гаврилова 2006, Михина 2009, Черкашина 2003, Яковлева 2003):

Այդ գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար խորհուրդ է տրվում կիրառել ինչպես մենախոսական, այնպես էլ երկխոսական ասույթներ:

Գիտականորեն հաստատված է, որ ունկնդրության ընդհանուր արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն լսողական, այլև տեսողական զգայարանի մասնակցությամբ: Հոգեբանները հավաստում են, որ խոսքը ունկնդրելիս ծայնային պատկերները փոխակերպվում են արտասանական հատվածների խոսքաշարժիչ վերլուծիչի միջոցով՝ լսողական և խոսքաշարժիչ վերլուծիչների միջև հաստատված կապերի շնորհիվ (Խաչատրյան 2008: 109-115):

Ինչ վերաբերում է տեսողական զգայարանին, ապա ճշգրիտ տվյալներ կան, որ արտաքին աշխարհի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու օպտիկական ազդանշանները գերազանցում են մնացած բոլորին (Evans 2001): Հետևապես լսողական և տեսողական հենարանների զուգակցումը հնարավորություն է ընձեռում բարձրացնել խոսքային գործունեության բոլոր տեսակների ուսուցման արդյունավետությունը:

Ուսումնառության ընթացքում որպես տեսողական հենարաններ են ծառայում հնչող տեքստի իմաստային բովանդակությունն արտացոլող բառերը և բառակապակցությունները, այդ թվում նաև յուրացման ենթակա նոր բառային միավորները, որոնք առավելապես ներկայացվում են դասագրքում, գրատախտակին, նկարին և շարժանկարին առընթեր, համակարգչի էկրանին և այլն: Քննարկվող խնդրի հայտնի տեսաբան Օ. Տարնապոլսկին նույնպես հավաստում է, որ տեսողական հենարանի առկայությունը զգալիորեն արագացնում է ունկնդրության ունակությունների և կարողությունների զարգացումը և էապես նպաստում ուսանողների ընկալողական (պասիվ) բառապաշարի հարստացմանը (Тарнапольский 1989: 49): Ունկնդրության բնականոն գործընթացում, իբրև տեսողական հենարաններ, հանդես են գալիս նաև խոսքի օրգանները, ժեստերը, դիմախաղը և այլն, որոնք ամրապնդում են լսողական զգացումները, հեշտացնում ներքին խոսքը և դրա իմաստի

պարզաբանումը (Тимина 2003, Бржозовская 2003, Куимова 2005, Иванова 1997):

Այսպիսով, օտար լեզվով ունկնդրության ունակությունների և կարողությունների զարգացման գործընթացում լսողական գործառույթի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է շահեկանորեն օգտագործել տեսողական զգայարանի ընձեռած բոլոր հնարավորությունները՝ ավելի լայնորեն կիրառելով տեսողական հենարանները: Տվյալ համատեքստում, ունկնդրության ուսուցումը նպատակասլաց կազմակերպելու տեսանկյունից պետք է նկատի ունենալ, որ բացի խոսքային տեսողական հենարաններից, էական նշանակություն ունեն նաև ոչ խոսքային, այսպես կոչված՝ արտալեզվաբանական միջոցները: Դրանք բազմաթիվ դրսևորումներ ունեն և մասնագետների կողմից դասակարգվում են ըստ տարբեր չափանիշների:

Ունկնդրման ընթացքում ոչ խոսքային միջոցների յուրացումը պայմանավորված է տարբեր գործոններով: Անգլերենի պատմական ենթալեզուն ավելի է դժվարացնում գործը, քանի որ ուսանողը պետք է կարողանա ճիշտ ընկալել լեզվակիր մարդկանց ծիծաղը, լացը շշուկը, ուշադրություն դարձնել նրանց կողմից օգտագործվող հարալեզվական միջոցների վրա /դիմախաղ, դեմքի արտահայտություն, ձեռքի մատների շարժում: Նույնը վերաբերում է պրոկսեմիկական միջոցներին՝ մարմնի կեցվածք, մարմնական շարժումներ, շփման տարածաժամանակային կազմակերպում և այլն (Андреева 1998: 109):

Առանձնացվում է երեք հիմնական տեսակ.

1. Լեզվական /խոսելով, երգելով, գրելով/, որն ունի իր տարատեսակները՝ երկխոսություն, մենախոսություն, ոճերը:

2. Ոչ լեզվական /ֆիզիկական միջոցներով՝ ժեստեր, կեցվածք, նայվածք, հպում կամ շոշափում, առարկայական հաղորդակցում՝ հագուստ, սանրվածք/: Առանձնացվում են հաղորդակցման հետևյալ ձևերը՝ կինեսիկա՝ շարժաբանություն /ժեստերի, կեցվածքների, վարքագծերի ամբողջություն, տակեսիկա՝ հպումների ամբողջություն/, սենսորիկա՝ զգայական ընկալումների ամբողջություն, պրոկսեմիկա՝ տարածության

օգտագործումը՝ խոսքային գործունեությունում, քրոնեմիկա՝ ժամանակի օգտագործումը:

3. Հարալեզվական /տաղաչափական միջոցներով՝ հնչերանգ, ձայնի ուժգնությունն, շեշտ, խոսելաոճ/: Այդ միջոցները բաժանվում են 2 խմբի՝ ա/ տաղաչափական, որի մեջ մտնում են խոսքի տեմպը, ձայնի բարձրությունն ու ուժգնությունը, հնչերանգը, տեմբրը, բ/ արտալեզվական - դադարներ, հոգոցներ, հազ, ծիծաղ կամ լաց (<http://etm.gspi.am/wp/wp-content/uploads/2016>):

Օտար լեզվով բանավոր խոսքը հասկանալու համար պատշաճ մակարդակի լսողությունը, եթե նույնիսկ այն զուգակցվում է տեսողական հենարանով, դեռևս բավարար պայման չէ: Ունկնդրությունը ներառող հաջորդ գործողության իրականացումը պայմանավորված է խոսքում ճանաչված լեզվական միավորները մտապահելու կարողության հետ:

Հոգեբանության մեջ առանձնացնում են երկու հիմնական տեսակի հիշողություն՝ երկարատև և կարճատև (McLeod, 2010, Call 1985): Հաղորդակցական մոտեցման շրջանակներում մեծ տեղ է հատկացվում հատկապես աշխատանքանին հիշողությանը (Quarterly 2000: 417–423):

Հայտնի է, որ երկարատև հիշողության մեջ ամբարված է մարդու գիտելիքների ողջ պաշարը, այդ թվում՝ տեղեկատվություն ստանալու և փոխանցելու համար անհրաժեշտ լեզվական գիտելիքները:

Դրանք ներառում են բառերի, բառակապակցությունների և շարահյուսական կառուցվածքների լսաարտաբերական պատկերները, դրանց կապակցման կանոնները և ուրվագծերը, որոնց շնորհիվ ունկնդրողը ճանաչում է ասույթի կառուցվածքն ու նախադասության հաղորդակցական տիպը (պատմողական, հրամայական, հարցական, բացականչական) (Гез, Ляховицкий 1982: 219): Երկարատև հիշողությունը մի ինքնատիպ «պահեստ» է, որը խոսքային յուրաքանչյուր գործողությանը տրամադրում է ոչ միայն հաղորդակցման փորձը, այլև տեղեկատվության փոխանակման համար անհրաժեշտ գիտելիքներ, որոնց մակարդակից կախված է ուրիշի խոսքը ընկալելու ամբողջականությունը և ճշգրտությունը (McLeod 2010, Call 1985, Baddeley 2000):

Կարճատև հիշողությունը կոչված է ընկալելու և մտապահելու ստացված տեղեկատվության տվյալ չափաբաժինը, քանի դեռ այն գտնվում է մշակման և երկարատև հիշողությանը փոխանցելու գործընթացում:

Կարճատև հիշողության վերաբերյալ հատկանշական է հատկապես ճանաչողական հոգեբանության ներկայացուցիչ Ջ. Միլլերի մոտեցումը: Իր «Կախարդական 7 թիվը + - 2» հոդվածում խոսվում է այն մասին, որ կարճատև հիշողության կարողությունները սահմանափակ են, և որ վերջինս ունակ է մտապահելու միաժամանակ ընդամենը 7 իր, առարկա, երևույթ կամ տեղեկատվություն (Miller 1956: 81–97):

Ավելի մեծածավալ տեղեկատվություն հիշելու համար, վերջինս պետք է խմբավորվի ավելի մեծ խմբերում: Օրինակ բառերը կարող են հիշվել ամբողջական նախադասությունների կամ տեքստերի տեսքով: Այդպես հնարավոր կլինի մտապահել ավելի քան 7 բառ: Կախարդական 7 թիվը տեղեկատվության այն խմբերի քանակն է, որը մարդը կարող է միաժամանակ մտապահել կարճատև հիշողության մեջ:

Միլլերի հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ եթե տեղեկատվությունը խմբավորվի, ապա կարճատև հիշողության ունակությունները կարող են հնարավորինս մեծանալ, և միաժամանակ առավել մեծաքանակ տեղեկատվություն մտապահելու հնարավորություններ կստեղծվեն:

Ակնհայտ է, որ ունկնդրությունը չի կարող իրագործվել առանց երկարատև և կարճատև հիշողության սերտ փոխներգործության: Այդուհանդերձ, ունկնդրելիս հիշողության ընդհանուր գործառույթն այդքանով չի սահմանափակվում:

Ունկնդրության համալիր գործունեությունն իրականացվում է ևս մի տեսակի հիշողության մասնակցությամբ, որը հոգեբանության մեջ հայտնի է, իբրև օպերատիվ հիշողություն: Վերջինս «...կարճատև հիշողություն է, որը կարող է տեղեկատվություն մտապահել նշանակալիորեն ավելի երկար ժամանակ, քան 10 վայրկյանը: Օպերատիվ հիշողությունը գործում է առավել արդյունավետ, երբ ունկնդիրը հակված է որևէ բան մտապահել» (Murphy 1991: 83-89):

Օպերատիվ հիշողության բուն գործառույթն է մտապահել բառերը և արտահայտությունները, տվյալ պահին ունկնդրվող նյութը շաղկապել նախորդի հետ և

հաջորդաբար ընդունվող խոսքի շարքը փոխակերպել կապակցված խոսքի (Աստվածատրյան 1985: 210):

Ինչպես կարճատև, այնպես էլ օպերատիվ հիշողությունը կատարում են սպասարկու դեր: Դրանք կոչված են տեղեկատվության ամենաէական հատվածը փոխանցելու երկարատև հիշողության ոլորտը, և այդ գործառույթի ընդհանուր հաջողությունը կախված է ունկնդրվող լեզվանյութի որակական և քանակական ընտրությունից, ներմուծման և ամրապնդման եղանակներից:

Մայրենի լեզվով ունկնդրելիս ասույթի ձևն ու բովանդակությունը ներդաշնակ են և միասնություն կազմելով՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում որպեսզի ունկնդրի ողջ ուշադրությունը կենտրոնանա բովանդակությունը կռահելու վրա: Օտար լեզվով ունկնդրելու պարագայում խոսքի ձևի և բովանդակության խզումը այնքան զգալի է, որ հնարավոր չէ կենտրոնանալ իմաստի բացահայտման վրա:

Օտար լեզվի ուսումնասիրության ընթացքում լեզվական ձևերը երկար ժամանակ նեցուկ չեն հանդիսանում, այսինքն՝ դեր չեն խաղում խոսքի բովանդակությունը պարզաբանելու գործընթացում, չնայած որ ունկնդրողը հենց դրա վրա է կենտրոնացնում իր ուշադրությունը:

Խոսքի հավանական կռահումը դրսևորվում է լեզվի բոլոր մակարդակներում՝ սկսած վանկից, ներառյալ՝ տեքստը: Հայտնի է, որ ինչքան ընդգրկուն է համատեքստը, և բարդ հաղորդման կառուցվածքը, այնքան ավելի մեծ է ընկալման կախվածությունը հավանական կռահումից (Бабанская, Леонтьева, Андреасян 2003: 143):

Հետևապես, խոսքում առկա լեզվական կանոնների և օրինաչափությունների իմացության հիման վրա ձեռք բերված ունկնդրելու փորձը և լեզվի զգացողությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում, որ նույնիսկ հատվածաբար տեքստը լսելով՝ ունկնդրողը որոշակի հավանականությամբ կռահի դրանց շարունակության և ամբողջ տեքստի բովանդակությունը:

Բառերի իմաստն ունկնդրման ընթացքում հասկանալու համար պետք է հաշվի առնել անձանոթ բառերի տեսակները՝ եզրույթներ, դիպվածային բառեր, ներգոր բառեր և այլն: Ակնհայտ է, որ գիտական, մասնավորապես պատմագիտական եզրույթների ունկնդրումը հնարավորություն է ընձեռում ճիշտ արտասանել բազում

պատմական իրակություններ, պատմաշխարհագրական անուններ, դիցաբանական, առասպելական հերոսների անուններ և այլն: Այդ առումով արդյունավետ է ոչ միայն գիտահանրամատչելի պատմական, այլև գեղարվեստական ֆիլմերի, անգամ մուլտֆիլմերի, վերլուծական-նկարագրական դասախոսությունների դիտումը և ունկդրումը:

Անհրաժեշտ է ուսանողների նախապես ներկայացնել որոշակի ֆիլմերի, դասախոսությունների ցանկ: Դժվարություն է ներկայացնում դիտելու համար նախատեսված ֆիլմերի ընտրությունը, քանի որ դրանք ուսուցողական նպատակներով ուղղակիորեն կիրառել հնարավոր չէ: Անհրաժեշտ է ներկայացնել ֆիլմերի նվազագույն քանակ: Մենք առաջարկում են ընտրել ֆիլմերն ըստ դարաշրջանների, ըստ հայտնի պատմական դեմքերի և դեպքերի, ըստ հանրամշակութային իրողությունների ներկայացման կարևորության: (Տե՛ս հավելված Ֆիլմ):

Ֆիլմերի դիտման ընթացքում պետք չէ խնդիր դնել հասկանալ բոլոր բառերն ու արտահայտությունները: Անհրաժեշտության դեպքում կարելի է դրանք դիտել մակագրով: կարելի է նաև նախօրոք ուսումնասիրել ֆիլմի տեքստը կամ script –ը: Դրա համար ուսանողները որոնում են իրականացնում Site Classic Movie Scripts կայքէջում: Խնդիր չի դրվում ուսուցման նախնական փուլում ունկնդրվող տեքստի բովանդակությունը հասկանալ: Անհրաժեշտ է այն կոահել:

Ուսուցման միջին փուլում /ուսուցման երրորդ կիսմյակ/ կարելի հասկանալու խնդիր դնել: Սակայն կարևորը պատմական ֆիլմերի դիտման միջոցով պատմական հայտնի դեպքերի, դեմքերի, անունների, տեղանունների, իրակությունների արտասանությունը յուրացնելն է:

Լեզվահաղորդակցման գործընթացում ներքին խոսքի դերին, կարևորությանը և գործառույթներին նվիրված հետազոտություններում հոգեբանները հանգել են մի շարք ուշագրավ սկզբունքային հետևությունների (Войтик 2015 18-19, Верани 2010: 7-17):

Ունկնդրության գործընթացում ներքին խոսքի գործառույթները ճիշտ հասկանալու և հաշվի առնելու տեսանկյունից պետք է հիշել, որ պատմական կողմնորոշման անգլերենի դասընթացում անհրաժեշտ է ծանոթացնել լեզվակիրների լեզվամտածողության հետ, քանի որ մտածողությունը, հիշողությունը, ընկալումը

սերտորեն կապված են ներքին խոսքի հետ: Այս համատեքստում անհրաժեշտ է տարբերակել հիշողությունը պատմական հիշողությունից: Շատ դեպքերում դժվար է հասկանալ որևէ պատմական անցքի, դեպքի մասին տեքստը քանի որ հայերի պատմական հիշողությունը տարբերվում է անգլիացիների պատմական հիշողությունից: Մեթոդական մակարդակում մենք գործ ունենք հենքային գիտելիքների հետ, որոնց շարունակական զարգացումը հնարավորություն է տալիս ունկրման ընթացքում կիրառել վերևից ներքև ռազմավարություն, երբ միայն տեքստի վերնագիրը նպաստում է ունկնդրվող տեքստի բովանդակության հավանական կռահմանը:

Եվ եթե ընդունենք, որ ներքին խոսքը հանդիսանում է արտաքին խոսքի նախնական փուլը, դրա ավելի ամփոփ ձևակերպված նախատիպը, ապա դրանց հարաբերակցությունը հնարավոր է պահպանել միայն ուսուցման ավարտական փուլում, որը ՀՊՄՀ հումանիտար կողմնորշման ֆակուլտետներում հասել է յոթ կիսմյակի:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ թե՛ մտածողությունը, թե՛ արտաքին խոսքը ձևակերպվում են ներքին խոսքի հիման վրա, որը հանդիսանում է խոսքի ըմբռնման ողջ գործընթացի միջանկյալ և պարտադիր օղակը, ապա կարող ենք ասել, որ այն ճիշտ կարող է լինել միայն այն դեպքում, երբ ուսանողը յուրացնում է օտար լեզուն B1, B2 մակարդակներում: Ընդ որում, ESP շրջանակներում այդ մակարդակները շարունակաբար ճշգրտվում են:

Մի կողմից, ունկնդրմանը բավարար ժամանակ չհատկացնելով, մենք չենք կարող զարգացնել ներքին խոսքը: Մյուս կողմից արտաքին խոսքի նման ներքին խոսքը նույնպես ձևակերպվում է լեզվանյութի հիման վրա, չնայած որոշակի իրադրություններում այն կարող է ուղղորդվել նաև պատկերների, երևակայության կամ զգացմունքների ազդեցության ներքո: Ֆիլմերի պասիվ կամ ակտիվ դիտումը արդյունավետ է այդ տեսանկյունից ուսուցման բոլոր փուլերում:

Ելնելով նշված դրույթներից՝ կարելի է եզրակացնել, որ տվյալ լեզվով ընթացող ինչպես ունկնդրելու, այնպես էլ խոսելու արդյունավետությունը որոշակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք մտածողությունը և ներքին խոսքը ձևավորվում են նույն այդ լեզվով: Ակնհայտ է, որ ապագա պատմաբաններն ունեն

բավականին խորը մասնագիտական գիտելիքներ: Դրա հետ մեկտեղ, նրանք լուրջ անելիքներ ունեն անգլերենի տիրապետման խոսակցական մակարդակում: Այդ պարագայում արդիական են մնում հետևյալ հարցերը.

1. Հիմնվում է, արդյո՞ք, մտածողությունը, ուստի և ներքին խոսքը թե՛ մայրենի և թե՛ օտար լեզվի արտահայտչամիջոցների վրա: Ակնհայտ է, որ անգամ ուսուցման ավարտական փուլում ապագա պատմաբանները չեն կարող հավասարապես տիրապետել երկրորդ և առաջին լեզվի խոսքային, և ոչ խոսքային արտահայտչամիջոցներին:

2. Եթե նշված երկու լեզուներն էլ ներքին խոսքի և մտածողության համար նեցուկ են հանդիսանում, ապա ինչպիսի՞ն է դրանց հարաբերակցությունը ուսուցման տարբեր փուլերում:

Պետք է նկատել, որ ո՛չ օտար լեզուների դասավանդման մեթոդիկան, ո՛չ էլ խոսքի հոգեբանությունն ու լեզվահոգեբանությունը նշված հարցերի սպառիչ պատասխանները դեռևս չունեն: Այդուհանդերձ, կասկած չի հարուցում, որ օտար լեզվի ուսուցման սկզբնական փուլում ներքին խոսքը ձևակերպվում է առավելապես սովորողի մայրենի (առաջին) լեզվով:

1.2. Օտարալեզու ունկնդրության ուսուցման օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները

Մասնագիտական կողմնորոշման օտարալեզու բանավոր խոսքը հասկանալու համար անհրաժեշտ ունակությունների ձևավորման և դրանց իրական կարողությունների փոխակերպման ողջ գործընթացում լեզու յուրացնողը պետք է անխուսափելիորեն հաղթահարի բազմաթիվ դժվարություններ: Դրանք ներառում են այն երևույթները, որոնք հարուցում են ոչ միայն լեզվաբանական՝ բառային, հնչյունաբանական և քերականական, այլև հոգեբանական բնույթի բազմաթիվ խոչընդոտներ: Դրանցից զատ՝ մասնավորապես ոչ լեզվական ֆակուլտետում ունկնդրական ունակությունների և կարողությունների զարգացումը պայմանավորված է յուրաքանչյուր դասընթացին հատուկ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի լրացուցիչ դժվարությունների հաղթահարման հետ: Բնականաբար, հիշյալ դժվարությունների պատշաճ դասակարգումը և համակարգված հաղթահարումը հանդիսանում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի հիմնախնդիրներից մեկը:

Պետք է նշել, որ այսօրվա դրությամբ մեթոդիկան իր տրամադրության տակ դեռևս չունի ունկնդրության ուսուցման դժվարությունների ամբողջական և հստակ դասակարգում, որը կարող է դրանց համակարգված հաղթահարման հայեցակարգի և ուսումնամեթոդական համալիրների մշակման հիմք հանդիսանալ (Մանուկյան 2009: 142):

Ելնելով արժարժվող խնդրի կարևորությունից՝ շատ անվանի մեթոդաբաններ առաջարկել են օտարալեզու խոսքի ունկնդրության ուսուցման և մասնավորապես ոչ լեզվական ֆակուլտետում այդ գործընթացին բնորոշ դժվարությունների դասակարգման իրենց տարբերակները: Գործառնական առումով նշված դասակարգման առավել ուշագրավ որոշ տարբերակներ ներկայացվում են ստորև:

Ե. Պասովի հետազոտությունների համաձայն՝ օտարալեզու խոսքի ունկնդրության ունակությունների և կարողությունների զարգացումն ուղեկցվում է չորս խումբ դժվարություններով, որոնք ներառում են խոսքի լեզվական ձևի ընկալումը, խոսքի

բովանդակության ընկալումը, խոսքի մենախոսական և երկխոսական տեսակների տարբերակված ընկալումը (Пассов 1975: 231):

Ի. Ալեքսեևան օտարալեզու խոսքի ունկնդրության ուսուցման և յուրացման դժվարությունները պայմանականորեն բաժանում է երեք խմբի.

1. ասույթի լեզվանյութով պայմանավորված դժվարություններ, որոնք ներառում են՝

ա) բառանյութի առանձնահատկությունները,

բ) քերականական երևույթները,

գ) շարահյուսական կառուցվածքները (Алексеева 1980: 11):

2. սովորողների անհատական առանձնահատկություններով պայմանավորված դժվարություններ, որոնցից նա մեծապես կարևորում է սովորողների հետաքրքրվածությունը, նրանց ունկնդրական փորձը, ասույթի վրա ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունը, լսողական հիշողության զարգացման մակարդակը և տեղեկատվություն ստանալու նրանց շահագրգռվածությունը (Алексеева 1980: 12),

3. խոսքի ընկալման պայմանների հետ կապված գործոններ, որոնք, ըստ Ի. Ալեքսեևայի, կարելի է ստորաբաժանել երկու խմբի՝

ա) ունկնդրության գործընթացին նպաստող գործոններ,

բ) ունկնդրության գործընթացին խոչընդոտող գործոններ (Алексеева 1980: 12-13):

Գ. Ռոզովայի կարծիքով օտարալեզու ունկնդրության գործընթացում դրսևորվող դժվարությունները հիմնականում պայմանավորված են այնպիսի գործոններով, ինչպիսիք են խոսքային միջավայրի բացակայությունը, լսողական ընկալման միանգամությունը, կարճատևությունը և անվերադառնալիությունը, տեսողական հենարանների՝ տպագիր և ձեռագիր նյութերի, գծապատկերների, աղյուսակների, նկարների, դիմաշարժության և ժեստիկուլյացիայի բացակայությունը, սովորողների հոգեբանական առանձնահատկությունները՝ հիշողության, ուշադրության, մտածողության, ընկալման, կռահման ունակությունները, ինչպես նաև խոսքը իմաստավորելու առանձնահատկությունները մշտապես հաշվի չառնելը, ունկնդրվող խոսքի տեսակներին (մենախոսություն, երկխոսություն), մտքերի շարադրման եղանակին, տեղեկատվական հագեցվածությանը, հաղորդման արագությանը և

ծավալին, լեզվական դժվարություններին վերաբերող ոչ տարբերակված մոտեցումը (Рогова 1991: 108):

Ունկնդրության ուսուցմանն առնչվող բազմաթիվ դժվարությունների բուն պատճառը Գ. Ռոգովան բացատրում է այդ գործընթացը չվերահսկելու կամ էլ թույլ հսկողություն սահմանելու հանգամանքներով: Ընդ որում՝ նա նշում է, որ վերահսկողությունը կարող է արդյունավետ լինել, երբ այն կրում է համակարգված բնույթ և ընդգրկում բոլոր սովորողներին (նույն տեղում):

Հիշյալ մեթոդիստները նշում են մի քանի գործոններ, որոնք կարող են թե՛ խոչընդոտող և թե՛ խթանող դեր խաղալ ունկնդրության ուսուցման գործընթացում: Հայտնի է, որ օտարալեզու ունկնդրության կայացումը մեծապես կախված է խոսքի հավանական կռահման և մայրենի լեզվից ձեռք բերված ունկնդրական փորձը օտար լեզվով հաղորդակցական դաշտ փոխադրելու սովորողների ունակություններից: Այդ գործընթացում վճռորոշ դեր են խաղում նաև հաղորդման թեմայի մեջ արագորեն ներգրավվելու, մտավոր մի գործողությունից մյուսին սահուն անցնելու, հաղորդման ազդանշաններին (տրամաբանական շեշտ, հնչերանգ, դադարներ) անմիջապես արձագանքելու և այլ ունակություններ (Դեզ 1982: 220):


Մեր կարծիքով ոչ լեզվական ֆակուլտետում օտարալեզու ունկնդրության ուսուցման առավել էական դժվարությունների շարքին պետք է դասել.


- բնագիր տեքստի ընկալումը,
- օտարալեզու բանավոր խոսքը ընկալելու համար ուսանողի թերզարգացած լսողական ապարատը,
- ներունակ (ներզոր) բառապաշարի յուրացման հետ կապված դժվարությունները,
- օպերատիվ հիշողության անբավարար զարգացման մակարդակը,
- մենախոսական, երկխոսական և այդ երկուսի համակցված խոսքը (պոլիլոգ) ընկալելու փորձի պակասը,
- մասնագիտական ենթալեզվի, մասնավորապես եզրույթների, հապավումների, անձանունների արտասանության և այլ լեզուներից փոխառությունների իմաստավորման հետ կապված բարդությունները և այլն:

- Ի մի բերելով հիշյալ բոլոր դժվարությունները՝ կարելի է դրանք խմբավորել ըստ՝
- հաղորդման լեզվական ձևի,
 - հաղորդման իմաստային բովանդակության,
 - հաղորդումը ունկնդրելու և ընկալելու պայմանների,
 - տեղեկատվության աղբյուրի,
 - տվյալ ենթալեզվի ընկալման և յուրացման առանձնահատկությունների:

Այսպիսով, ներկայացված հինգ խումբ դժվարությունները հնարավորություն են ընձեռում ոչ միայն գաղափար կազմել դրանց գործառույթների մասին, այլև ճիշտ գնահատել, թե ինչ ազդեցություն և հետևանքներ կարող են դրանք ունենալ օտարալեզու խոսքի ունկնդրության ուսուցման և յուրացման գործընթացի վրա ոչ լեզվական ֆակուլտետում: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ նման բազմատարր և բազմաբնույթ ձևակերպմամբ այդ դժվարությունների հաղթահարումն անհնար է համակարգված կազմակերպել և վերահսկել ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի ուսուցմանը հատկացվող խիստ սահմանափակ դասաժամերի պայմաններում: Այդ պատճառով նպատակահարմար է քննարկվող հինգ խումբ դժվարությունները վերաձևակերպել և ներկայացնել ըստ երկու այլ չափանիշների՝

1. օբյեկտիվ դժվարություններ, որոնք վերաբերում են բուն ունկնդրության գործընթացին (տես՝ գծապատկեր 2),
2. սուբյեկտիվ դժվարություններ, որոնք վերաբերում են ունկնդրի անհատական առանձնահատկություններին (տես՝ գծապատկեր 3):





Պետք է նկատել, որ օտարալեզու խոսքի ունկնդրության ուսուցման դժվարությունների սահմանազատումը, ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների, ավելի ընկալելի և ընդհանրական է: Այդ դժվարությունների նմանօրինակ ստորաբաժանումը ոչ միայն համակողմանի լուսաբանում է մասնագիտական կողմնորոշման օտարալեզու խոսքային գործունեության այդ տեսակի ուսուցման կարևորագույն խնդիրները, այլև, ըստ էության, մատնանշում դրանց մեթոդական իրականացման հաջորդաքայլերը: Անշուշտ, առաջարկվող երկու խումբ դժվարությունների փոխկապակցված և համակարգված հաղթահարման կազմակերպումը հնարավոր է սուկ ուսումնամեթոդական արդյունավետ համալիրների առկայության պարագայում, որը, ինչպես վերը նշվեց, մեթոդիկական դեռևս չի տրամադրում:

Ունկնդրության բուն գործառույթը բանավոր խոսքում ամփոփված տեղեկատվության ձեռքբերումն ու իմաստավորումն է, որն իրականանում է մտավոր բարդ և լարված գործունեությամբ: Այն ուղեկցվում է հոգեբանական մի շարք գործոնների ազդեցությամբ: Դրանցից կարելի է առանձնացնել դրդապատճառը և ուշադրությունը: Դրդապատճառի և ուշադրության գործոնները տեսական և գործնական կարևորություն են ներկայացնում ինչպես բնականոն ունկնդրության գործընթացը կատարելագործելու, այնպես էլ ունկնդրության ուսուցումը արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից: Կարևորվում է հատկապես Ե. Պ. Իլյինի աշխատանքը (Ильин 2006):

Արդի փուլում կարևորվում են հատկապես դրդապատճառային կոմպետենցիային նվիրված աշխատանքները (Dornyer 1998, 1999, McDonough 1995, Bradford 2007): Նպատակահարմար է նաև վերլուծել ինտեգրատիվ (Gardner, R. C., Day, J. B., &MacIntyre, P. D. 1992, C., Alrabai, F., Paolini, S., &Ratcheva, S. 2013), ներքին և արտաքին (Ryan, R., &Deci, E. 2000) մոտիվացիային նվիրված աշխատանքները:

Գ. Էգանի բնորոշմամբ «դրդապատճառ» (motivation) եզրույթը լայն իմաստով նշանակում է մարդու ընդհանուր վարք, իսկ նեղ իմաստով՝ խոսքային գործունեության հստակ դրսևորում (Egan 1990: 87):

Օտար լեզուների տիրապետելու սովորողների հաստատուն դրդապատճառը ապահովում է խոսքային գործունեության հիմնական տեսակների՝ ունկնդրելու, խոսելու, ընթերցելու և գրելու ունակություններ զարգացնելու նրանց նպատակադրվածությունը:

Անշուշտ, ողջ աշխարհում անգլերեն լեզվին գործնականում տիրապետելու օրըստօրե մեծացող հասարակական պահանջարկն այնքան ներգործուն և նպատակասլաց դրդապատճառ է, որ այն չի կարող սահմանափակվել առանձին դասընթացով, բանավոր կամ գրավոր խոսքով կամ էլ խոսքային գործունեության որևէ այլ տեսակով: Տվյալ դրդապատճառի առկայության պարագայում նույնիսկ սեփական նախաձեռնությամբ ուսումնառությունը՝ ինքնակրթությունը, որպես կանոն, ապահովում է անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների յուրացումը: Սա վերստին հաստատում է այն դրույթը, թե որքան կարևոր է հաշվի առնել մերօրյա ուսանողների հաղորդակցական, մասնագիտական պահանջմունքները (Huchinson 1989):

Մեթոդական գրականությունից հայտնի է, որ օտար լեզուների ուսուցման կապակցությամբ առանձնացվում է երկու տեսակի դրդապատճառ՝ արտաքին, որը վերաբերում է օտար լեզուներ յուրացնելու հասարակական պահանջին, և ներքին, որը ներառում է տվյալ լեզվի յուրացման գործընթացը:

Օտար լեզվի յուրացման գործընթացում դրդապատճառը հանդես է գալիս իբրև լեզվաբանական և հոգեբանական բնույթի դժվարությունները հաղթահարելու ձգտում, տվյալ լեզվով շփվելու համար անհրաժեշտ փորձառություն ձեռք բերելու ներքին մղում: Մասնավորապես օտար լեզվով ունկնդրության ունակությունների և կարողությունների զարգացման պարագայում դրդապատճառը կարող է մեծապես նպաստել ըստ անհրաժեշտության՝ մտավոր լարվածության և ուշադրության կենտրոնացման այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք կարևոր են խոսքային տվյալ գործունեության կայացման համար: Հետևաբար, դասավանդողի առաջնային խնդիրներն են՝ հնարավորինս խթանել ուսումնասիրվող օտար լեզվով ուսանողների հաղորդակցվելու պահանջմունքը, որը հնարավոր է լավագույնս իրականացնել շփվելու դրդապատճառային ֆոն ստեղծելու միջոցով:

Դրդապատճառի և շարժառիթի դերն ու նշանակությունը հատկապես մեծ են ոչ լեզվական ֆակուլտետում, ուր օտար լեզվի ուսուցումն ավանդաբար կազմակերպվում է սուղ ժամաքանակի և ուսումնական անհրաժեշտ միջոցների բացակայության պայմաններում:

Տ. Նամի դիտարկմամբ ուսումնական անբավարար պայմաններում շարժառիթը էական դերակատարում ունի սովորողների դրական տրամադրվածությունը, հետևողական աշխատանքը, դժվարությունները հաղթահարելու հաստատակամությունը և օտար լեզվի յուրացման ընդհանուր հաջողությունը ապահովելու գործում (Ham 2002: 95):

Վերն ասվածը մատնանշում է, որ սովորողի դրդապատճառների խթանումը հանդիսանում է ոչ միայն օտար լեզվով ունկնդրության, այլև խոսքային գործունեության բոլոր տեսակների փոխկապակցված ուսուցման որակը բարելավելու իրական միջոց: Սակայն խնդիրն այն է, որ մեթոդիկայում դեռևս չեն մշակվել ոչ լեզվական ֆակուլտետում, մասնավորապես օտար լեզվով ունկնդրության ուսուցման համար անհրաժեշտ շարժառիթների ստեղծման պայմանների, դրանց խթանման, ազդեցության չափանիշների, կառավարման և այլ հանձնարարականներ, համալիր հնարքներ և միջոցներ: Այդ բացը մասամբ լրացնելու նպատակով մեր կողմից կատարվել է որոշ հետազոտական աշխատանք.

Համապատասխան ուսումնասիրությունը ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվով ունկնդրության յուրացման դրդապատճառների խթանմանն առավելապես կարող են նպաստել՝

- ուսանողների ապագա մասնագիտության վերաբերյալ ուշագրավ տեղեկությունները, որոնք պարունակում են որոշակի հակասություն, խնդիրներ և այլն,
- ուսանողներին հայտնի մասնագիտական հարցերի օտար լեզվով քննարկումը,
- թիրախային լեզուն կրող ուսանողների կյանքը և առօրեական խնդիրները շոշափող թեմաներով զրույցը,
- ուսումնասիրվող լեզուն կրող ժողովրդի պատմությանը, մշակույթին, առօրյա կյանքին, ավանդույթներին, սովորույթներին, կարծրատիպերին, լեզենդներին և

խորհրդապաշատական նշաններին վերաբերող հետաքրքրաշարժ տեղեկատվությունը,

- օբյեկտիվ քննադատությունը, հումորը և երգիծանքը,

- ուսանողների կողմից օտար լեզվի յուրացման միջանկյալ հաջողությունների խրախուսումը,

- լեզվի յուրացման ընթացքում ուսանողների անհաջողությունների վերլուծությունը և գործնական խորհուրդներ տալու միջոցով նրանց հուսադրումը,

- օտարալեզու գիտելիքների և ունակությունների միջանկյալ և ամփոփիչ ստուգումների նկատմամբ ուսանողների պատասխանատվության բարձրացումը,

- դիպուկ օրինակներով օտար լեզուների տիրապետելու առավելությունները և ընձեռած հնարավորությունները պարբերաբար բացատրելը և այլն:

Հարկ է նշել, որ դրդապատճառի ազդեցության աստիճանն ի հայտ է գալիս այնպիսի գործոններով, ինչպիսիք են նոր լեզվի յուրացման ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքից բավարարվածությունը, հաղորդակցվելու շարունակական ցանկությունը, առարկայի նկատմամբ հետաքրքրությունը, ուսումնառության տվյալ պահին անհրաժեշտ ուշադրությունը և այլն: Ինչ վերաբերում է օտար լեզվով ունկնդրության համար անհրաժեշտ ուշադրությունը կենտրոնացնելու ունակություններին, ապա հասկանալի է, որ ուսանողների մեջ դրանք ձևավորվում են նաև այլ առարկաների ուսումնասիրության գործընթացում: Անշուշտ, մայրենի լեզվով ունկնդրելիս ձեռք բերված ուշադրությունը կենտրոնացնելու ուսանողների փորձառությունն ինչ-որ չափով նպաստում է նաև օտար լեզվով ունկնդրության զարգացմանը:

Կասկած չի հարուցում, որ օտար լեզվով ունկնդրության գործառույթի շրջանակում լեզվաբանական և հոգեբանական բոլոր գործոնների միագումար արդյունավետության կարևորագույն գրավականն ունկնդրի պատշաճ ուշադրության առկայությունն է: Ի հաստատումն այդ դրույթի՝ Լ. Կուլիշը գրում է. «Խոսքի ընկալման «որակը» կախված է լսելու պահին ունկնդրի ուշադրության աստիճանից, որն իր հերթին կապված է խոսքի դրդապատճառի, ինչպես նաև նրա հոգեկան և ֆիզկական վիճակի հետ» (Кулиш 1991: 224): Քանի որ ուրիշի խոսքով արտահայտված մտքերը կամ մտադրություններն

իմաստավորվում են լեզվական նյութի հիման վրա, ուստի բառանյութի, հնչյունաբանության և քերականության փոխկապակցված տիրապետման բարձր մակարդակի պարագայում միայն ունկնդրի համակ ուշադրությունը կարող է կենտրոնանալ ասույթի իմաստային բովանդակության վրա:

Անդրադառնալով ունկնդրության ուսուցման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններին՝ Ա. Գավրիլովան գրում է. «Եթե ընդունենք, որ դրդապատճառն ավելի օբյեկտիվ գործոն է, քան առանձին վերցրած սովորողի ֆիզիկական և հոգեբանական վիճակը, ապա տրամաբանական է ենթադրել, որ ուսանողների հենց անհատական բնութագրերը կարող են անմիջականորեն ազդել ընկալման որակի վրա» (Гаврилова 2006: 25): Ունկնդրության պարագայում, դրանցից ամենակարևորը, թերևս, ուշադրությունն այդ գործընթացում կենտրոնացնելու ունակություններն են:

Դրանցով պետք է բացատրել, որ տվյալ օտար լեզվին արդեն բավարար չափով տիրապետող ուսանողներից շատերն ունկնդրելիս իրենց հնարավորություններից հաճախ ավելի վատ են ընկալում բանավոր խոսքը՝ ճշգրիտ չեն ըմբռնում կամ չեն հասկանում ասույթի իմաստը: Եվ ընդհակառակը, օտար լեզվի իմացությամբ համեմատաբար թույլ ուսանողներից ոմանց հաջողվում է ավելի արդյունավետ ունկնդրել՝ շնորհիվ այդ գործընթացում իրենց ուշադրությունը լարելու կարողությունների: Հետևապես, օտար լեզվի ուսուցման և մասնավորապես ունկնդրության ունակությունների ձևավորման ու զարգացման գործընթացում անհրաժեշտ է տանել համակարգված և հետևողական աշխատանք:

Ի մի բերելով վերն ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվով ունկնդրության ուսուցման արդյունավետությունը առավելապես պայմանավորված է դրդապատճառի, շարժառիթի և ուշադրության հոգեբանական գործոններով: Բազմաթիվ մեթոդիստների կարծիքով և դասավանդման մեր փորձի վկայությամբ, ներկայիս իրողություններով թելադրված, օտար լեզուների տիրապետելու դրդապատճառը՝ որպես արտաքին ազդակ, խիստ դրական դեր է խաղում խոսքային գործունեության բոլոր տեսակներին տիրապետելու ուսանողների ձգտումն ապահովելու համար:

Ինչ վերաբերում է օտար լեզվով ունկնդրության արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ շարժառիթի և ուշադրության գործոններին, ապա հարկ է նշել, որ դասախոսները դրանց դերը դեռևս ըստ արժանվույնս չեն կարևորում և որպես հետևանք՝ դրանց մասնակցությունը ուսուցման գործընթացում ապահովելու ուղղությամբ բավարար միջոցներ չեն ձեռնարկում: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ, եթե օտար լեզվով բնականոն ունկնդրության համար անհրաժեշտ ուշադրության փորձառությունն ուսանողները կարող են ձեռք բերել նաև այլ առարկաներ ուսումնասիրելիս, ապա խոսքային գործունեության այդ տեսակի արդյունավետ յուրացման համար ոչ պակաս կարևոր դրդապատճառները ձևավորվում ու զարգանում են բացառապես օտար լեզվի պարապմունքներին:

1.3. Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման բովանդակությունը և ծրագրային պահանջները ոչ լեզվական ֆակուլտետում

ՀՀ բուհերում վերջին տարիներին կատարվող կրթական արմատական փոփոխությունները պահանջում են սկզբունքորեն նոր մոտեցում նաև ոչ լեզվական ֆակուլտետներում «օտար լեզու» առարկայի նկատմամբ: Հանրային մեթոդյա պատվերի համաձայն՝ հասարակական գործունեության բոլոր բնագավառների համար անհրաժեշտ է պատրաստել անգլերեն լեզվի գործնական իմացությամբ որակյալ մասնագետներ:

Համապատասխանաբար փոխվել են ոչ լեզվական ֆակուլտետներում սովորողների անձնական հետաքրքրությունները և պահանջմունքները: Ներկա սերնդի ուսանողները ցանկանում են ոչ թե ուսումնասիրել օտար լեզուներ, այլ տիրապետել դրանց: Այդ կապակցությամբ փոխվել է նաև «օտար լեզու» առարկայի ընդհանուր վարկը. Պարտադիր ուսումնական առարկայի կարգավիճակից այն փոխադրվել է առաջին անհրաժեշտության կարևորագույն առարկաների շարքը (Рыбаков 2003: 5):

Ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով բնականոն ունկնդրելու ունակություններ և կարողություններ զարգացնելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ այդ դասընթացի առանձին փուլերում դրանց ձևավորման և զարգացման ընթացակարգերին ներկայացվող պահանջների և չափանիշների վերաբերյալ: Նման չափանիշներ սահմանելու ուշագրավ փորձերից մեկը պատկանում է Ռ. Կուզնեցովային, ում կարծիքով՝ ուսանողը պատշաճ մակարդակով տիրապետում է օտար լեզվով ունկնդրության ունակություններին, եթե նա՝

- արագորեն արձագանքում է դասախոսի և ուսանողների խոսքին,
- առանց երկար մտածելու պատասխանում է դասախոսի և դասընկերների հարցերին,
- ունկնդրելով հասկանում է բնական խոսքով և ձայնագրությամբ արտահայտված ուսումնական տեքստերը,
- կարողանում է իմաստավորել ուսումնասիրված լեզվանյութի շրջանակում դասախոսի և ուսանողների կողմից արտահայտված անձանոթ ասույթները,

- անմիջապես ընկալում է դասախոսի ուղղորդող հարցը,

- կարողանում է օտար լեզվից մայրենի լեզու թարգմանել դասախոսի խոսքի կամ ձայնագրված նյութի հիմնական բովանդակությունը (Кызнецова 1979: 78-79):

Հանրային հիշյալ պատվերի շրջանակում և գործող ուսումնական ծրագրով ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվի դասընթացը հետաանդում է՝ 1. գործնական նպատակներ (լեզվական հաղորդակցական կոմպետենցիա), 2. կրթադաստիարակչական նպատակներ, 3. մշակութային նպատակներ:

Հաղորդակցական մոտեցման սկզբունքներով կազմակերպվող օտար լեզվի գործնական ուսուցումը միտված է հաղորդակցական-ճանաչողական, գործաբանական, կոնկրետ մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը և զարգացմանը: Ինչպես հայտնի է մասնագիտական գործունեության ոլորտում հաղորդակցումն իրագործվում է երկու եղանակով՝ անմիջականորեն (բանավոր խոսք) և միջնորդավորված (գրավոր խոսք), խոսելու, ունկնդրելու, ընթերցելու և գրելու խոսքային գործունեության տեսակներին տիրապետելու միջոցով:

Ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի գործնականում տիրապետել նշանակում է՝
ա) յուրացնել տվյալ մասնագիտության բնագավառում հաղորդակցվելու խոսքային ունակությունները և կարողությունները,

բ) տիրապետել ինչպես մասնագիտական ենթալեզվին, այնպես էլ ծրագրով նախատեսված այլ թեմաների լեզվանյութին,

գ) ձեռք բերել ուսումնական գործող ծրագրով սահմանված լեզվանյութի արագ և ճկուն գործածության ունակություններ և կարողություններ:

Ինչպես արդեն նշվեց վերը, օտար լեզվին գործնականում տիրապետելու համար անհրաժեշտ է հասնել լեզվանյութի՝ բառապաշարի, հնչյունաբանության և քերականության փոխկապակցված, համաժամանակյա և ինքնաբերական կիրառության մակարդակին, որը հնարավորություն է ընձեռում բնականոն հաղորդակցվել: Դա ենթադրում է ապահովել հաղորդակցական կոմպետենցիայի անհրաժեշտ մակարդակ: Ըստ այդմ, խնդիր է դրվում ոչ միայն յուրացնել անհրաժեշտ բառապաշար, ձեռք բերել հնչարտաբերական և ունկնդրական կարողություններ, քերականական գիտելիքները կիրառելու գործնական ունակություններ, այլև

օտարալեզու խոսքասերման իրազեկություն տարբեր ուսումնախոսքային և իրական իրադրություններում:

Ինչպես նշվել է վերը, ոչ լեզվական ֆակուլտետի խիստ սահմանափակ դասաժամերի և հաղորդակցական մշտական միջավայրի բացակայության պայմաններում մայրենի լեզվի մակարդակով օտար լեզվին տիրապետելը գրեթե անհնարին է: Այդ իսկ պատճառով օտար լեզվի ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառել ուսուցման նոր ռազմավարություններ: Այդ առումով, ի թիվս վերճանաչողական, ճանաչողական, հուզազգայական ռազմավարությունների առանձնանում է փոխհատուցման ռազմավարությունը:

Օ՛Մեյլը առաջարկում է օտար լեզվի ուսուցման 24 ռազմավարություն՝ որպես վերճանաչողական, ճանաչողական, հանրահուզական, փոխհատուցող ռազմավարությունների ենթառազմավարություն: Ըստ այդմ՝ վերճանաչողական ռազմավարությունները ենթադրում են ուսուցման գործընթացի նախնական պլանավորում, գիտակցում, վերջնարդյունքների գնահատում: Անգլերեն պատմական, պատմագիտական ենթալեզվի ուսուցման գործընթացում վերճանաչողական ռազմավարությունները կիրառվում է հիմնականում ուսուցման ավարտական փուլում, եթե խմբերը բարձր լեզվական մակարդակ ունեն:

Ճանաչողական ռազմավարություններն ենթադրում են կրկնելու, խմբավորելու, համառոտագրելու, մտապահելու գործառնություններ:

Հուզազգայական ռազմավարությունները ենթադրում են նախ և առաջ համագործակցություն, որը հիմք է ստեղծում փոխհատուցող ռազմավարությունների կիրառման համար (O'Malley J.M., Chamot A.U. 1994):

Հաղորդակցական ռազմավարությունները ենթադրում են ինչպես լեզվաբանական, այնպես էլ արտալեզվաբանական հենքային գիտելիքների կիրառում» (Барышников, Давыдов 1995: 177):

Ակնհայտ է, որ օտար լեզվի ուսուցման մոտավոր պայմանները ամեն տարի հստակեցվում, վերանայվում են, և սահմանելով քերականական, բառային կամ հնչյունական նվազագույնը, չի կարելի դրանով բավարարվել, հատկապես երբ խոսք է

զնում մասնագիտական բնագրային տեքստերի ունկնդրման, կամ վերարտադրման մասին: Ինքնուրույն աշխատանքի մշակույթի ձևավորումը այս պարագայում դառնում է առաձնային խնդիր, քանի որ նվազագույն հնչյունական նյութի սահմանումը երբեմն խոչընդոտում է բնագրային լսաերիզների շուրջ աշխատելուն:

Բնագրային տեքստերի ունկնդրումը բազմագործառույթ է՝ ճանաչողական, սոցիալականացնող, դաստիարակող և այլն:

Անհրաժեշտ է, որ մասնագիտացմանը զուգընթաց ուսանողները ձեռք բերեն համակեցության բարոյաէթիկական նորմերով թելադրված միջազգային չափանիշներին համապատասխան փոխշփումների որոշակի մակարդակ: Այս տեսակետից անգլերեն լեզվով հրամցվող ուսումնական նյութը ներառում է արևմտյան քաղաքակրթության արդի արժեհամակարգի հարուստ տեղեկատվություն, որն ուսանողներն ուսումնասիրում և յուրացնում են մեծ հետաքրքրությամբ և շահագրգռվածությամբ:

Կրթադաստիարակչական նպատակներից նույնպես կարևորվում են օտար լեզվի յուրացման ընթացքում ուսանողների տրամաբանական մտածողությունը և խոսքի զարգացումը, աշխարհայացքի ընդլայնումը, լեզվական գիտելիքների համակարգումը, աշխատանքային առավել նպատակասլաց հմտությունների ձեռքբերումը և այլն:

Պատմագիտական բովանդակության բնագրային տեքստերի ունկնդրումն օգնում է ուսումնասիրել ոչ միայն լեզվակիրների ընդհանուր մշակութային հենքը, այլև մասնագիտական մշակութային վարքագիծը: Ընդ որում, այս համատեքստում մշակույթը նույնպես բազմագործառույթ է: «Լեզուն ոչ միայն մշակույթի հիմնական բաղադրիչն է, այլև մշակույթն ընկալելու միջոց, բանալի» (Աստվածատրյան 1985: 7): Բառի լայն իմաստով «մշակույթ» հասկացությունն ընդգրկում է լեզուն կրող ժողովրդի ինքնատիպ բնութագրերը՝ անցած պատմական ուղին, ազգային մտածելակերպը, արվեստը, գրականությունը, հոգևոր կյանքը, կենցաղը, ավանդույթները, բարքերը և այն ամենը, ինչ տեղավորվում է «երկրագիտություն» հասկացության մեջ:

Հետևաբար, լեզվի մշակութային գիտելիքները կամ այլ կերպ ասած հանրամշակութային կոմպետենցիան լեզվի յուրացման անբաժանելի և կարևորագույն մասն է կազմում: Մասնագիտական, և ոչ մասնագիտական տեքստերի ունկնդրման


ընթացքում ուսանողը յուրացնում է լեզվակիր-գործընկերների լեզվամշակութային ոլորտը: Ունկնդրումը պետք է օգնի, և ոչ թե խոչընդոտի միջմշակութային հաղորդակցությանը, երկխոսությանը, ընդ որում՝ մասնագիտական մակարդակում (Եսաջանյան 2001: 13-18):

Ինչպես կրթադաստիարակչական, այնպես էլ մշակութային նպատակներն իրականացվում են օտար լեզվով հաղորդակցվելու միջոցով: Հետևաբար, կրթադաստիարակչական և մշակութային նպատակների իրականացման հնարավորությունը և հավանականությունը փոխապայմանավորված են օտար լեզվի ուսուցման գործնական նպատակների դրսևորման արդյունավետությամբ: Այլ կերպ ասած՝ այդ երեք նպատակը կազմում են փոխկապակցված մի համակարգ (տես՝ գծապատկեր 1):

Ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի դասընթացի առջև դրված նպատակները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է իրականացնել լեզվի գործնական ուսուցման և յուրացման հետ կապված մեթոդական բազմաթիվ խնդիրներ: Դրանք վերաբերում են ուսուցման բովանդակությանը, որոնց վերաբերյալ մեթոդիկայում կան տարբեր տեսակետներ:

Ավանդաբար որևէ առարկայի ուսուցման բովանդակությունը ներառում է այն ամենը, ինչն ուսուցման ենթակա է: Հետևաբար, ուսուցման բովանդակությունը փոփոխական հասկացություն է, քանի որ պայմանավորված է տվյալ դասընթացի առջև դրված նպատակներով և խնդիրներով:

ՈՉ ԼԵՁՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՁՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



Պետք է նկատել, որ օտար լեզվի բոլոր դասընթացներն ունեն մի խիստ էական ընդհանրություն՝ լեզվի համակարգի և դրա հիման վրա խոսքային գործունեության չորս տեսակի ուսուցման երկու առանցքային ուղղություն (տես՝ աղյուսակ 3):

Աղյուսակ 1

ԼԵՂՎԻ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԼԵՂՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ					ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Բաղադրամասեր			Ուղղագրություն	Գործառնական ոճեր	Բանավոր հաղորդակցում	Գրավոր հաղորդակցում
Բառապաշար	Քերականություն	Հնչյունաբանություն				
Բառ, բառակապակցություն, հոմանիշներ, հակահիշներ, համանուն բառեր, դարձվածքներ, բազմիմաստություն	Ձևաբանություն, շարահյուսություն	Հնչյունական կազմը, ինտոնացիա, ուղիղ, շեշտ, դարձվածքներ	Այբուբեն, ընթերցանության կանոններ, ուղղագրություն	Գիտական, հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական, գիտահանրամատչելի, խոսակցական	Ընկալողական տեսակներ	
					Ունկնդրություն	Ընթերցանություն
					(Վեր) Արտադրողական տեսակներ	
					Խոսողություն	Գրություն

Աղյուսակ 3-ում ներկայացված են օտար լեզվի բոլոր դասընթացների հիմքում ընկած լեզվի բաղադրամասերի՝ բառապաշարի, հնչյունաբանության և քերականության ուսուցման, ինչպես նաև խոսքային գործունեության տեսակների՝ խոսելու, ունկնդրելու, ընթերցելու և գրելու ունակությունների և կարողությունների ձևավորման ու զարգացման գործընթացները: Ոչ լեզվական ֆակուլտետում դրանցից յուրաքանչյուրի ուսուցման կազմակերպումն իր առանձնահատկություններն ունի:

Ստորև ներկայացնում ենք հայկական ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն լեզվի բաղադրամասերի ուսուցման ընդհանրական համառոտ նկարագիրը:

Գաղտնիք չէ, որ անգլերեն լեզվի մասնագիտական կողմնորոշման դասընթացում հնչյունաբանության ուսուցումն իրականացվում է բացառապես տվյալ մասնագիտությունն արտացոլող ենթալեզվի հիման վրա: Դա բացատրվում է ոչ թե հնչյունաբանության դերն ու նշանակությունը թերագնահատելու հանգամանքով, այլ տվյալ դասընթացին հատկացվող սուղ դասաժամերի պայմաններում կանոնավոր և հետևողական աշխատանք կատարելու անհնարինությամբ: Իհարկե, տվյալ դասընթացի սկզբից մինչև ավարտը դասախոսները որոշակի աշխատանք են տանում ուսանողների մասնագիտական բառապաշարի արտասանությունը, հատկապես եզրույթների հնչարտաբերական ունակություններն անգլերենի արտասանական նորմերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Օրինակ՝ ուսանողները վարժվում են առաջնորդվել արտասանական և ընթերցանական կանոններով, սովորում են նախադասությունները կարդալ արտասանական ճիշտ երանգավորմամբ: Այդուհանդերձ, ուսանողների արտասանական ունակությունների բարելավմանն ուղղված ծրագրավորված աշխատանք չի կատարվում, և դասախոսներն ավելի շատ ապավինում են սովորողների՝ դպրոցում կամ անհատական նախաձեռնությամբ ձեռք բերված անգլերեն լեզվի արտասանական ունակություններին:

Անգլերենի քերականության ուսուցումը հնչյունաբանության համեմատ ավելի համակարգված բնույթ է կրում: Ուսումնական ծրագրով սահմանված է քերականական նյութի ուսուցման պլանավորված ընթացակարգ, որի հիմքում ընդունվում է դպրոցից ստացված անգլերենի քերականական հիմնական երևույթների վերաբերյալ

սովորողների գիտելիքների և ունակությունների հետագա զարգացումը (տես՝ հավելված 6-ը):

Նշված ծրագրերի համաձայն՝ ոչ լեզվական ֆակուլտետում անգլերենի քերականության ուսուցումը, ըստ կիսամյակների, կազմակերպվում է հետևյալ կերպ.

- Առաջին կուրսի I և II կիսամյակներում ուսանողների անգլերենի քերականական գիտելիքները համակարգվում և ամրապնդվում են՝ փոխակերպվելով գործնական հմտությունների: Սկսած II կիսամյակից՝ քերականական մի շարք երևույթների գործածությունը ստանում է մասնագիտական կողմնորոշում: Պատմության ֆակուլտետում հատկապես կարևորվում են բայի անցյալ ժամանակաձևերի, ժամանակների համաձայնեցման, հատուկ և հասարակ գոյականների, հոդերի գործածությունը և այլն:

-Երկրորդ կուրսի III կիսամյակում քերականական ունակություններն ընդլայնվում են հիմնականում քերականական պասիվ նյութի յուրացման հաշվին, քանի որ ուսուցման այդ շրջանում շեշտը դրվում է խոսքի ընկալողական տեսակների՝ հիմնականում ընթերցանության, մասամբ էլ ունկնդրության ունակությունների զարգացման վրա: Որպես ընկալողական յուրացման համար նախատեսված քերականական չուսումնասիրված նյութ՝ հանդես են գալիս ստորոգյալի բարդ ձևերը, բայի կառուցվածքային բոլոր ձևերը, անորոշ դերբայների կիրառության առանձնահատկությունները, ստորադասական նախադասությունները թարգմանելու եղանակները և այլն:

Հիշյալ պայմաններից ելնելով՝ քերականական տեսական նյութը ոչ լեզվական ֆակուլտետում մատուցվում է հնարավորինս սեղմ, որն ավելի շուտ հիշեցնում է խոսքային գործունեություն ծավալելու հրահանգ: Դա մի կողմից անհրաժեշտ չէ մտապահել, մյուս կողմից դասախոսներն այդպիսով խնայում են գործնական պարապմունքներին հատկացված ժամանակը (Минина 1998: 30-31):

Անգլերեն լեզվի բառանյութի ուսուցումը հիմնված է ուսանողների՝ դպրոցից ձեռք բերված բառապաշարի վրա: Առաջնորդվելով ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի ուսուցման գործնական նպատակներով՝ բառապաշարի ընդլայնումը կազմակերպվում է գլխավորապես երկու ուղղություններով՝

ա) տվյալ ֆակուլտետի ընդհանուր մասնագիտությունը և ակադեմիական խմբի մասնագիտացումը արտացոլող գիտության կամ հասարակական գործունեության ենթալեզվի շրջանակում,

բ) խոսքային գործունեության ընկալողական կամ արտադրողական տեսակներում բառապաշարը գործածելու անհրաժեշտության տեսանկյունից:

Տվյալ մասնագիտության ենթալեզվի յուրացման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ այնպիսի գործոններով, ինչպիսիք են եզրույթների քանակական և որակական կազմը, ներզոր բառապաշար զարգացնելու սովորողների կարողությունը, ուսանողների հաղորդակցական նախկին փորձը, տվյալ ենթալեզուն ուսուցանելու դասախոսի կոմպետենտությունը և այլն:

Պատմության ֆակուլտետում անգլերեն լեզվի ուսուցման բովանդակության հիմքում ընկած է գրավոր և բանավոր տեղեկատվություն ստանալու և հաղորդելու ունակությունների և կարողությունների զարգացումը: Հետևաբար, խոսքային գործունեության տեսակներից տվյալ դասընթացում առավել կարևորվում են ընթերցանությունը և ունկնդրությունը: Դրանց ուսուցման և յուրացման խնդիրները մեթոդական գրականության մեջ հավասարաչափ լուսաբանված չեն, իսկ մշակվածության տեսակետից ունկնդրությունը զգալիորեն զիջում է ընթերցանությանը (Հայրյան 2009: 56):

Որոշ մեթոդիստների կարծիքով նշված գործոնները այնպիսի դժվարություններ են հարուցում, որ անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման գործընթացն ավելի հաճախ ձևական բնույթ է կրում և լավագույն դեպքում հանգեցնում տեքստային որոշ հատվածներ սերտելուն: Նման պայմաններում բազմաթիվ խնդիրների լուծման պատասխանատվությունն ընկնում է դասախոսների վրա: Այդօրինակ խնդիրների թվին է դասվում նաև ունկնդրության ուսուցման համար նպատակահարմար նյութի ընտրությունը, որի վերաբերյալ մեթոդիկայում համընդհանուր գործածության չափանիշներ մշակված չեն:

Արդյունավետ է անգլերենի լեզվով լեզվակիր պատմաբանների կողմից հնչեցրած, համացանցում հասանելի դասախոսությունների ունկնդրումը, որոնց տևողությունն ըստ թեմատիկայի և ուղղվածության կարող է տարբեր լինել: Նախնական փուլում

արդյունավետ է ունենդրել 5-6 թույն տևողությամբ դասախոսություններ: Հետագայում, հաշվի առնելով նաև ինքնուրույն աշխատանքի ժամերը, դրանց տևողությունը կարելի է երկարացնել, հասցնելով մինչև 15-20 թույն: Ուսանողներին առաջարկվում են համացանցային տեսադասախոսությունների մատչելի կայքէջերը: Օրինակ՝ <https://cosmolearning.org/courses/medieval-british-history/video-lectures/>, որտեղ տրվում են տարբեր դասախոսությունների Մեծ Բրիտանիայի միջին դարերի պատմությունից:

Medieval British History

Video Lectures (Տե՛ս հավելված video)

Արդյունավետ է նաև ուսանողներին առաջարկել տարբեր դասախոսությունների թեմաներ նրանց ինքնուրույն աշխատանքի համար՝

Lecture series

- Lectures in Classics and Ancient History
- Lectures in Religious Studies
- Schweich Lectures on Biblical Archaeology
- Shakespeare Lectures
- Chatterton Lectures on Poetry
- Lectures in Modern Languages
- Lectures on the Novel in English
- Sir John Rhys Memorial Lectures (Celtic studies)
- Raleigh Lectures on History
- Elie Kedourie Memorial Lectures (modern history / politics)
- Aspects of Art Lectures
- Philosophical Lectures
- Maccabaeon Lectures in Jurisprudence
- British Academy Law Lectures
- Lectures in Sociology
- Sir John Cass's Foundation Lectures
- Lectures in Politics and Government
- (<http://www.britac.ac.uk/british-academy-lectures>):

Անտարակույս, չափազանց բարդ այդ գործընթացի արդյունավետության կարևորագույն նախադրյալն այն գիտական հիմունքներով համակարգված ծրագրավորելն ու իրականացնելն է: Այդ կապակցությամբ հայկական ոչ լեզվական ֆակուլտետների համար նախատեսված օտար լեզուների առարկայական մի շարք ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս (Տե՛ս հավելված), որ դրանց հիման վրա ունկնդրության համակարգված ուսուցում կազմակերպելն անհնար է, քանի որ

դրանցում բացակայում են խոսքային գործունեության այդ տեսակի ունակությունների ձևավորման ու զարգացման կոնկրետ պահանջներ, չափանիշներ և հանձնարարականներ (տե՛ս հավելված 6-ը):

Մեր կարծիքով ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով խոսելու, ընթերցելու, գրելու հետ միասին ունկնդրելու փոխկապակցված ուսուցումը բարելավելու գործընթացը պետք է սկսել՝ շարունակաբար վերամշակելով և լրամշակելով տվյալ ֆակուլտետի (բաժնի) համար նախատեսված ուսումնական ծրագիրը, յաշվի առնելով այն, որ ծրագրի բովանդակությունը պետք է արտացոլի «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. դասավանդում, ուսումնառություն, գնահատում» աշխատության առանցքային դրույթները (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ 2005): Այդ համատեքստում օտար լեզվի մասնագիտական կողմնորոշման ուսուցումն անհրաժեշտ է դիտել իբրև բուհում իրականացվող որակյալ մասնագետներ պատրաստելու գործընթացի խիստ կարևոր բաղկացուցիչ: Անհրաժեշտ է, որ օտար լեզվի յուրացումն ուսանողներն ընկալեն՝ որպես մասնագիտության վերաբերյալ գիտելիքներ և ունակություններ ստանալու, դրանք ընդունելու և խորացնելու օգտաշատ միջոց, այսինքն՝ սեփական որակավորումը բարձրացնելու մատչելի և ռացիոնալ ուղի: Ուսանողները պետք է սեփական փորձով գնահատեն օտար լեզվի իմացության իրական արժեքը մասնագետ և քաղաքակիրթ անհատ կայանալու գործընթացում:

Ըստ կառուցվածքի՝ հայկական ոչ լեզվական ֆակուլտետների բակալավրի ծրագրերի ուսումնական պլաններով օտար լեզվի դասընթացին հատկացվում է 135-150 պարտադիր դասաժամ, 1 դասի տևողությունը հիմնականում 80 րոպե է:

Երեք փուլից բաղկացած օտար լեզվի մասնագիտական կողմնորոշման դասընթացի շրջանակում ունկնդրության, ինչպես նաև խոսողության, ընթերցանության և գրության ուսուցումն ունի ռազմավարական ընդհանուր ուղղվածություն: Վերջինիս համաձայն՝ դասընթացի երեք փուլից յուրաքանչյուրը նախատեսված է լեզվահաղորդակցական որոշակի ունակությունների և կարողությունների ձևավորման ու զարգացման համար: Դրանք կարող են բնութագրվել որպես նախանշված խնդիրների իրականացմանն ուղղված նախապատրաստական, կայացման և կատարելագործման փուլեր: Ընդ

որում՝ խոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակի ուսուցումը հետապնդում է հստակ նպատակներ և ունի ինքնատիպ բովանդակություն:

Ստորև քննարկենք ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման նպատակները, խնդիրներն ու բովանդակությունը:

I փուլ (I կիսամյակ). նախապատրաստական շրջան

Ուսուցման նպատակներն ու խնդիրները. դասընթացը կառուցվում է լեզուների իմացության համաեվրոպական համակարգի A1 մակարդակի իմացության վրա: Գլխավոր նպատակն է դպրոցից ձեռք բերված կամ նոր ձևավորվող անգլերեն լեզվով ունկնդրական ունակություններն ու կարողությունները զարգացնել այն մակարդակի, որ ուսանողներն ի վիճակի լինեն այդ լեզվով անսխալ հասկանալ մասնագիտական եզրույթներ և հասկացություններ, ինչպես նաև ոչ բարդ նախադասություններ և համառոտ տեքստեր տվյալ փուլի համար ծրագրով սահմանված թեմատիկայի շրջանակում: Անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները. ուսանողները պետք է խոսքում տարբերեն երկար և կարճ ձայնավորները, երկբարբառները, հնչողությամբ իրար նման բաղաձայնները և մայրենի լեզվում բացակայող հնչյունները: Այդ փուլի ավարտին ձեռք բերված ունկնդրական կարողությունների շնորհիվ սովորողները պետք է մտքեր փոխանակեն որոշակի թեմատիկայի շուրջ:

Ուսուցման բովանդակությունը. նպատակահարմար թեմատիկան է անձի ինքնությունը բնութագրող տեղեկությունները, ծանոթությունը, համալսարանական կյանքը, ուսանողի առօրյան և հանգիստը, սիրած զբաղմունքը, գիտական և հասարակական գործունեությունը, գիտությունների դասակարգումը:

Ունկնդրության ուսուցման հիմնական միջոցներն են ուսուցանողի խոսքը և լեզուն կրողների ուսումնական ձայնագրությունները տեսողական հենարանի (տպագիր տեքստեր) կիրառությամբ: Քանի որ ունկնդրության ուսուցման և յուրացման առարկան բանավոր խոսքն է, ապա այն հանդիսանում է ինչպես լեզվական նյութի մատուցման և մշակման, համապատասխան ունակությունների ձևավորման ու զարգացման, այնպես էլ ողջ այդ գործընթացը կազմակերպելու, վերահսկելու և խթանելու գերակա միջոցը ուսուցման բոլոր փուլերում:

Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման գլխավոր միջոցներն են դասախոսի բնականոն խոսքը, լեզուն կրողների տարբեր արագության և ոճի, մենախոսական և երկխոսական ձայնագրություններն առանց տեսողական հենարանի: Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում լեզուն կրող տվյալ մասնագիտության ներկայացուցչի կենդանի խոսքի ունկնդրումը: Ուսուցման III փուլի համար նախատեսված են համալիր վարժություններ ու հանձնարարություններ:

Ունկնդրության ուսուցման կազմակերպման հիմնական ձևերն են լսարանային խմբակային գործնական պարապմունքները, արտալսարանային անհատական և գործակցային խմբային պարապմունքները, անգլերեն լեզվով ուղեկցվող գիտական սեմինարների, գիտաժողովների և այլ միջոցառումների մասնակցությունը:

Ստուգման եղանակները և ձևերը. մասնագիտական կողմնորոշման անգլերեն տեքստը մեկ անգամ ունկնդրելով՝ ուսանողները 15-20 րոպեում պատրաստում են գրավոր կամ բանավոր հաղորդում, ինչպես նաև արտահայտում են իրենց կարծիքը, մասնակցում մտքերի փոխանակությանը: Հիմնականում գործածվում են բազմակի ընտրության, տրված հարցերին պատասխանելու, տեղեկատվության ճշգրտման, իմաստի կռահման և այլ թեստեր:

Դասընթացի ավարտին նախատեսվում է ուսանողների գիտելիքները հասցնել B1 մակարդակի՝ ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի: Երրորդ փուլի համար ուսումնական պլանով նախատեսված է երկու միջանկյալ ստուգում և հանրագումարային քննություն (Տե՛ս հավելված Ծրագիր):

Ելնելով օտար լեզվի մասնագիտական կողմնորոշման դասընթացի ընդհանուր նպատակներից՝ ծրագրային նշված դրույթներն իրագործելու համար անհրաժեշտ է տարբեր փուլերում սահմանել խոսքային գործունեության մյուս տեսակների հետ ունկնդրության փոխկապակցված ուսուցման առավել օպտիմալ հարաբերակցությունը: Ըստ ուսուցման հաջորդափուլերի՝ նախատեսվում է խոսքային գործունեության տեսակների տիպաբանական հետևյալ հարաբերակցումը (տես՝ աղյուսակ 2).

Աղյուսակ 2

	Ունկնդրություն	Խոստողություն	Ընթերցանություն	Գրություն
I փուլ	40%	25%	25%	10%
II փուլ	35%	30%	30%	5%
III փուլ	30%	30%	35%	5%

Վերը շարադրված անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման ծրագրային դրույթները, մեր կարծիքով, փաստացի նախադրյալներ են ստեղծում ոչ լեզվական ֆակուլտետի պայմաններում այդ գործընթացը հավուր պատշաճի իրականացնելու համար: Ըստ էության՝ առաջարկվում է մեթոդական մի համապարփակ և ավարտուն ծրագիր, որը, սահմանելով մասնագիտական կողմնորոշման ունկնդրության ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը, միջոցները, ընթացակարգը և այդ գործընթացի վերահսկման եղանակներն ու ձևերը, հնարավորություն է ընձեռում արմատապես բարեփոխել խոսքային գործունեության այդ տեսակի ուսուցման դրվածքը ոչ լեզվական ֆակուլտետում:

Տվյալ ծրագրով նախատեսվում է սահմանազատել ունկնդրությունն ու խոսողությունը համատեղ ուսուցանելու ավանդական ընթացակարգը, և ինչպես խոսողության, այնպես էլ ունկնդրության ուսուցումը առանձին կազմակերպել՝ դրանով իսկ ապահովելով բանավոր խոսքի այդ երկու համարժեք բաղկացուցիչներից նաև ունկնդրության ունակությունների և կարողությունների արդյունավետ ձևավորման և զարգացման գործընթացը: Մեր դիտարկումներով հայկական ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերեն բանավոր խոսքի ներդաշնակ զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներից մեկը հենց ունկնդրության ոչ ծրագրավորված ուսուցման կազմակերպումն է:

Հաշվի առնելով ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվով ունկնդրության և խոսողության տարանջատ ուսուցման մեթոդիկայից հայտնի դրույթները, ինչպես նաև այդ ուղղությամբ փորձարարական մեր աշխատանքի արդյունքները՝ կարելի է հավաստել, որ մեթոդական տվյալ համակարգի կիրառության շնորհիվ վերացվում է ունկնդրության ուսուցմանը ներկայացվող արդի պահանջների և ներկայիս անարդյունավետ ուսուցման անհամապատասխանությունը, նշանակալիորեն բարձրանում է ունկնդրության ուսուցման արդյունավետությունը, վերանայվում է շատերի կողմից ընդունված այն թյուր տեսակետը, ըստ որի՝ ունկնդրության ուսուցումը նպատակահարմար չէ խոսողության ուսուցումից տարանջատ կազմակերպել, դասախոսները հնարավորություն են ստանում համակարգված կազմակերպել այդ գործընթացը, որը վերջինիս արդյունավետության գրավականն է, ստեղծվում է համապատասխան դրդապատճառ, որպեսզի ուսանողներն ավելի ջանասիրաբար ներգրավվեն օտար լեզվի յուրացման գործընթացում և այլն:

Վերը ներկայացված ծրագրային դրույթներն արտացոլում են ESP դասընթացի ծրագրերին ներկայացվող մեթոդիկայի ժամանակակից պահանջները, ինչը հանդիսանում է դրանց արդյունավետության երաշխիքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արդի փուլում անգլերենի գործնական յուրացումը համարվում է մասնագիտական կոմպետենտության կարևորագույն բաղկացուցիչը: Այդ տեսակետից ոչ լեզվական ֆակուլտետում անգլերենի ունկնդրության կարողությունների և հմտությունների նպատակասլաց ձևավորումը կարևոր և արդիական է ինչպես բանավոր խոսքի զարգացման, այնպես էլ այդ լեզվին համակողմանի տիրապետելու գործընթացն առավել արդյունավետ դարձնելու առումով: Հնարավոր չէ տվյալ լեզվով մասնագիտական բազմակողմանի գործունեություն ծավալել առանց անգլերեն բանավոր խոսքի բնականոն ունկնդրության: Ուստի անգլերեն մասնագիտական կողմնորոշման ունկնդրության ուսուցման բարելավմանն ուղղված հետազոտությունն անհրաժեշտ է իրականացնել հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիաների փոխկապակցված զարգացման համատեքստում:

2. Օտարալեզու խոսքային գործունեության ուսուցումը ենթադրում է ընթերցանության, գրության, խոսողության և ունկնդրության ներդաշնակ յուրացում, մինչդեռ պրակտիկայում դրանք համամասնորեն չեն զարգանում: Ոչ լեզվական ֆակուլտետում ավանդաբար նախապատվությունը տրվում է օտարալեզու գրավոր խոսքի, գլխավորապես ընթերցանության, մասամբ էլ խոսողության կարողությունների և հմտությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է ունկնդրությանը, ապա այն առայսօր օտար լեզվի ուսուցման և ոչ մի դասընթացում պատշաճ ուշադրության չի արժանանում:

3. Օտարալեզու ունկնդրության ուսուցումն արդյունավետ կազմակերպելու հիմնական նախադրյալը այդ պրոցեսն իրականացնող գործոնների վերաբերյալ հստակ պատկերացում ունենալն է: Խոսքային գործունեության այդ տեսակի բաղադրիչներից մեթոդիկայում առավելապես կարևորվում են հնչույթային լսողությունը, օպերատիվ հիշողությունը, խոսքի հավանական կռահումը, ներքին խոսքը և տեսողական հենարանի առկայությունը: Դրանց համակողմանի հետազոտությունը տեսական և գործնական հիմքեր է ստեղծում ոչ լեզվական ֆակուլտետում օտարալեզու ունկնդրության ուսուցումը էապես բարելավելու համար:

4. Սովորողների ուշադրության կենտրոնացնելու կարողության զարգացումը նախ և առաջ պայմանավորվում է համապատասխան դրդապատճառով, որը ոչ լեզվական ֆակուլտետում ի հայտ է գալիս ուսանողների ապագա մասնագիտության վերաբերյալ ճանաչողական նպատակասլաց գործունեության արդյունքում:

Անգլերեն լեզվի մասնագիտական կողմնորոշման դասընթացի մի շարք ծրագրերի որոնողական հետազոտությունը ի հայտ բերեց ծրագրային պահանջների և ունկնդրության ուսուցման բովանդակության միջև բազմաթիվ անհամապատասխանություններ: Որոշ ծրագրերում ունկնդրության ուսուցմանը ներկայացվում են ձևական, ոչ իրատեսական պահանջներ, կամ էլ խոսքային գործունեության այդ տեսակի ուսուցումն առհասարակ անտեսվում է: Հետևաբար, քննարկվող դասընթացի շրջանակում անգլերեն ունկնդրության ուսուցման բովանդակությունն արդիականացնելու առաջնային խնդիրը առկա ծրագրերի վերանայումն է, ունկնդրական ունակությունների և կարողությունների նպատակասլաց զարգացմանն ուղղված անհրաժեշտ դրույթների մշակումը:

3. Ձևակերպված դրույթները հնարավորություն են ընձեռում ձեռնամուխ լինել կանխատեսելի ուսումնամեթոդական համալիրի մշակմանը, որը ի զորու է ըստ ամենայնի նպաստել օտարալեզու ունկնդրության արդյունավետ ուսուցմանը: Նման համալիրի մշակման տեսական հիմք պետք է ծառայեն վերը ներկայացված մանկավարժամեթոդական, լեզվաբանական, հանրալեզվաբանական, հոգեբանական և բազմալեզվադիդակտիկական դրույթները, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման օտարալեզու ունկնդրության ճշգրտված նպատակներն ու խնդիրները: Հիշյալ տեսական դրույթները և նախանշված նպատակներն ու խնդիրները հնարավոր է իրականացնել միայն համարժեք վարժությունների և ուսումնական տեքստերի միջոցով:

ԳԼՈՒԽ 2. «ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Ունկնդրության փոխկապվածությունը խոսքային գործունեության մյուս տեսակների հետ

Որպես խոսքային գործունեության տեսակներ՝ ունկնդրությունը, խոսողությունը, ընթերցանությունը և գրությունը հանդես են գալիս փոխկապակցված, միմյանց միջև պահպանելով հարաբերական կարևորությունը և առաջնահերթությունը:

Ելնելով օտար լեզուների յուրացման հասարակական պահանջից, ուսուցման նպատակներից և խնդիրներից՝ մեթոդիկայի զարգացման տարբեր փուլերում նախապատվությունը տրվել է բանավոր կամ գրավոր խոսքին, խոսքային գործունեության այս կամ այն տեսակին, հաշվի առնելով նաև դրանց գործառական ուղղվածությունը, հաղորդակցական դերն ու նշանակությունը, ինչպես նաև զուգամերժության աստիճանը:

Հայտնի է նաև, որ օտար լեզուների ուսուցման և ուսումնառության բարձր արդյունավետության հասնելու համար բազմաթիվ փորձեր են արվել մշակելու խոսողության, ունկնդրության, ընթերցանության և գրության փոխկապակցված գործադրման առավել օպտիմալ մոդելներ և ռազմավարություններ Դրանցից առանձնանում է Բըրդի և Վիյամսի ներակա և արտակա հիշողության վրա հիմնված բինար մոդելը (Bird, S. A., & Williams, J. N. 2002:509–533):

Առանձնանում են նաև ԶԼՄ-ների միջավայր մոդելավորող ունկնդրման մոդելները (Hoven, D. (1999 88–103, Hulstijn, J. H. 2003): Քննության առարկա մոդելներում առաջին պլան են մղվում փոխներգործուն, համագործակցային, վերճանաչողական ռազմավարությունները (Lynch, T. 1995, Nathan, P. 2008):

Ի. Վ. Շչուկինան մշակել է ունկնդրման ուսուցման բազմամակարդակ մոդելը, որը նախատեսված է օտար լեզվի ուսուցչի մասնագիտական պատրաստման համար (Щукина 2009), իսկ Ի. Ա. Գոնչարը՝ օտարալեզու տեքստի ուսուցման մոդելը (Гончар 2010):

Նշված մոտեցումներում շեշտադրվում է թե՛ խոսքային արտադրողական, թե՛ ընկալողական տեսակների ուսուցման դերը: Հատկանշական է այն, որ արևմտյան մոդելներում ավելի շատ շրջանառվում է վերճանաչողական ռազմավարության հիման վրա ստեղծված մոդելները, իսկ ռուսական մոտեցումներում դեռևս գերակայում են գործունեության տեսության սկզբունքները:

Մեր կողմից առաջարկվող մոդելում առաջնությունը տրվում է փոխահատուցող և ճանաչողական ռազմավարություններին, քանի որ վերճանաչողական ռազմավարությունը պատմական կողմնորոշման անգլերենի դասընթացում իր արդյունավետությունը կարող է ցույց տալ միայն ուսուցման ավարտական փուլում, հատկապես երբ ՀՊՄՀ-ում պատմական ֆակուլտետում օտար լեզուների ուսուցումը նախատեսվում է իրականացնել յոթ կիսամյակ:

Մեթոդական բազմաթիվ հետազոտություններ նվիրված են խոսքային գործունեության տեսակների հարաբերակցության հստակեցմանը: Առաջարկվող մոդելն արդյունավետ կարող է լինել նաև ունկնդրման դերի բարձրացման տեսանկյունից: Այնտեղ ունկնդրումը հաջորդում կամ նախորդում է ընթերցանությանը և խոսքային առաջադրանքների կատարմանը: Ինչպես արդեն նշվեց, հատկապես ունկնդրմանը անհրաժեշտ ժամաքանակ չի հատկացվում:

Հաղորդակցական մոտեցման շրջանակներում հիմք ընդունելով բանավոր խոսքի առաջնահերթությունը, ունկնդրումը մղվում է առաջին պլան ուսուցման բոլոր փուլերում, չնայած խոսողությունը արտադրողական, իսկ ունկնդրությունը՝ ընկալողական խոսքային գործունեության տեսակ է:

Չափանիշներ	Ունկնդրություն	Խոսողություն
Շփման բնույթը	Բանավոր անմիջականորեն	Բանավոր անմիջականորեն
Դերը շփման մեջ	Ռեակտիվ	Ձեռնարկող
Խոսքային գործունեության տեսակը որոշող խոսքի ձևը	Ընկալողական	Արտադրողական
Խոսքային գործունեության ուղղվածությունը	Ներքին խոսք	Արտաքին բանավոր խոսք
Արտաքին արտահայտվածությունը	Ոչ արտահայտված	Արտահայտված
Հակադարձ կապի բնույթը	Ներքին իմաստային	Ներքին մկանային և արտաքին լսողական

Համեմատելով ունկնդրության և խոսողության աղյուսակ 1-ում նշված չափանիշները՝ Ի. Զիմնյայան եզրակացնում է, որ դրանց միջև ակնհայտ կապ կա, և որ դրանցից յուրաքանչյուրը մյուսի արտացոլումն է (Зимняя 1973: 47):

Մեթոդական առումով այդ երևույթի կարևորությունն այն է, որ եթե խոսողությունը հիմնվում է ունկնդրության նյութի վրա, ապա արտասանական սխալներն էականորեն նվազում են: Ինչ վերաբերում է ուսուցման հաջորդ փուլերին, ապա, համընդհանուր կարծիքի համաձայն, ունկնդրությունն ու խոսողությունն այդ ընթացքում հանդես են գալիս որպես հաղորդակցական գործունեության համազոր բաղադրիչներ:

Հետևաբար, քանի որ առանց ունկնդրության չի կարող լիարժեք բանավոր հաղորդակցում լինել, ուստի ունկնդրական ունակությունների զարգացման պատշաճ

մակարդակը հանդիսանում է նաև խոսողության ունակությունների կայացման կարևորագույն նախապայմանը (Соловова 2005: 81):

Պետք է նկատել, որ ունկնդրությանն ավելի շատ ժամանակ հատկացնելը պայմանավորված է ոչ միայն սուբյեկտիվ գործոնով, այլև օտար լեզվի դասի օբյեկտիվ կառուցվածքով: Եթե ընդունենք, որ օտար լեզվով ունկնդրության և խոսողության ուսուցման համար նախատեսված է 50%-ական ժամաքանակ, ապա իրականում, ակադեմիական խմբի բոլոր ուսանողները, կամա թե ակամա, ներգրավվում են ունկնդրության ողջ գործընթացին:

Ինչ վերաբերում է խոսողությանը, ապա այդ գործընթացում ամեն մի ուսանողի 50% ներգրավվածությունը խիստ հարաբերական է, քանզի դա կախված է օտար լեզվով խոսելու յուրաքանչյուր սովորողի ակտիվությունից, ձեռք բերած կարողությունից, ֆիզիկական և հոգեբանական իրավիճակից և այլն:

Թ. Մրֆին, առավելությունը տալով ունկնդրության ուսուցմանը, միևնույն ժամանակ գտնում է, որ օտարալեզու խոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակի զարգացումը մեկուսի կազմակերպել հնարավոր չէ, և որ դրանք սերտորեն փոխկապակցված են (Murphy 1991: 46):

Անդրադառնալով խոսքի ընկալողական տեսակներին՝ Գ. Բոգդանովան կարծիք է հայտնել, որ ուսուցման տարբեր փուլերում դրանց նպատակահարմար հարաբերակցությունը պետք է կազմի՝

I փուլ՝ ընթերցանություն 58-65%-ունկնդրություն՝ 35-42%

II փուլ՝ ընթերցանություն 74-83%-ունկնդրություն՝ 17-26%

III փուլ՝ ընթերցանություն 74-83%-ունկնդրություն՝ 17-26% (Богданова 1989: 17):

Նշված հարաբերակցությունը հնարավոր է ճիշտ է որոշված հեղինակի կողմից: Սակայն հաղորդակցական մեթոդիկայի շրջանակներում այդ հարաբերակցությունը փոխվում է, եթե անգամ այն դասընթացը կազմակերպվում է տեխնիկական բուհում:

Նշված օրինակները, ինչպես նաև բազմաթիվ մեթոդական այլ դրույթներ ու տվյալներ հավաստում են, որ օտար լեզուների մասնագիտական կողմնորոշման կամ էլ մեկ այլ դասընթացի համար խոսքային գործունեության առանձին տեսակների կամ դրանց փոխկապակցված ուսուցման միասնական չափանիշներ դեռևս մշակված չեն:

Դրա հետ մեկտեղ ակնհայտ է, որ հատկապես ուսուցման առաջին փուլում մեթոդիստների ճնշող մեծամասնությունը խոսքային գործունեության տեսակներից առավել կարևորում է բանավոր խոսքի և հիմնականում՝ ունկնդրության դերն ու կարևորությունը:

Այդուհանդերձ, մի շարք փաստարկների համաձայն օտար լեզվով ունկնդրության, խոսողության, ընթերցանության և գրության ուսուցմանը հատկացվող ժամանակի հարաբերակցությունը ուսուցման հաջորդական փուլերում պետք է վերանայել:

Մեր համոզմամբ, օտար լեզուների ուսուցման մեթոդիստների և ուսուցանողների կարծիքներն ու տեսակետները, ինչպես նաև հետազոտական աշխատանքի արդյունքում ձեռք բերված տվյալները բավարար չեն ունկնդրության և հաղորդակցական մյուս տեսակների վերաբերյալ ուսուցման չափաբաժիններն ըստ փուլերի օբյեկտիվորեն որոշելու համար: Օտար լեզուներ յուրացնելու առանձին փուլերում խոսքային գործունեության տեսակների հարաբերակցությունը հնարավոր չէ որոշել միայն հարցման կամ դիտարկումների միջոցով: Սակայն հարցումը հնարավորություն է տալիս բացահայտել իրական պատկերը:

Այդ նպատակով Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և Երևանի «Հայբուսակ» համալսարանի ոչ լեզվական ֆակուլտետների օտար լեզվի դասընթացն ավարտած 85 ուսանողների մասնակցությամբ մենք կազմակերպել ենք հարցում, որպեսզի բացահայտենք, թե նրանց համար ինչ կարևորություն, հետաքրքրություն և գործնական նշանակություն ունեն օտարալեզու խոսողությունը, ունկնդրությունը, ընթերցանությունը և գրությունը ուսումնառության առանձին փուլերում (տես՝ աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ում գրանցված ընդհանրացված տվյալների համաձայն՝ հարցված ուսանողների ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 85%-ը, ուսուցման բոլոր փուլերում առավելությունը տալիս է բանավոր խոսքին: Ընդ որում, շատ ավելի կարևորվում է խոսողությունը, որը նրանք համարում են և՛ կարևոր, և՛ հետաքրքիր, և՛ օգտակար: Ինչ վերաբերում է ունկնդրությանը, ապա հարցվածների միայն 40%-ն է գտնում, որ այն նույնպես կարևոր է և օգտակար:

Սրանից կարելի է եզրակացնել, որ ուսանողները չեն գիտակցում ունկնդրության կարևորությունը, դերն ու նշանակությունը, թե՛ որպես խոսքային գործունեության առանձին տեսակ, և թե՛ որպես բանավոր խոսքի անբաժանելի բաղկացուցիչ:

Աղյուսակ 4

85 ուսանողի հաշվարկով

Օտար լեզվով	Բանավոր խոսք						Գրավոր խոսք					
	Խոսողություն			Ունկնդրություն			Ընթերցանություն			Գրություն		
	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է
I փուլ	82	83	81	39	34	42	41	17	54	11	4	23
II փուլ	81	79	73	43	36	39	33	24	49	13	0	31
III փուլ	83	73	80	38	35	37	41	21	51	18	6	38

Գրավոր խոսքի վերաբերյալ աղյուսակում գրանցված տվյալները բացահայտում են, որ ընթերցանությունը կարևորվելով հանդերձ, մեծ հետաքրքրություն չի ներկայացնում: Այդ կապակցությամբ ուշագրավ է այն, որ օտար լեզվով մասնագիտական տեքստերի

ընթերցանության և թարգմանության ուղղությամբ աշխատանքին ոչ լեզվական ֆակուլտետում բաժին է ընկնում լսարանային դասաժամերի մեծ մասը:

Այդուհանդերձ, հարցման ենթարկված ուսանողների միայն 38%-ն է այն կարևոր և օգտակար համարում, իսկ նաև հետաքրքիր՝ 20%-ից ոչ ավելին:

Նշված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ունկնդրության ուսուցման դերի գիտակցումն ուսանողների կողմից պայմանավորված է տարբեր գործոններով և դրդապատճառներով: Վերջին շրջանում ունկնդրության նկատմամբ հետաքրքրությունն ավելացել է նախ և առաջ այն պատճառով, որ ուսանողները փորձում են իրենց ուսումը շարունակել արտասահմանում, կամ հանձնել քննություն տարբեր թեստային ծրագրերով՝ TOEFL, ILTS, PTE., TOEIC,⁶, GMAT⁷, և այլ ծրագրերով:

-
- ⁶ **TOEFL:** Otherwise known as the Test of English as a Foreign Language, this exam is currently the most common for non-native English speakers. The TOEFL is often a requirement at most colleges and universities in the U.S., Canada and other English-speaking countries. In addition, government agencies, licensing bodies, businesses or scholarship programs might also require the TOEFL. At this present time, an individual's TOEFL score is valid for two years and then subject for re-evaluation after the two-year period. The TOEFL itself was first administered in 1964 and has been taken by more than 23 million students since then. There are two most common forms of the test, the Internet-based Test (**iBT**) and paper-based (**PBT**). The iBT test is comprised of four sections: Reading, Listening, Speaking & Writing. The PBT is made up of four sections, as well: Listening, Structure & Written Expression, Reading Comprehension & Writing. *The iBT has a total of 120 points, whereas the PBT ranges between 310–667 points.*
 - **IELTS:** Otherwise known as the International English Language Testing System, the IELTS is administered by the University of Cambridge ESOL Examinations, the British Council & IDP Education. There are two primary versions of the IELTS: the academic version & the general training version. Basically, the academic version is meant for students who want to enroll in universities and other higher education institutions, as well as for medical professions, such as doctors or nurses who need to work or study in an English-speaking country. The general training version is meant for those looking to gain work experience or for purely immigration purposes.

Similar to the TOEFL, an IELTS score is valid for two years. While both the academic version and the general version differ in terms of content, their structure is the same, dividing the test into three parts: Listening (40 minutes), Reading (60 minutes) and Writing (60 minutes). A band is given along with a score, ranging from the high score of an “Expert User” to the lowest score of the “Non User.” The top three countries the test is administered in are China, India and Pakistan.
 - **PTE:** The New Pearson Test of English (PTE) was launched in October 2009. Its main differences from the TOEFL include:
 - automated speech and writing scoring providing consistent and accurate grading
 - score reports offering recorded speech samples to admissions offices at universities worldwide
 - challenging question types including filling blanks, matching items, selecting multiple answer choices in the same question
 - results will be available online in just five days
 - the fee will range from \$150–\$220, depending on each country

Կարելի է պնդել, որ ձևավորվել է յուրահատուկ դրդապատճառային ֆոն: Ուսանողներից շատերը գիտակցում են, որ միայն մասնագիտական գիտելիքներով, առանց մասնագիտական կողմնորոշման անգլերենի իմացության հնարավոր չէ տեղ գտնել հետագայում որևէ աշխատաշուկայում: Ավանդական մոտեցմամբ, դասախոսները նպատակահարմար են գտնում պարբերաբար խոսել օտար լեզվով ունկնդրության գործառույթների մասին:

Գիտակցականության սկզբունքի համաձայն, նույնիսկ լավագույն մեթոդը և մեթոդական համակարգը չեն կարող ունկնդրության ուսուցման բարձր արդյունավետություն ապահովել, եթե սովորողները չեն գիտակցում դրա կարևորությունը լեզվի գործնական յուրացման գործընթացում:

Ուստի ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզու դասավանդողը ոչ միայն պետք է ներկայացնի ունկնդրության կարևորությունը, այլև հնարավորությունները, որն ընձեռում է համացանցը: Այստեղ խոսք է գնում մասնագիտական ոլորտին վերաբերող տարաբնույթ իրական (authentic) տեղեկատվական աղբյուրների, նյութերի, մասնավորապես տեսաերիզների, լսաերիզների, գովազդային և այլ բնույթի ծայնասկավառակների մասին:

Կոնկրետ պատմաբանները կարող են ցանկացած քանակության և որակի անգլալեզու աղբյուրներից օգտվել: Դրանք կարող են վերաբերել պատմության, պատմագիտության տարբեր բնագավառներին:

Օրինակ՝ նրանք կարող են ունկնդրել Հռոմի պատմությունն անգլերեն և դիտել համապատասխան շարժանկարներ:

Similar to the [TOEFL](#) test, the Pearson Test of English (PTE) will test in all four sections: reading, writing, listening and speaking.

- **TOEIC:** The TOEIC is an acronym for the Test of English for International Communication. As quoted from the TOEIC website: “The TOEIC is an English language test designed specifically to measure the everyday English skills of people working in an international environment.” The point system ranges from 10 to 990 points and the test itself is two hours in length, multiple choice, testing listening comprehension and reading comprehension.

The TOEIC gives certificates to those who take the test, with different colors differentiating the range of advanced skills. In 2006 a new TOEIC was released with longer reading passages and also British, Australian and New Zealand English-speakers, whereas the previous test only featured American speakers.

⁷ The GMAT exam is designed to test skills that are highly important to business and management programs. It assesses analytical writing and problem-solving abilities, along with the data sufficiency, logic, and critical reasoning skills that are vital to real-world business and management success. In June 2012, the GMAT exam introduced Integrated Reasoning, a new section designed to measure a test taker’s ability to evaluate information presented in new formats and from multiple sources—skills necessary for management students to succeed in a technologically advanced and data-rich world.

Կարելի է օգտագործել թե՛ բուն պատմագիտական, թե՛ գիտահանրամատչելի, թե՛ պատմագրոսաշրջային տեսարերիզներ, պատմական գեղարվեստական, վավերագրական ֆիլմեր: Նույնը վերաբերում է Հայաստանի պատմությանը: Ուսանողները պետք է կարողանան ներկայացնել Հայաստանի պատմությունն անգլերեն տարբեր աշխատանքային և ոչ աշխատանքային իրություններում:

Օտարալեզու բանավոր խոսքի ուսուցման վերաբերյալ մեթոդիկայում հաճախ արժարժվում է այն տեսակետը, որ սկզբնական փուլում, տեսողականի համեմատ, լսողական զննականությունը վճռորոշ դեր և կարևորություն ունի:

«Լսողական զննականության հիմնական խնդիրը սովորողների հիշողության մեջ խոսքային նմուշօրինակների ձևավորումն ու ամրապնդումն է, խոսքում դրանք վերարտադրելու ունակությունների մշակումը» (Гаврилова 2006): Զննականության սկզբունքի կիրառության վերաբերյալ մի շարք գիտնականներ գտնում են, որ այն ոչ միայն ուսուցման և ուսումնառության, այլև տեղեկատվություն ստանալու հույժ կարևոր միջոց է:

Լսողական զննականության միջոցներից կարևորվում են անմիջականորեն հնչող խոսքի ձայնագրված տարբերակը, ռադիոհաղորդումը, լսալեզվական դասընթացը և այլն: Որպես տեսալսողական դիտողականության միջոցներ հանդես են գալիս տեսաֆիլմերը, ձայնով ուղեկցվող դիաֆիլմը, հեռուստահաղորդումը, համացանցը և այլն (Munro 2008):

Հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման շրջանակում ունկնդրությունը դրսևորվում է իբրև խոսքային իրական գործունեություն, քանի որ ասույթի ընկալումը ոչ թե ինքնապատակ է, այլ այդ գործընթացին հաջորդող՝ սեփական մտքեր հայտնելու, երկխոսությանը մասնակցելու կամ մեկ այլ գործունեություն իրականացնելու միջոց: Օտար լեզու ուսումնասիրելիս ունկնդրության զարգացման նշանակալից բաղկացուցիչներից մեկն էլ կապված է ասույթի զգայական կողմը ընկալելու կարողության հետ:

Այդ առումով, ունկնդրության գործընթացում ասույթի իմաստը հասկանալուն զուգընթաց ուսանող-ունկնդիրը պետք է սովորի ընկալել նաև զրուցակցի խոսքի

հուզական երանգավորումը այն լեզվով, որը դեռևս յուրացման փուլում է գտնվում (Պետոյան 2010: 200-202):

Ունկնդրության առաջ դրված խնդիրներին համապատասխան որոշվում են տեքստի ընկալման գործընթացը վերահսկելու հանձնարարությունները՝

1. Գլոբալ ընկալումը ենթադրում է՝ տեքստի թեմայի և վերնագրի որոշում, հիմնական փաստերի թվարկում,
2. Մանրամասն ընկալումը ենթադրում է՝ տեքստի վերապատմում, հարցերի պատասխանում, էական տարրերից բազմակի ընտրության թեստի լրացում, թերի ձևակերպված տեքստի սկզբնամասի և վերջնամասի հորինում,
3. Տեքստի քննական իմաստավորումը ստուգվում է հիմնականում զրույցի միջոցով, արտահայտելով ունկնդրի վերաբերմունքը գործող անձանց և իրադարձությունների նկատմամբ, տվյալ մակարդակը ներառում է նաև տեքստի գնահատումը (նույն տեղում):

Նշված դասակարգման համաձայն՝ լսված տեքստի ընկալումը վերահսկելուն ուղղված հանձնարարությունների մեծ մասը կատարվում է բանավոր, ինչը ակնհայտորեն հաստատում է ունկնդրության կապը դրան հաջորդող խոսողության հետ: Բանավոր տեքստի ընկալումը վերահսկելու համար գործածվում են նաև գրավոր թեստեր, սակայն դրանք նախատեսված են ուսուցման խորացված շրջանի համար, որի ընթացքում ունկնդրությունն ու խոսողությունն ավելի սերտորեն են փոխկապակցվում:

Հարկ է նշել, որ ուսուցման տարբեր փուլերում կիրառվում են վերահսկողության զանազան տեսակներ: Դրանց ընտրությունը կախված է մեթոդական այն խնդիրներից, որոնք դրվում են ուսանողների առաջ: Ըստ այդմ, ուսուցման նախնական փուլում նպատակահարմար է գործածել ունկնդրության ընկալումը վերահսկելու բանավոր հանձնարարություններ, իսկ ավարտական փուլում՝ տվյալ ուղղվածության նաև գրավոր թեստեր:

Ինչպես վերը նշվեց, ունկնդրության ուսուցումը ինքնանպատակ չէ: Ունկնդրության ունակություններին տիրապետելը անհրաժեշտ է, քանի որ դա հանդիսանում է հաղորդակցման գործընթացի անբաժանելի մասը: Քանի որ ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի ուսուցման ներկայիս նպատակը հաղորդակցական

կոմպետենտության զարգացումն է, ապա, նախ և առաջ, ունկնդրության և խոսողության կապը, ինչպես նաև դրանց և ընթերցանության ու գրության փոխկապվածությունը պետք է դիտարկել իբրև տվյալ լեզվին համակողմանի տիրապետելու գերխնդիր:

2.2. Օտար լեզվով ունկնդրությունը մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիայի համատեքստում

Ինչպես հայտնի է, օտարալեզու խոսքը հասկանալու և հաղորդակցվելու կոմպետենցիան անհրաժեշտ է զարգացնել թե՛ մասնագիտական, թե՛ մասնագիտական ուղղվածության դասընթացները կազմակերպելիս: Դա բացատրվում է մի շարք հանգամանքներով: Հասարակական գործունեության համարյա բոլոր ոլորտները չեն կարող շրջանցել աշխարհայացման, ինտեգրման գործընթացները: Ձևավորվում է տեղեկատվության միացյալ տարածք, ինչպես նաև համաշխարհային կապիտալի, ապրանքների և աշխատուժի փոխկապակցված համակարգ (Рыбаков 2003: 318-319):

Այդ ամենի շարժիչ ուժը տարբեր ազգերի, դավանանքի և մշակույթի մարդիկ են, որոնց անձնական շփումների կենսական անհրաժեշտությունը գալիս է ապացուցելու խոսքային հաղորդակցման համընդհանուր միջոցների համար օտար լեզուներին գործնականում տիրապետելու կարևորությունը, որի անքակտելի բաղադրիչը տվյալ լեզվով ունկնդրելու կարողությունների տիրապետումն է:

Միջազգային հաղորդակցության մակարդակում ամենագործածական լեզուն ներկայումս անգլերենն է, որի զանգվածային ուսուցման մեջ, ըստ վիճակագրական տվյալների, ներգրավված է ողջ աշխարհի ուսանողության, այդ թվում՝ ոչ լեզվակիրների շուրջ 75%-ը (Тер-Минасова 2000: 19):

Անգլերեն լեզվով բնականոն հաղորդակցումը լայն հեռանկարներ է բացում ներկայիս սերնդի երիտասարդների առջև: Այն հնարավորություն է ընձեռում ուսանել արևմտյան զարգացած երկրներում և բարձրակարգ մասնագետներ դառնալ, մրցունակ լինել աշխատանք փնտրելիս և ձեռք բերել բարձր վարձատրվող աշխատանք, հայրենիքում ևս ստանալ համեմատաբար որակյալ կրթություն և զբաղվել ավելի նպատակասլաց ինքնակրթությամբ:

Պետք է նկատել, որ ոչ լեզվական յուրաքանչյուր ֆակուլտետում օտար լեզվով ունկնդրության և խոսքային գործունեության մյուս տեսակների ուսուցման համար անհրաժեշտ պայման է մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիաների

փոխկապակցված զարգացումը: Հնարավոր չէ բազմակողմանիորեն յուրացնել մասնագիտությունն առանց հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման: Մյուս կողմից՝ օտարալեզու հաղորդակցական կոմպետենցիան չի կարող ձևավորվել իստ ընդունված չափանիշների, եթե հաշվի չենք առնում մասնագիտական կոմպետենցիայի բովանդակությունը:

Մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման կարևոր պայման է հաշվի առնել կրթության հումանացման և հումանիզացման միտումները: Խնդիր է դրվում քննության առնել մասնագիտական կոմպետենցիայի բովանդակությունը անձնային որակների, մասնագիտական վարքագծի ձևավորման մակարդակում: Ակնհայտ է, որ ոչ լեզվական բուհում դժվար է օտարալեզու հաղորդակցության մեջ ներգրավելով ձևավորել սովորողի մասնագիտական որակներ:

Ցանկացած լեզու սովորելու գործընթացը նպաստում է ստեղծագործության, մտավոր և հոգևոր զարգացմանը: Սակայն անգլերենին հատկացվող դասաժամերը բավարար չեն ձևավորել ոչ լեզվական բուհի ուսանողի հաղորդակցական կոմպետենցիա:

Խնդիր է դրվում կիրառել յուրահատուկ փոխհատուցող ռազմավարություն, շեշտը դնելով ուսանողների դրդապատճառային կոմպետենցիայի ձևավորման վրա: Անհրաժեշտ է ձևավորել յուրահատուկ դրդապատճառային հենք: Այն հիմք կստեղծի, որ ոչ լեզվական բուհի ուսանողը ձգտի օտար լեզուներ յուրացնել՝ քաջ գիտակցելով, որ դրանով իսկ միջազգային կրթական տարածք մուտք գործելու իրական նախադրյալներ են ստեղծվում (Հայրապետյան 2006: 140-144):

Բազմաթիվ երկրների նման Հայաստանի բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզվի դասընթացները հետապնդում են միևնույն գործնական նպատակները. սովորեցնել ուսանողներին ունկնդրել, խոսել, կարդալ և գրել նախևառաջ ընտրած մասնագիտության ոլորտում, ինչպես նաև միջանձնային շփումների մակարդակով (Պետրոսյան 2010: 162):

Հաղորդակցական-մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման պայմանները բավականին լավ են ներկայացված լեզուների իմացության համաեվրոպական համակարգում: «... ենթադրվում է շփման որոշակի բնագավառում կոնկրետ հաղորդակցական խնդիրներ լուծելու նպատակով անհատի հաղորդակցական-

լեզվական կարողությունների գործնական կիրառում» (Акопова 2001: 3-7): Ակոպովան նույնպես չի տարազատում մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիաների բովանդակային բաղադրիչներն ու գործառույթները, երբ խոսք է գնում ուսանողների մասնագիտական-իմացական պահանջմունքների ձևավորման մասին:

Նա նշում է, որ «...հաղորդակցական կոմպետենցիան հանդիսանում է մասնագիտական կոմպետենտության պարտադիր տարրը անկախ ապագա մասնագետի աշխատանքի ոլորտից: Այդ տեսակետից մասնագիտական կոմպետենցիայի զարգացման գործընթացը չպետք է դիտարկել հաղորդակցական ունակությունների ձևավորումից, շփվելու կարողություններից անջատ» (Акопова 2001: 3-7):

Լեզվի իմացության մակարդակը հաղորդակցական կոմպետենցիայի մի մասն է, որի առկայությամբ բազմակողմանի զարգացած, կիրթ և ժամանակակից երիտասարդ մասնագետի համար լեզվական խոչընդոտները հեշտությամբ հաղթահարվում են: Դա խիստ կարևոր նախադրյալ է, որպեսզի նա իրեն հավասարապես պահանջված, տեղեկացված և հարմարավետ զգա ինչպես հայրենիքում, այնպես էլ արտերկրում, ուր որ հարկ կլինի գործուղվել, շրջագայել կամ աշխատել:

Հաղորդակցական կոմպետենցիայի վերաբերյալ վերն ասվածից դժվար չէ եզրակացնել, որ այն բավականաչափ ընդգրկուն և բազմանշանակ հասկացություն է: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն այդ բառակապակցության իմաստին, այլև առանձին վերցրած «հաղորդակցություն» և «կոմպետենցիա» հասկացություններին, որոնք թե՛ միասին, թե՛ առանձին-առանձին եզրույթներ են:

Մի շարք հեղինակներ, (Ասատրյան, Հարությունյան 2014, Մանուկյան 2016, Աստվածատրյան Մ., Թերգյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ. 2004, Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան 2010, Ежов, Бологова 2013, Ломакина, Густомясова 2013, Шабанов 2012, Шукин 2008, Leung, Constant 2005, Hymes 1972, Zechia 2015 և այլք), լեզվի գործածության հետ կապված «հաղորդակցում» եզրույթին տվել են տարբեր սահմանումներ և բնութագրեր (Խաչատրյան 2008): Լեզվական եվրոպական քաղաքանության փաստաթղթենում հաղորդակցական կոմպետենտությունը ներառում

է երեք բաղադրիչ՝ լեզվական կոմպետենցիա, հանրալեզվական կոմպետենցիա և գործաբանական կոմպետենցիա:

Վալենսն ու Մակ Վիլյամն առանձնանցնում է հաղորդակցական կոմպետենցիայի անձնային բաղադրիչը: Ըստ նրանց՝ «Հաղորդակցումը միջանձնային հարաբերությունների հիմքն է, շփումների միջոցով մենք հասկանում ենք միմյանց, վարժվում ենք դուր գալ, վստահել մեկս մյուսին և ազդել իրար վրա, հաստատում և դադարեցնում ենք փոխհարաբերություններ, ճանաչում ենք ինքներս մեզ և տեղեկանում, թե ինչ են մտածում ուրիշները մեր մասին» (Tallance and Mac William 1991: 8):

Այդ ամենն օտար լեզվով իրականացնելու համար անհրաժեշտ է յուրացնել ոչ միայն տվյալ լեզվի համակարգը, այլև դրանով մտքեր արտահայտելու և հասկանալու փոխկապակցված համակարգերը, որոնց կայացումը կապված է ծայրաստիճան բարդ մտավոր և հոգեբանական գործընթացների հետ:

Ինչ վերաբերում է օտար լեզվով մասնագիտական հաղորդակցմանը հաղորդակցմանը, ապա այն կարելի է բնութագրել իբրև առաջին լեզվի փորձի և օտար լեզվով ձեռք բերված հաղորդակցական կոմպետենցիայի հիման վրա իրականացվող շփում, որը վերաբերում է մարդկային կենսագործունեության տարբեր կողմերին, թե՛ անձային, թե՛ մասնագիտական մակարդակներում:

Ինչպես հայտնի է հաղորդակցումը և տեղեկատվությունը վերածվել են մարդկային զարգացման գլոբալ, անսպառ աղբյուրի: Մասնագիտական հաղորդակցման կոմպետենցիայի ձևավորման մակարդակում առաջին պլան են մղվում հաղորդակցության թե՛ տեղեկատվական և ճանաչողական ասպեկտները:

Դիտարկելով «Հաղորդակցական կոմպետենցիա» եզրույթը տվյալ մակարդակներում, շեշտադրվում է ուսանողների մասնագիտական և ճանաչողական պահանջմունքների և դրդապատճառների դերը, որոնք ընկած են «...մարդկանց հետ շփումներ հաստատելու և պահպանելու ունակությունների» հիմքում (Столяренко 2003: 394-395):

Վերն ասվածը բերում է այն համոզման, որ ոչ լեզվական ֆակուլտետում հաղորդակցական կոմպետենցիան օտար լեզվի ուսուցման առաջնային խնդիր է, և

նրա կարևոր բաղադրիչի՝ ունկնդրության ուսուցումը հնարավոր է դառնում դիտարկել նոր մեթոդաբանական՝ կոմպետենտային մոտեցման դիրքերից:

Նույն տրամաբանական հարթության վրա առաջին պլան է մղվում «մասնագիտական կոմպետենտություն» հասկացությունը, որի բաղադրիչներն են ըստ Լ.Մ.Միտինայի՝ «գործունեության, հաղորդակցական և հասարակական կոմպետենտությունները» (Митина 1998: 40):

Որոշ հեղինակներ խոսում են մասնագիտական ակտիվության կոմպետենցիայի մասին, որը բնութագրվում է որպես սոցիալական ակտիվություն, հիմնված փորձի և ձեռք բերած գիտելիքի վրա: Այն բաղկացած է ճանաչողական կոմպետենցիայից, անձնային կոմպետենցիայից և տեխնոլոգիական-մասնագիտական կոմպետենցիաներից (Wilson 2003):

Դրա հետ մեկտեղ մասնագիտական կողմնորոշման դասընթացում հաղորդակցական կոմպետենցիան ներառում է քերականական կոմպետենցիա (բառապաշար, շարահյուսություն, ձևաբանություն, հնչյունաբանություն և ուղղագրություն), գործաբանական կոմպետենցիա (ենթատեքստային բառապաշար, գործառական լեզու, հաղորդակցությունը շարունակելու տարբեր լեզվամիավորներ), խոսության կոմպետենցիա (տեքստի և իրադրության կապը պահպանելու ունակություն), հանրալեզվային կոմպետենցիա (այլ մշակույթները, առոգանությունը, բարբառները, փոխգործակցելու հմտությունները հասկանալու ունակություն) և ռազմավարական կոմպետենցիա (խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական և փոխհատուցող ռազմավարություններ) (Luka 2007: 1-21):

Մասնավորապես օտար լեզու յուրացնելու մշակութային բաղկացուցչի գործառույթն այն է, որ ուսանողների համար «...ուղիղ ճանապարհ է հարթվում ուսումնասիրվող լեզուն կրող ժողովրդի մշակույթը և հատկապես հոգևոր հարստությունները ճանաչելու համար» (Глушакова 2001: 65, Lund 1996: 7-19.):

Անգլերենի մասնագիտական դասընթացում կարևորվում են ուսանողի մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական գործոնները, դասախոսի մեթոդական զինանոցը, լեզվակիր մասնագետների վարքագծային և հաղորդակցության մոդելները, տեղեկատվության

փոխանցման միջոցներն ու տեխնոլոգիաները և այլն: Դա հաշվի առնելով Վեդենսկին սահմանում է «մասնագիտական կոմպետենտությունը հաղորդակցական, տեղեկատվական, կարգավորող, ինտելեկտուալ կոմպետենտոցիայի ձևավորման համատեքստում» (Введенский 2003: 51-55):

Այսպիսով, բուհում բարձրակարգ մասնագետների պատրաստման և ուսանողների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացման գործընթացները պետք է համատեղվեն և համապատասխանեցվեն ժամանակի պահանջներին: Դա, անշուշտ, բուհում դասավանդվող որևէ առարկայի մենաշնորհը չէ, և բոլոր դասախոսները ջանում են դասավանդվող առարկաների բովանդակությունը հնարավորինս ծառայեցնել նաև այդ նպատակին: Ինչ վերաբերում է օտար լեզվին, ապա բացի վերը նշված գործնական նպատակներից, այն իրականացնում է և՛ կրթադաստիարակչական, և՛ միջմշակութային հաղորդակցման խնդիրներ:

2.3. Անգլերեն պատմագիտական ենթալեզվի համատեքստում մշակված ունկնդրության ուսուցման համալիր վարժությունների համակարգը

Ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման արդյունքների բարելավման վերաբերյալ սույն հետազոտությունում առաջ քաշված տեսական դրույթները գործնականում իրականացվել են այդ նպատակով մշակված համալիր վարժությունների միջոցով: Ուստի, վարժությունների համակարգը հանդիսանում է մեր կողմից մշակված ուսումնամեթոդական համալիրի բաղադրիչներից ամենաէականն ու վճռորոշը:

Օտար լեզվով ունկնդրության և խոսողության կապն ինքնատիպ կերպով արտահայտվում է ունկնդրության համար նախատեսված հանձնարարություններում: Քանի որ նմանօրինակ վարժությունները կատարվում են բանավոր, ապա հանդիսանում են ունկնդրությունն ու խոսողությունը շաղկապող հիմք նաև խոսողության ունակությունների զարգացման համար:

Որպես ասվածի լուսաբանման օրինակներ՝ ստորև ներկայացնում ենք Օ. Տարնապոլսկու կողմից առաջարկվող առաջադրանքները՝

1. Անվանել թեման,
2. Անվանել գլխավոր իմաստը,
3. Բնութագրել զրույցի մասնակիցներին,
4. Ձևակերպել զրույցի մասնակիցների կարծիքները,
5. Թվարկել արձարձվող հարցերը,
6. Ամփոփ կերպով բանավոր շարադրել տեքստի բովանդակությունը,
7. Լսել տեքստի սկիզբը և արտահայտել սեփական տեսակետը դեպքերի հնարավոր զարգացման վերաբերյալ: Լսելով տեքստն ամբողջությամբ ստուգել, թե ինչն է հաջողվել կռահել, իսկ ինչը՝ ոչ,
8. Վերնագրել լսվածի իմաստային հատվածները,
9. Բանավոր վերաշարադրել տեքստի առանցքային հատվածները,

Մտաբերել այն հիմնական արտահայտությունները, որոնք բացահայտում են տեքստի իմաստային բովանդակությունը (Тарнапольский 1989: 126):

Մասնագետների համոզմամբ՝ ունկնդրության ուսուցմանն ուղղված հիշյալ և այլ հանձնարարություններն օժանդակում են սահուն կերպով անցնել խոսողության ուսուցմանը: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ խոսքային գործունեության այդ երկու տեսակների գործնական փոխկապվածությունը դրսևորվում է ուսումնառության նաև այլ գործընթացներում, որոնք վերաբերում են օտար լեզուների ուսուցման և յուրացման տարբեր կողմերին և պայմաններին:

Պ.Կոստերան մատնանշում է ունկնդրության և խոսողության փոխկապակցված գործընթացում ուսանողների խոսքային գործունեության հետևյալ վարժությունները՝

1. Մասնավորում, ճանաչում,
2. Նմանակում, ընդօրինակում,
3. Հիշողության վրա հիմնված բազմաթիվ կրկնություններ,
4. Արմատավորված պատասխաններ,
5. Ասույթի բացակայող առանձին տարրերի լրացում,
6. Բառերի և նախադասությունների համակցություն,
7. Փոփոխություն, փոխակերպում,
8. Բառային զուգորդումներ,
9. Բանավոր հարցերի պատասխաններ,
10. Թարգմանություն,
11. Կառավարվող, սակայն մասամբ ինքնուրույն արտահայտված խոսք,
12. Հանպատրաստից խոսք (Костера 1986: 53):

1-9 կետերն իրականացվում են, այսպես կոչված՝ «դրիլ» (drill) տիպի հաճախակի կրկնվող վարժությունների հիման վրա և նախատեսված են ուսուցման առաջին փուլի համար: Այդ փուլում անհրաժեշտ է վերահսկել ունկնդրվող նյութի ընկալման աստիճանը: Կետ 10-ում նշված թարգմանությունն իրականացվում է ուսուցման բոլոր փուլերում, սակայն ուսուցողական տարբեր խնդիրների համադրությամբ: Ուսուցման 2-րդ և 3-րդ փուլերում հետևողականորեն կատարելագործվում են թարգմանական

ունակությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ոչ միայն ասույթի իմաստի ընկալմանը, այլև այն հնարավորինս ճշգրտորեն վերարտադրելու ունակությունների զարգացմանը: 11 և 12 կետերում ներկայացված վարժությունները նույնպես նախատեսված են 2-րդ և 3-րդ փուլերի համար: Ընդ որում, կետ 11-ը համապատասխանում է «քննարկում» (discussion) տիպի հանձնարարությանը, իսկ կետ 12-ը՝ հանձնարարված թեմայի վերաբերյալ ազատորեն արտահայտվելու (expansion) տիպի հանձնարարությանը:

Բանավոր տեքստի ընկալումը Ն. Ելուխինան բաժանում է երեք մակարդակի՝ գլոբալ, մանրամասն և քննական (Елухина 1996: 20):

Առանց տեսողական հենարանի տպագիր տեքստն ունկնդրությամբ նրա բովանդակության հասկանալի շատ ավելի դժվար է, քանի որ լսողական զգայարանը միանգամայն այլ կերպ է գործում: Ուստի, ընթերցանության համար նախատեսված տեքստն ունկնդրության ուսուցմանը ծառայեցնելու համար այն պետք է անպայման լրամշակման ենթարկվի՝ հիմք ընդունելով մասնագիտական կողմնորոշման օտարալեզու տեքստի հետ աշխատանքի սկզբունքները:

Մասնավորապես անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման նպատակով բնագիր տեքստերի մշակման հիմքում ընդունվել են Ե. Տարասովայի կողմից առաջ քաշված հետևյալ սկզբունքները.

ա) տեքստերի հետաքրքրաշարժության սկզբունք, որը մեծապես խթանում է ուսանողների օտար լեզու յուրացնելու շարժառիթը՝ խոսքի բովանդակությունն ըմբռնելու նրանց շահագրգռվածությունը, ինչը ստիպում է առավելաչափ լարել ուշադրությունը և հիշողությունը, ակտիվացնել նաև հոգեբանական գործունեությունը (Елухина 1991: 231),

բ) տեքստի ընկալման սկզբունք, որի համաձայն՝ դրանում պետք է նպատակահարմարորեն հարաբերակցվեն ուսուցման ենթակա և սովորողներին հայտնի տեղեկատվությունը (Тарасова 1997: 19, 232),


գ) ունկնդրվող հաղորդման ծավալի և սովորողի հոգեբանական հնարավորությունների համապատասխանության սկզբունք. «Բանավոր տեղեկատվություն ընկալելու բարդ պայմանները, հոգեբանական մեխանիզմների

լարված գործունեությունը արագորեն հոգնեցնում են, բթացնում ուշադրությունը և վերացնում տեղեկատվություն ստանալու ցանկությունը: Տեղեկատվության ծանրաբեռնվածությունից խուսափելու համար տեքստի ծավալը պետք է համապատասխանի սովորողների հոգեբանական կարողություններին» (տես՝ նույն տեղում):

Հարկ է նշել, որ ունկնդրության փորձարարական ուսուցման նպատակով ընտրված տեքստերի լրակազմը հանդիսանում է առաջարկվող ուսումնամեթոդական համալիրն ամբողջացնող վերջին բաղադրիչը: Տվյալ համալիրի կիրառությամբ ունկնդրության ունակությունների և կարողությունների զարգացման ընթացքը ի հայտ բերելու համար անհրաժեշտ էր հետազոտել խոսքային գործունեության այդ տեսակի երեք հիմնական բաղկացուցիչները՝ հնչույթային լսողությունը, օպերատիվ հիշողությունը և խոսքի հավանական կռահման գործոնը (Зудова 1997: 127): Ընդ որում՝ այս հետազոտությունը հնարավորություն է ընձեռում միաժամանակ բացահայտել նաև ուսումնամեթոդական համալիրում ընդգրկված ինչպես տեքստերի, այնպես էլ վարժությունների արդյունավետությունը և կատարելագործել դրանք:

Պատմագիտական ենթալեզվի շրջանակում անգլերենի փորձարարական ուսուցման ընթացակարգը պլանավորելիս մենք առաջնորդվել ենք այդ գործընթացի ավանդական սխեմայով (տես՝ գծապատկեր 5), որի բաղկացուցիչների դասակարգումը ներկայացրել է Մ. Լյախովիցկին (89, էջ 45-48):

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ



Հայտնի է, որ օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակի ունակությունները և կարողությունները ձևավորվում և զարգանում են համապատասխան վարժությունների միջոցով, որոնց արդյունավետությունը պայմանավորված է մեթոդական հստակ խնդիրներ իրականացնելու նպատակասլացությամբ:

Այդ տեսակետից ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվով ունենդության ուսուցման համար նախատեսված վարժությունների համակարգը պետք է նպատակամղվի այդ գործընթացի ինքնատիպ դժվարությունների հաղթահարմանը: Տվյալ ուղղվածության վարժությունների ընտրության և կիրառության հիմք պետք է հանդիսանան խնդրո առարկա դժվարությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշները:

Վարժությունների նշված լրակազմը մշակվել է պատմագիտական ենթալեզվի համատեքստում, գլխավորապես “History as a Science” և “Turning Points of the Armenian History” թեմաների հիման վրա (տես՝ հավելված 1):

Պատմագիտական կողմնորոշման վարժությունները մշակվել են այն հաշվարկով, որ ունկնդրության ուսուցման օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները հաղթահարվեն համակարգված: Ըստ նպատակային ուղղվածության և բարդության աստիճանի՝ այդ վարժությունները բաժանվում են երեք խմբի և նախատեսված են ուսուցման երեք փուլերի՝ նախատեքստային, տեքստային և հետտեքստային փուլեր: Քանի որ, ըստ երեք փուլերի, վարժությունների կիրառման ավանդական ստորաբաժանումը համապատասխանում է մասնագիտական կողմնորոշման դասընթացի շրջանակում ունկնդրության ուսուցման ընդհանուր ուղղվածությանը, ապա ուսուցման ողջ գործընթացը մենք կազմակերպել ենք այդ նույն սկզբունքով:

Ունկնդրության ուսուցման յուրաքանչյուր փուլի համար նախատեսված վարժություններն ունեն համապատասխան գործառույթներ.

I փուլ- նախատեքստային (տեքստերը տես հավելված 1-ում). այս փուլի գլխավոր նպատակն է ուսանողներին նախապատրաստել իրենց ապագա մասնագիտության վերաբերյալ անգլերեն հաղորդումն ունկնդրելով հասկանալուն: Դրա համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել բանավոր տեքստն ընկալելու համապատասխան ունակություններ, ինչպես նաև սովորեցնել լեզվական որոշակի գիտելիքներ: Գործնական այդ նպատակներին հասնելու ուսանողների առաջնահերթ խնդիրներն են վարժվել անգլերենի հնչյունական համակարգի առանձնահատկություններին, դանդաղեցված, այնուհետև աստիճանաբար արագացվող խոսքում կռահել մասնագիտական եզրույթների, նախանշված բառերի իմաստը, ճանաչել և զանազանել հնչողությամբ իրար նման բառերը, կողմնորոշվել տարբեր հնչերանգի, առոգանության և տեմպի հաղորդման իմաստային բովանդակության մեջ և այլն:

I փուլի ունակության վարժությունների ընդհանուր բովանդակությունն ուղղված է նրան, որ սովորողները ձեռք բերեն լեզվական տարբեր դժվարություններ հաղթահարելու ունակություններ և փորձ:

Հնչյունաբանական դժվարությունները հաղթահարելու առաջադրանքների օրինակներ.

Վարժություն 1. Ուշադիր լսե՞ք բառերը և կրկնե՞ք՝ հետևելով դրանց տառադարձությանը.

history	[ˈhɪstri]
historic	[hɪˈstɔːrɪk]
historical	[hɪˈstɔːrɪkəl]
historically	[hɪˈstɔːrɪkəlɪ]
historian	[hɪˈstɔːrɪən]
historiography	[hɪstɔːrɪˈɔːgrəfi]
historicism	[hɪˈstɔːrɪzɪzəm]
prehistory	[ˌpriːhɪˈstɔːri]
post-history	[ˈpəʊst ˈhɪstri]
prehistoric	[ˌpriːhɪˈstɔːrɪk]
post-historic	[ˈpəʊst hɪˈstɔːrɪk]

Վարժություն 2. Ուշադիր լսե՞ք բառերը և նշե՞ք այն մեկը, որը հենց նոր լսեցիք.

1. evil	<input type="checkbox"/>	anvil	<input type="checkbox"/>
2. heaven	<input type="checkbox"/>	even	<input type="checkbox"/>
3. Antropology	<input type="checkbox"/>	anthropophagy	<input type="checkbox"/>
4. hard	<input type="checkbox"/>	heart	<input type="checkbox"/>
5. theology	<input type="checkbox"/>	geology	<input type="checkbox"/>
6. thirty	<input type="checkbox"/>	thirsty	<input type="checkbox"/>
7. angle	<input type="checkbox"/>	ankle	<input type="checkbox"/>
8. enormous	<input type="checkbox"/>	amorphous	<input type="checkbox"/>
9. evacuation	<input type="checkbox"/>	evolution	<input type="checkbox"/>
10. throne	<input type="checkbox"/>	throng	<input type="checkbox"/>

Վարժություն 3. Լսե՛ք գիտությունների անունները և ցուցակում նշե՛ք պատմագիտությանը առավել առնչվողները.

- | | | | | | | |
|-----------|--------------------------|-------------|--------------|----------------|-----------|--------------------------|
| Biology | <input type="checkbox"/> | Sociology | anthropology | geography | ethnology | <input type="checkbox"/> |
| Geology | <input type="checkbox"/> | Astronomy | physiology | cybernetics | zoology | <input type="checkbox"/> |
| Philology | <input type="checkbox"/> | Archaeology | chemistry | ethnography | law | <input type="checkbox"/> |
| Theology | <input type="checkbox"/> | Phylosophy | genetics | historiography | ecology | <input type="checkbox"/> |
| Physics | <input type="checkbox"/> | Economics | medecine | geneology | politics | <input type="checkbox"/> |

Վարժություն 4. Լսե՛ք տեքստի համառոտ և դանդաղեցված տարբերակը երկու անգամ: Այժմ լսե՛ք տեքստը նորմալ արագությամբ և փորձե՛ք վերարտադրել ընդհանուր բովանդակությունը:

Բառային դժվարությունները հաղթահարելու առաջադրանքների օրինակներ.

Վարժություն 1. Լսե՛ք նախադասությունները և ընտրե՛ք դրանցում առկա ճիշտ տարբերակը.

- | | | | | | |
|----------------|--------------------------|-------------|--------------------------|-------------|--------------------------|
| 1. in 301 A.D. | <input type="checkbox"/> | In 311 A.D. | <input type="checkbox"/> | in 301 B.C. | <input type="checkbox"/> |
| 2. 2 to 1 cc | <input type="checkbox"/> | 1 to 2 cc | <input type="checkbox"/> | 1 to 3 cc | <input type="checkbox"/> |
| 3. the third | <input type="checkbox"/> | the second | <input type="checkbox"/> | the first | <input type="checkbox"/> |
| 4. in 1951 | <input type="checkbox"/> | in 1911 | <input type="checkbox"/> | in 1915 | <input type="checkbox"/> |
| 5. 2 million | <input type="checkbox"/> | 8 million | <input type="checkbox"/> | 4 million | <input type="checkbox"/> |

Վարժություն 2. Լսե՛ք նախադասությունները երկու անգամ առանց գրառության: Համապատասխանեցրե՛ք A և B հատվածների տեղեկատվությունը.

A.	B.
1. in the 6-5 cc B.C.	by Romans
2. in the 4 c B.C.	by Persians
3. in the 14 th cc A.D.	by Assirians
4. in the 7-9 cc A.D.	by Greeks
5. in the 1 c A.D.	by Arabs
6. in the 11 c A.D.	by Turks
7. in the 4 c A.D.	by Seljouks

Վարժություն 3. Լսե՛ք, կրկնե՛ք և բանավոր թարգմանե՛ք հետևյալ բառակապակցությունները.

1. commercial crossroad, 2. foreign invador, 3. years of flourishment, 4. periods of decline, 5. throughout the ages, 6. to withstand independence, 7. national integrity, 8. the formation of a nation, 9. the result of cohesion, 10. slave-holding state, 11. the state existed three centuries, 12. mighty state, 13. to reach the top of development, 14. under the king Tigran the Great, 15. to adopt Christianity, 16. state religion, 17. to undergo invasions, 18. to loose independence, 19. under the attacks, 20. the fate of the country, 21. to solve “the Armenian Problem”.

Վարժություն 4. Դանդաղ տեմպով ձայնագրված տեսքով երեք անգամ ունկնդրելիս գրե՛ք հետևյալ հայերեն արտահայտությունների անգլերեն տարբերակները.

1. պատմական իրադարձություններ
2. պատմական ժամանակաշրջան
3. մասնագիտական զբաղմունք

4. ուսումնասիրել պատմություն
5. պատմական տարբեր գիտակարգեր
6. պատմության ֆակուլտետի շրջանավարտ
7. ապագա պատմաբան
8. ձեռագիր աղբյուրներ

Քերականական դժվարությունները հաղթահարելու առաջադրանքների օրինակներ.

Վարժություն 1. Լսե՛ք մի շարք գոյականներ և նշե՛ք նույնարմատ բայերը.

proof, arrival, conquest, impression, reduction, base, land, belief, organization, government, study, count

Վարժություն 2. Լսե՛ք բառակապակցությունները, կրկնե՛ք և դրանցով կազմե՛ք նախադասություններ քերականական համապատասխան ժամանակով.

1. a century ago, 2. some famous historians, 3. contemporary history, 4. old Armenian manuscripts, 5. from historical books, 6. the Ancient History, 7. historical events, 8. in the nearest future, 9. historic battle of, 10. since ancient times.

Վարժություն 3. Ունկնդրված յուրաքանչյուր ածական արտահայտե՛ք համեմատական և գերադրական աստիճաններով:

Վարժություն 4. Լսե՛ք ձայնագրված տեքստը երկու անգամ: Այժմ փորձե՛ք տեքստի բովանդակությունն արտահայտել ապառնի ժամանակով:

Ունկնդրության ուսուցման առաջին փուլի խնդիրներից մեծապես կարևորվում են հաղորդման իմաստային բաղադրիչների կանխակոռուկտի, համադրման և ընդհանուր բովանդակության ըմբռնման ունակությունների ձևավորումն ու զարգացումը:

Ուսումնամեթոդական համալիրում տեղ են գտել նշված ուղղվածության այնպիսի վարժություններ, ինչպիսիք են՝

Վարժություն 1. Լսե՛ք տեքստը երեք անգամ և այդ ընթացքում գրանցե՛ք այն եզրույթներն ու բառակապակցությունները, որոնք արտահայտում են բուն բովանդակությունը:

Վարժություն 2. Լսե՛ք համարակալած նախադասությունները և նշե՛ք այն համարները, որոնք վերաբերում են պատմագիտությանը:

Վարժություն 3. Լսե՛ք տեքստը և քննարկե՛ք դրա թեման: Արտահայտե՛ք ձեր անձնական տեսակետը թեմայի վերաբերյալ:

Պետք է նշել, որ մասնագիտական կողմնորոշման տեքստի ունկնդրական ունակությունների ձևավորման առաջին փուլում ուսանողները յուրացնում են տվյալ ենթալեզվի հիմնանյութը: Վերջինս բառանյութի և քերականության նվազագույնի այն միջուկն է, որը տեքստային և հետտեքստային փուլերում պետք է ծառայի իբրև լեզվական հիմք՝ հաղորդման տեղեկատվության իմաստն ընկալելու և ըմբռնելու համար: Ուստի, նախատեքստային փուլի գերխնդիրը պետք է համարել լեզվական գիտելիքները ինչպես ունկնդրելու, այնպես էլ խոսելու գործունեության փոխակերպելու համար անհրաժեշտ համապատասխան ունակությունների ձևավորումը և կարողությունների զարգացումը:

II փուլ- տեքստային (տեքստերը տես հավելված 2-ում). սահմանված նպատակների համաձայն՝ ուսանողները պետք է յուրացնեն նորմալ արագությամբ արտահայտված մասնագիտական և առօրեական թեմաներով խոսքի ընդհանուր իմաստն ըմբռնելու, խոսույթի մակարդակով շարահյուսական միավորները տարբերակված ընկալելու ունակություններ և կարողություններ:

Ունկնդրության ուսուցման երկրորդ փուլում իրականացվող խնդիրներն ավելի բազմապլան են: Դրանց շրջանակում նախատեսվում է ձևավորել ու զարգացնել հաղորդումն անընդհատ ընկալելու և իմաստավորելու, այդ ընթացքում հանգուցային բառերը և հիմնական մտքերը առանձնացնելու և վերլուծաբար ընկալելու, ձեռք բերված գիտելիքների և հաղորդակցական փորձի հիման վրա նոր տեղեկատվություն ստանալու ունակություններ և կարողություններ: Այս փուլում ավելի է կարևորվում կարճաժամկետ և օպերատիվ լսողական հիշողության զարգացումը:

Նշված նպատակները և խնդիրները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է խթանել ուսանողների անհրաժեշտ ճանաչողական և մասնագիտական դրդապատճառները և ակտիվությունը, ինչպես նաև նպատակասլաց ուսումնառության գործունեությունը: Վերջինս ներառում է տեքստի հետ աշխատելու հետևյալ առաջադրանքները.

1. հարցերի առաջադրում (questioning). օրինակ՝ յուրաքանչյուր հարցին հետևող դադարին տալ կարճ պատասխաններ (yes, no, don't know), պատասխանել

ունկնդրված տեքստի հիման վրա կազմված բազմակի ընտրության հարցերին, ցույց տալ քարտեզի վրա, թե որտեղ են ծավալվել պատմական տվյալ իրադարձությունները և այլն,

2. ճանաչում, բացահայտում (recognizing). օրինակ՝ որոշել ունկնդրված տեքստի տիպը, համատեքստի մանրամասները, հիմնական բովանդակությունը, նպատակադրվածությունը, հանգուցային բառերը, եզրույթները, փորձել բացահայտել հոետորական խոսքի ներքին իմաստը, ի հայտ բերել լսված և տպագիր տեքստերի էական տարբերությունները և այլն,

3. համապատասխանեցում (matching). օրինակ՝ ունկնդրված տեքստի բովանդակության համաձայն՝ վերադասավորել այն տպագիր նախադասությունները, որոնց հերթականությունը խախտված է ժամանակագրական առումով, համապատասխանեցնել ունկնդրվող և տպագիր տեքստերում առկա գործող անձանց անունները, տարեթվերը, տեղանունները և այլն,

4. մասնագիտական գործառույթների իրականացում (realization of professional activities). օրինակ՝ կազմել աղյուսակ կամ գծապատկեր՝ հիմք ընդունելով ունկնդրված տեքստի տեղեկատվությունը, համառոտագրել ունկնդրված տեքստը, զուգահեռներ անցկացնել Հին Հռոմի և Հին Հունաստանի քաղաքական կառուցվածքների միջև, նշել ունկնդրված տեքստի ժամանակաշրջանը, բնութագրել, բացատրել “the Renaissance” (Վերածնունդ) հասկացության էությունը և այլն,

5. նոթագրում կամ գրառում (note-taking). օրինակ՝ գրի առնել ունկնդրված տեքստում արժարժվող հիմնական իրադարձությունները, տարեթվերը, գործող անձանց անունները, հանգուցային բառերը, եզրույթները, շարադրել տեքստը համառոտակի, լրացնել հարցաթերթիկը, ըստ ունկնդրվող տեքստի՝ նշել, թե ում կողմից և երբ է Հայաստանը ասպատակությունների ենթարկվել, ուշադիր լսել տեքստը և բառացի գրի առնել Հայաստանի վերաբերյալ պատմաբանի դիտարկումները և այլն,

6. մեկնաբանում (interpreting). օրինակ՝ ներկայացնել պատմական տվյալ ժամանակաշրջանի բնութագրերը՝ ըստ ունկնդրված տեքստի, պարզաբանել ունկնդրված տեքստի գործող անձանց վերաբերմունքը տվյալ իրադարձության վերաբերյալ և արտահայտել սեփական կարծիքը, տալ ունկնդրված տեքստում

ներկայացված փաստերի գնահատականը, ձայնագրության դադարների ընթացքում մեկնաբանել տվյալ նախադասությունը և այլն,

7. ավարտում (completion). օրինակ՝ տեքստը հաջորդաբար լսելիս լրացնել ներկայացված նախադասության բաց թողնված հատվածները, ըստ ունկնդրված տեքստի՝ ավարտել կամ սկսել անավարտ նախադասությունները, լսել անավարտ տեքստը և փորձել կռահել, թե ինչի մասին է տեքստի սկզբնամասը կամ վերջնամասը և այլն:

III փուլ-հետտեքստային (տեքստերը տես հավելված 3-ում). այն նպատակաուղղված է մասնագիտական և առօրեական թեմաներով անգլերեն կենդանի և ձայնագրված խոսքը բնականոն ունկնդրելու կարողությունների զարգացմանը: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք խնդիրներ, որոնցից հատկապես պետք է կարևորել՝

ա) տարբեր արագության և ձայնաձավալի ոչ միայն անթերի, այլև լեզվական, արտասանական և մեխանիկական թերություններով արտահայտված խոսքի ընկալումը,

բ) խոսքի իմաստային մակարդակը հասկանալու ինքնավերահսկումը,

գ) ներունակ բառապաշարի յուրացման վրա հիմնված հաղորդման իմաստը, հարկ եղած դեպքում կռահելու ճկուն կարողությունների զարգացումը:

Հարկ է նշել, որ երրորդ փուլն ունի երկու էական առանձնահատկություն՝

1. ունկնդրության ուսուցումը կազմակերպվում է խոսողության կարողությունների զարգացման հետ սերտորեն փոխկապակցված, որը ենթադրում է բանավոր հաղորդակցման երկու բաղադրիչների՝ խոսքի ընկալման և արտահայտման հավասարազոր կարողությունների զարգացում,

2. բանավոր խոսքային բազմակողմանի գործունեությանն ուսանողներին նախապատրաստելու համար ինչպես մենախոսության, այնպես էլ երկխոսության կարողությունների զարգացում՝ հիմնված հարց ու պատասխանի կոմպետենցիայի վրա:

Ինչպես նշել ենք, առաջին և երկրորդ փուլերում ունկնդրության ուսուցման համար նախատեսված վարժությունները և առաջադրանքներն ընդհանուր առմամբ

հետապնդում են հիմնարար ունակություններ ձևավորելու և զարգացնելու նպատակ: Երրորդ փուլում խոսքային գործունեության այդ տեսակի կատարելագործումը ենթադրում է ձեռք բերված ունակությունները փոխակերպել հաղորդակցական իրական կարողությունների, որն իրականացվում է համապատասխան վարժությունների և հանձնարարությունների վրա հիմնված ուսումնախոսքային համակարգված գործունեությամբ:

Հետտեքստային փուլի համար նախատեսված առավել արդյունավետ առաջադրանքներն են.

1. Լսե՛ք հետևյալ տեքստը և առաջարկե՛ք համապատասխան վերնագիր.

Armenia lies in the highlands surrounding the Biblical mountains of Ararat. The original Armenian name for the country was Hayk, later Hayastan (Armenian: Հայաստան), translated as the land of Haik, and consisting of the name of the ancient Mesopotamian god Haya[1] (ha-ià) and the Persian suffix '-stan' ("land"). The historical enemy of Hayk (the legendary ruler of Armenia), Hayastan, was Bel, or in other words Baal (Akkadian cognate Bēlu). The word "Bel" is named in the Bible at Isaiah 46:1 and Jeremiah 50:2 and 51:44.

The name Armenia was given to the country by the surrounding states, and it is traditionally derived from Armenak or Aram (the great-grandson of Haik's great-grandson, and another leader who is, according to Armenian tradition, the ancestor of all Armenians). In the Bronze Age, several states flourished in the area of Greater Armenia, including the Hittite Empire (at the height of its power), Mitanni (South-Western historical Armenia), and Hayasa-Azzi (1600–1200 BC). Soon after the Hayasa-Azzi were the Nairi (1400–1000 BC) and the Kingdom of Urartu (1000–600 BC), who successively established their sovereignty over the Armenian Highland. Each of the aforementioned nations and tribes participated in the ethnogenesis of the Armenian people. Yerevan, the modern capital of Armenia, dates back to the 8th century BC, with the founding of the fortress of Erebuni in 782 BC by King Argishti I at the western extreme of the Ararat plain.[6]Erebuni has been described as "designed as a great administrative and religious centre, a fully royal capital."

2. Լսե՛ք և գրի առե՛ք հետևյալ բառերն ու բառակապակցությունները, այնուհետև դրանցով կազմե՛ք տեքստ՝ “The Political System of the USA” վերնագրով.

The Republican Party, government, federal republic, representative, the US Congress, to be elected, the head of the Senate, to consist of, senator, the House of Representatives, to form, to head, the Speaker, the Democratic Party, Vice-President, president, the USA, the District of Columbia, member.

3. Ունկնդրե՛ք “Artsakh” վերնագրով տեքստը և այն արտահայտե՛ք հարց ու պատասխաններով.

a) When was Artsakh (Karabakh) illegally separated from Armenia?

In 1923

b) Who was the initiator of anti-democratic act of separating Artsakh from motherland?

The dictator Josef Stalin

c) What was the real condition of the Armenians in Artsakh after receiving the status of autonomy?

The Armenians of this region were deprived of fundamental civil rights.

d) What was the number of the Armenians of Artsakh before gaining independence?

75 per cent.

e) Who did the Supreme Soviet of Artsakh appeal to for reunion with the Republic of Armenia?

To the Supreme Soviets of Armenia and Azerbaijan.

f) What was the result of the mentioned appeal?

The appeal was not only rejected by the Azerbaijan Government but also aroused ethnic disturbances between the Armenians and Azerbaijanians. Thousands of Armenians had to leave their birth-places, more than 30 people had been tortured and killed.

g) Had the Armenians any alternative but to struggle up to the victorious end?

No, they didn't.

4. Խմբովի քննարկե՛ք “Artsakh” տեքստը:

5. Արտահայտե՛ք ձեր կարծիքը ունկնդրված տեքստի իրադարձությունների վերաբերյալ:

6. Լսե՛ք անցյալ ժամանակով արտահայտված տեքստը և այն վերաձևակերպե՛ք պատմական ներկայով.

Herodotus (484-425 B.C.) wrote the “Historiai” (meaning-enquiries). In this work he tried to sort out fact from legend for the first time.

Thucydides (471-400 B.C.) wrote a long history of the war between Athens and Sparta.

Xenophon (431-354 B.C.) wrote several books about Socrates, the great Greek philosopher, as well as finished Thucydides’ “War History”.

7. Ունկնդրված տեքստի համաձայն՝ նշե՛ք հետևյալ նախադասություններին առընթեր տրված ճիշտ պատասխանը (տեքստը տես՝ հավելված 3-ում).

1. For most newcomers the USA is

- a. the land of opportunity
- b. the land of worship
- c. the land of common goals

2. People of similar national backgrounds settled

- a. with the other groups
- b. on land
- c. close to each other

3. To live in a democracy means to

- a. live free and easy
- b. suffer many sacrifices
- c. change for the better

4. People are not born under equal circumstances, but

- a. they have equal rights
- b. they can emigrate
- c. they can live on land

5. Though the Americans are tough, they

- a. help others

b. don't like the emigrants

c. don't help others

8. Լսելով տեքստը՝ գրի առե՞ք հետևյալ բառերի հոմանիշները.

area, continent, richness, reighbouring, to live, to achieve, splendid, completely, merciless

9. Լսելով տեքստը՝ գրի առե՞ք հետևյալ բառերի հականիշները.

success, poverty, inner, foreign, past, inefficient, disappear, to depart, backward

10. Կազմե՛ք ամփոփում ունկնդրված տեքստի վերաբերյալ:

Այսպիսով, անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման երեք փուլերից բաղկացած ողջ գործընթացն արտացոլված է վերը ներկայացված համալիր վարժություններում: Ուսուցման գործընթացում տվյալ համալիրի կիրառությունը հնարավորություն տվեց հստակեցնել յուրաքանչյուր փուլի համար նախատեսված առաջադրանքների կառուցվածքն ու բովանդակությունը: Ունկնդրության ուսուցման նախատեքստային, տեքստային և հետտեքստային փուլերում իրականացվող գործառույթները ամփոփված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ուսուցման փուլերը	Ունկնդրության ուսուցման հիմնական ուղղությունները
Նախատեքստային փուլ	Հնչյունաբանական դժվարությունների հաղթահարում Բառային դժվարությունների հաղթահարում Քերականական դժվարությունների հաղթահարում Ունկնդրված տեքստի բառերի թեմատիկ խմբավորում
Տեքստային փուլ	Տեքստին առնչվող հարցերի առաջադրում Ունկնդրվող տեքստի լեզվական երևույթների և բառիմաստի ճանաչում ու բացահայտում Ունկնդրվող և տպագիր տեքստերի տարբեր միավորների համապատասխանեցում

	<p>Որոշակի առաջադրանքների համաձայն տեքստի տեղեկատվության նոթագրում</p> <p>Տեքստի բովանդակային տարրերի մեկնաբանում</p> <p>Տեքստի անավարտ հատվածների լրացում</p> <p>Տեքստի հետ աշխատելու մասնագիտական գործառույթների իրականացում</p>
<p>Հետտեքստային փուլ</p>	<p>Ունկնդրության և խոսողության կարողությունների փոխկապակցված զարգացում</p> <p>Մենախոսության և երկխոսության բազմակողմանի խոսքային գործունեության կարողությունների զարգացում</p> <p>Հարց ու պատասխանների կոմպետենտության զարգացում</p> <p>Ունկնդրված տեքստի խմբակային քննարկում</p> <p>Մասնագիտական եզրույթների և հասկացությունների յուրացում և գործածում</p> <p>Ներունակ բառապաշարի զարգացում</p> <p>Տեքստի հետ բազմակողմանի աշխատանք կատարելու փորձառության ձեռքբերում</p>

Ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական փուլային ուսուցումն իրականացվել է հատուկ այդ նպատակով ընտրված տեքստերի հիման վրա, որոնք վերաբերում են բացառապես պատմագիտական ենթալեզվին:

Ե. Ս. Գորյունովան առաջարկում է մասնագիտական կոմնորոշման տեքստերի ընտրության հետևյալ չափանիշները՝

- տեքստերի առարկայական կապակցելիություն,
- թեմատիկ ամբողջականություն,
- տեղեկատվական նորույթ,
- գործառական պայմանավորվածություն (Горюнова 2011: 60-64):

Վերջին տարիներին հաղորդակցական մոտեցման շրջանակներում մեծ տեղ է հատկացվում հատկապես բնագրայնության և հաղորդակցականության սկզբունքներին (Попова 2012, Похабова 2010, Серова 2009, Крылова 1994, Зуева 2004, Фоломкина 2005, Латушко 2004, Зимняя 2003): Կարևորվում է հատկապես բնագրայնության սկզբունքը (Носонович, Мильруд, 1999, Азимов, Щукин 2009):

Ե. Ա. Քարտաշովան առանձնացնում է ուսուցողական նպատակներով կիրառվող տեքստի ընտրության հաղորդակցականության, պրոբլեմայնության, համակարգայնության, մատչելիության, արդիականության, տեղեկատվության, հաջորդականության սկզբունքները (Карташова 2017):

Ըստ Ն. Սերգեևայի՝ օտարալեզու մասնագիտական կողմնորոշման ուսումնական տեքստին ներկայացվող հիմնական պահանջներն են.

1. Տեքստերի ընտրությունը պետք է կրի համապարփակ բնույթ, որի համաձայն՝ այդ գործընթացի հիմքում ընդունվում է ոչ թե առանձին տեքստերի, այլ մեթոդական բովանդակությամբ փոխկապակցված համալիր տեքստերի մշակման մոտեցումը: Վերջինս ենթադրում է ընտրել ողջ դասընթացի համար անհրաժեշտ քանակի տեքստեր (Сергеева 1999: 81): Ընդ որում՝ տվյալ համալիրում պետք է ընդգրկվեն ինչպես լսարանային, այնպես էլ անհատական կամ արտալսարանային պարապմունքների համար նախատեսված տեքստեր:

2. Ընտրված տեքստերը պետք է արտացոլեն տվյալ մասնագիտության հիմնական դրույթները և մասնագիտական գործունեության բոլոր ոլորտները (Быбина 1999: 119): Օրինակ՝ մանկավարժական բուհում «պատմություն» առարկայի մասնագիտացումը ներառում է ոչ միայն պատմագիտական, այլև այն դասավանդելու գիտելիքների ուսուցումը: Հետևաբար, այդ բաժնում ուսուցման ենթակա օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերը պետք է արտացոլեն նաև մանկավարժամեթոդական թեմատիկան:

3. Նշված համալիրն ամբողջացնող տեքստերը պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով տվյալ բուհում և ֆակուլտետում օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները՝ դասընթացի տևողությունը, տվյալ ակադեմիական խմբում ընդգրկված ուսանողների օտարալեզու հաղորդակցական նախորդ փորձը և

գիտելիքների համապատասխանության աստիճանը, ուսումնաստանդակ տեխնիկական և ոչ տեխնիկական միջոցների հագեցվածությունը, դասավանդողի մասնագիտական բնութագրերը և այլն (Сергеева 1999: 82):

Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման տեքստերի համալիրն ընտրվել է՝ հիմք ընդունելով Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետում օտար լեզվի դասընթացին հատկացվող ընդհանուր ժամաքանակը: Լսարանային և անհատական պարապմունքներին, միասին վերցված, հատկացվում է մինչև 308 ժամ, որն իրականացվում է բակալավրատի առաջին չորս կիսամյակներում՝ շաբաթական երկու լսարանային պարապմունքով: Հասկանալի է, որ խոսքային գործունեության մյուս տեսակների համամասնական զարգացման շրջանակում ունկնդրության ուսուցումը նույնպես պետք է կազմակերպվի խիստ սեղմ ժամանակահատվածում, ինչը կանխորոշում է այդ գործընթացի իրականացման համար նախատեսված տեքստերի ծավալը, կառուցվածքը և բովանդակությունը:

Նման պայմաններում խորհուրդ է տրվում 2- 4 թույլ հնչողությամբ ոչ ծավալուն մասնագիտական կողմնորոշման տեքստեր (Зудова 1997: 118, Шахназарян 2014: 3):

Քննարկվող տեքստերի ընտրությունը կատարվել է երկու եղանակով՝ 1) ադապտացված ուսումնական տեքստերի լրամշակում, 2) բնագիր տեքստերի մշակում:

Տեքստերը լրամշակելիս հաշվի են առնվել նրանց ոճաժանրային առանձնահատկությունները, ինչպես նաև բառապաշարը զուգահեռական և մեթոդական տիպականցման տեսանկյունից:

Ստորև ներկայացնում ենք հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման ունակությունների և կարողությունների բացահայտմանն ուղղված վարժությունների օրինակներ.

Հնչույթային լսողության առնչությամբ.

Առաջադրանք 1. Լսե՛ք չորս խումբ նախադասությունները երկու անգամ և նշե՛ք այն բառերը, որոնք առկա են բառացանկում.

1.	<input type="checkbox"/>	2.	<input type="checkbox"/>	3. find		4.	
sunny		wood				health	
funny	<input type="checkbox"/>	hood	<input type="checkbox"/>	Fight		wealth	
honey	<input type="checkbox"/>	food	<input type="checkbox"/>	Right		death	
money	<input type="checkbox"/>	foot	<input type="checkbox"/>	Bright		dealt	

Առաջադրանք 2. Լսե՛ք տեքստը երկու անգամ և նշե՛ք դրանում առկա այն բառերը, որոնք ընդգրկված են ձեզ տրամադրված բառացանկում.

- | | | | | | |
|---------------|--------------------------|--------------|--------------------------|--------------|---------------|
| 1. to enslave | <input type="checkbox"/> | 7. poverty | <input type="checkbox"/> | 13. central | 19. Spaniards |
| 2. to defend | <input type="checkbox"/> | 8. reunion | <input type="checkbox"/> | 14. solar | 20. Armenian |
| 3. to inhabit | <input type="checkbox"/> | 9. culture | <input type="checkbox"/> | 15. golden | 21. Mexican |
| 4. to conquer | <input type="checkbox"/> | 10. conquest | <input type="checkbox"/> | 16. national | 22. America |
| 5. to control | <input type="checkbox"/> | 11. region | <input type="checkbox"/> | 17. inner | 23. Europeans |
| 6. to impress | <input type="checkbox"/> | 12. failure | <input type="checkbox"/> | 18. southern | 24. Indians |

Օպերատիվ հիշողության առնչությամբ.

Առաջադրանք 3. Լսե՛ք անգլերեն բառերը և նշե՛ք դրանց համարժեքը հայերեն բառացանկում.

- | | | | |
|------------------------|--------------------------|-------------------------------------|--------------------------|
| 1. ruler-կառավարիչ | <input type="checkbox"/> | 6. curiosity - արտակարգություն | <input type="checkbox"/> |
| կարգապահ | <input type="checkbox"/> | հետաքրքրասիրություն | <input type="checkbox"/> |
| 2. to found –հիմնադրել | <input type="checkbox"/> | 7. historiography – պատմագիտություն | <input type="checkbox"/> |
| հայտնաբերել | <input type="checkbox"/> | պատմագրություն | <input type="checkbox"/> |
| 3. system – համալիր | <input type="checkbox"/> | 8. monarchy – միապաշտություն | <input type="checkbox"/> |

- | | |
|---|---|
| համակարգ <input type="checkbox"/> | միապետություն <input type="checkbox"/> |
| 4. limited- սահմանորոշ <input type="checkbox"/> | 9. archeology –հնագրություն <input type="checkbox"/> |
| սահմանափակ <input type="checkbox"/> | հնագիտություն <input type="checkbox"/> |
| 5. policy – ոստիկանություն <input type="checkbox"/> | 10. progress - առաջադիմություն <input type="checkbox"/> |
| քաղաքականություն <input type="checkbox"/> | առաջադասություն <input type="checkbox"/> |

Առաջադրանք 4. Լսե՛ք տեքստը երկու անգամ և գրի՛ առեք բուն բովանդակությանը վերաբերող բառերը:

Խոսքի հավանական կռահման առնչությամբ.

Առաջադրանք 5. Լրացրե՛ք նախադասություններում բաց թողնված հատվածները՝ ունկնդրված տեքստի համաձայն.


1. The Spaniards were the first to arrive 2. Six hundred Spaniards Hernando Cortez the Mexican coast. 3. With the help of they of the Aztec Empire. 4. The Aztecs civilized peoples the central and southern 5. ... that 125 languages ... throughout the area. 6. A decade later the beautiful ..., ... and ... were reduced to ... and most of ... destroyed or enslaved.

Առաջադրանք 6. Համապատասխանեցրե՛ք ձախ և աջ սյունակների բառերն ու բառակապակցությունները՝ ըստ ունկնդրված տեքստի.

1. The gold medal	1. the head of the federal republic
2. It is believed	2. to take great interest in history
3. A mighty state	3. their nation Hay and the country Haiastan
4. The president is	4. must be at least 30 years old
5. The Urartu state	5. has undergone invasions for numerous times
6. Foreigners name us	6. was formed under Tigran the Great
7. The Armenians call	7. existed three centuries

8. A senator	8. Armenians and the country Armenia
9. The Armenian state	9. that the Aztecs had an organized government
10. He is said	10. is the most honorable reward

Դիտարկվող ուսումնամեթոդական համալիրում ներառված բոլոր բաղադրիչների համակողմանի քննարկումը մեզ բերում է այն համոզման, որ այն ի զորու է էականապես բարձրացնել օտարալեզու ունկնդրության ուսուցման արդյունավետությունը: Ըստ էության՝ հաջողվել է մշակել մեթոդական մի նոր համալիր, որը լիովին բավարարում է տվյալ ենթալեզվի շրջանակում ունկնդրության ուսուցման և յուրացման պահանջները պատմական ֆակուլտետի առանձնահատուկ պայմաններում: Այդ համալիրի արդյունավետության իրական գրավականը նրա գիտականությունն է այնքանով, որքանով որ այն մշակվել է ժամանակակից մեթոդիկայի պահանջների համաձայն, ինչը հնարավորություն է ընձեռում բացահայտել, վերահսկել և կանոնավորել ունկնդրության ունակությունների և կարողությունների զարգացման ընթացքը դասընթացի բոլոր փուլերում: Դրանով պետք է բացատրել, որ մեթոդական այդ համալիրի գործածությունը հարմար է, մատչելի և արդյունավետ ինչպես դասավանդողների, այնպես էլ ուսանողների համար, քանի որ այն ներառում է ուսուցման ընթացակարգի անհրաժեշտ բոլոր կողմերն ու պայմանները (տես՝ գծապատկեր 4):



Պատմական ֆակուլտետի համար նախատեսված անգլերենի ունկնդրության փորձարարական ուսուցման բովանդակային հենք է հանդիսացել սույն ատենախոսության հիմքում ընկած մեթոդական համալիրը, որի տեսական և կիրառական դրույթները շարադրված են առաջին և երկրորդ գլուխներում:

Փորձարարական ուսուցման փուլային կազմակերպման բաղադրիչները դիտարկենք առանձին-առանձին:

Կազմակերպչական փուլում առաջադրվել է երկու հիմնական խնդիր՝

1. համակողմանի ստուգել առաջարկվող մեթոդական համալիրի արդյունավետությունը ուսանողների օտարալեզու ունկնդրական ունակությունների ձևավորման և կարողությունների զարգացման գործընթացում,
2. բացահայտել անգլերեն լեզվով ունկնդրության՝ որպես խոսքային գործունեության, տվյալ տեսակի հիմքը հանդիսացող հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կոահման կարողությունների զարգացման ընթացքը ոչ լեզվական ֆակուլտետում:

Նախապատրաստական փուլում փորձ է արվել հաստատել կամ հերքել տվյալ մեթոդական համալիրի վերաբերյալ տեսական և կիրառական այն դրույթները:

Ըստ այդմ, վարժություններն ընտրվել ըստ պատմական, պատմագիտական թեմատիկայի: Ըստ մեթոդական բովանդակության՝ այդ վարժությունները բաժանվում են երեք խմբի և բազմաթիվ ենթախմբերի, քանի որ նախատեսված են ունկնդրության ուսուցման առանձին փուլերում տարբեր խնդիրներ իրականացնելու համար:

Փորձարարական ուսուցման երեք փուլից յուրաքանչյուրի համար ընտրվել են տասը տեքստ, որոնք շոշափում են պատմագիտական ուշագրավ թեմաներ: Տեքստերի ուսուցողական արդյունավետությունն ապահովելու նպատակով դրանք մշակելիս մենք առաջնորդվել ենք տեքստակազմական կարևորագույն սկզբունքներով և մասնագիտական կողմնորոշման նյութերին առաջադրվող պահանջներով: Տարբեր փուլերի համար նախատեսված տեքստերն իրենց ծավալով, բառանյութի և քերականական բարդության աստիճանով իրարից տարբերվում են: Ըստ ուսումնական

փուլերի՝ մշակված տեքստերի լրակազմը ներկայացված է ատենախոսության հավելվածում:

դ) Վերը նշվել է, որ անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական ուսուցումը կազմակերպվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության բաժնի բակալավրատի առաջին և երկրորդ կուրսերում: Պատմական ֆակուլտետում ակադեմիական խմբերը ձևավորվում են օտար լեզվով հաղորդակցվելու տարբեր փորձ և լեզվական մակարդակ ունեցող ուսանողներով: Անտարակույս, նման պայմաններում օտար լեզվի փորձարարական ուսուցման կազմակերպումը դժվար է: Փորձարարական ուսուցման համար ընտրվել են փորձարարական և ստուգողական խմբեր:

Փորձարարական ուսուցման իրականացման փուլը ներառում է *նախափորձարարական, փորձարարական, հետփորձարարական ենթափուլերը:*

Նախափորձարարական շրջանում հստակեցվել են փորձարարության մասնակիցների քանակական և որակական կազմը, անգլերեն լեզվի ուսումնասիրության և մասնավորապես ունկնդրության յուրացման հետ կապված նրանց մասնագիտական, ճանաչողական և հաղորդակցական պահանջունքները: Սակայն այս ենթափուլի գլխավոր խնդիրն էր հնարավորինս ճշգրտորեն պարզել այդ ուսանողների ունկնդրական մեկնարկային ունակությունները և մասնագիտական ենթալեզվի գիտելիքները: Առանց այդ տվյալների հնարավոր չէր կազմակերպել փորձարարական ուսուցումը, քանի որ նախափորձարարական և փորձարարության տարբեր ենթափուլերի նույն տվյալները համեմատելով՝ միայն կարելի է պարզել ունկնդրական կարողությունների և հմտությունների զարգացման դինամիկան:

Փորձարարական ուսուցման համար ընտրված ուսանողների մեկնարկային ունակություններն ու գիտելիքները բացահայտելու նպատակով մենք մշակել ենք 5 հանձնարարությունից բաղկացած առանձին թեստերի լրակազմ (տես՝ հավելված 4): Առավել ստույգ և հավաստի տվյալներ ստանալու նպատակով այդ հանձնարարությունները կազմվել են այնպես, որ ի հայտ բերվեն նրանց ունկնդրության առանցքային բաղադրիչների՝ հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման մեկնարկային ունակությունները:

Ունկնդրության բաղադրիչներից յուրաքանչյուրի մեկնարկային ունակությունների բացահայտման համար մշակվել են չորս տիպի թեստային հանձնարարություն: Դրանք բաղկացած են մի քանի հարցերից, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավորով: Առանձին վերցրած՝ փորձարարական և ստուգողական խմբերի բոլոր ուսանողների դրական պատասխանների ամբողջությունը՝ միագումար արդյունքը, որն արտացոլում է ունկնդրության տվյալ բաղադրիչի նրանց մեկնարկային կարողությունների և հմտությունների փաստացի մակարդակը, ստորև ներկայացվում է ինչպես գծապատկերով, այնպես էլ տոկոսային հարաբերակցությամբ: Տոկոսային հաշվարկը կատարվում է ընդհանրացված՝ միավորների մակարդակով:

Նախափորձարարական հարցմանը մասնակցել են փորձարարական և ստուգողական խմբերի 28-ական ուսանողներ: Այդ խմբերի թեստային հարցման արդյունքները ներկայացվում են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

ՆԱԽԱՓՈՐԶԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
 àðÛÛ, ðàðÁÛ²Û àðèàðòø²Û øàðÈ²ÛÆÛ ¶àð¹èàðÚÁÛ°ðÀ

àðèàðóÛ³Ý ÷àðÉ»ñÁ	àðÝÛ¹ñáðÁÛ³Ý àðèàðóÛ³Ý ÑÇÛÝ³Û³Ý àðÕÕáðÁÛáðÝÝ»ñÁ
Û³È³Û»ùèÛ³ÛÇÝ ÷àðÉ	ÐÝãÛáðÝ³, ì³Ý³Û³Ý ¹Á³ñáðÁÛáðÝÝ»ñÇ Ñ³ÕÃ³Ñ³ñáðÛ '³é³ÛÇÝ ¹Á³ñáðÁÛáðÝÝ»ñÇ Ñ³ÕÃ³Ñ³ñáðÛ ø»ñ³Û³Ý³Û³Ý ¹Á³ñáðÁÛáðÝÝ»ñÇ Ñ³ÕÃ³Ñ³ñáðÛ àðÝÛ¹ñ¹Í Û»ùèÛÇ ì³é»ñÇ Ã»Û³ÛÇÛ ÈÛì³íáðáðÛ
î»ùèÛ³ÛÇÝ ÷àðÉ	î»ùèÛÇÝ ³éÝáíáÕ Ñ³ñó»ñÇ ³é³ç³¹ñáðÛ àðÝÛ¹ñ¹íáÕ Û»ùèÛÇ È»½¹³Û³Ý »ñ·áðÛÁÝ»ñÇ · ì³éÇÛ³èÛÇ ×³Ý³ãáðÛ áð ì³ó³Ñ³Û¹áðÛ àðÝÛ¹ñ¹íáÕ · ì³·Çñ Û»ùèÛ»ñÇ ì³ñ»ñ ÛÇ³íáñÝ»ñÇ Ñ³Û³á³Û³èÈ³Ý»óáðÛ

	<p>àñáβ³íç ³é³ç³¹ñ³ÝúÝ»ñç Ñ³Ù³Ó³ÙÝ ì»ùèìç ì»Õ»ì³¹íáõÃÙ³Ý ÝáÃ³·ñáõÙ</p> <p>î»ùèìç ³áí³Ý¹³í³ÙçÝ ì³ññ»ñç Ù»ì³³³³ÝáõÙ</p> <p>î»ùèìç ³Ý³í³ñ Ñ³¹³í³Ý»ñç Éñ³óáõÙ</p> <p>î»ùèìç Ñ»ì ³BË³ì»Éáõ Ù³éÝ³·ç³í³Ý ·.áñ³éáõÃÙÁÝ»ñç Çñ³í³Ý³óáõÙ</p>
<p>Ð»ì»ùèì³ÙçÝ ÷áõÉ</p>	<p>àõÝíÝ¹ñáõÃÙ³Ý ·· ÉáéáÕáõÃÙ³Ý ì³ñáÕáõÃÙáõÝÝ»ñç ÷áË³á³í³í ½³ñ·³óáõÙ</p> <p>∅»Ý³ÉáéáõÃÙ³Ý ·· »ñìÉáéáõÃÙ³Ý ³¹½Ù³íáÕÙ³Ýç Éáèù³ÙçÝ ·.áñíáõÝ»áõÃÙ³Ý ì³ñáÕáõÃÙáõÝÝ»ñç ½³ñ·³óáõÙ</p> <p>Ð³ñó áõ á³¹³Ë³ÝÝ»ñç íáÙá»ì»ÝíáõÃÙ³Ý ½³ñ·³óáõÙ</p> <p>àõÝíÝ¹ñí³ ì»èùìç ÈÙ³í³ÙçÝ ùÝÝ³ñíáõÙ</p> <p>∅³éÝ³·ç³í³Ý »½ñáõÃÙÁÝ»ñç ·· Ñ³èì³óáõÃÙáõÝÝ»ñç Ùáõñ³óáõÙ ·· ·.áñí³íáõÙ</p> <p>Ù»ñáõÝ³í ³é³á³β³ñç ½³ñ·³óáõÙ</p> <p>î»ùèìç Ñ»ì ³¹½Ù³íáÕÙ³Ýç ³BË³¹³Ý ì³¹³ñ»Éáõ ÷áñÓ³éáõÃÙ³Ý Ó»éùμ»ñáõÙ</p>

Նախափորձարարական հարցման ընդհանուր արդյունքները վկայում են, որ անգլերեն լեզվով պատմագիտական տեքստեր ունկնդրելու ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբի ուսանողների մեկնարկային ունակություններն ու գիտելիքները սահմանափակ են: Դա պետք է բացատրել առաջինը՝ անգլերեն լեզվով նրանց հաղորդակցման անբավարար նախորդ փորձի և երկրորդ՝ տվյալ լեզվով պատմագիտական ենթալեզվին նոր ծանոթանալու հանգամանքներով: Ինչ

վերաբերում է ունկնդրության առանձին բաղադրիչների՝ հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման ուսանողների ունակություններին փորձարարական ուսուցման նախնական փուլում, ապա դրանք ավելի մանրամասն քննարկման կարիք ունեն:

Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ նշված երկու խմբի ուսանողներն ամենաքիչ սխալները թույլ են տվել հնչույթային լսողության հանձնարարություններից, միջինը՝ համապատասխանաբար 38% և 33%, որն, իհարկե, բավարար արդյունք չէ: Սակայն ունկնդրության մյուս երկու բաղադրիչի՝ օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման հանձնարարություններից նրանց ցուցանիշները էլ ավելի վատ են, ընդամենը՝ համապատասխանաբար 24/25% և 28/29% միջին արդյունավետության: Համապատասխանաբար 29% և 30% փորձարարական և ստուգողական խմբերի միջին ցուցանիշները մեկ անգամ ևս հաստատում են անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցումը համակարգված կազմակերպելու համար նախատեսված ուսումնամեթոդական համալիր ներդնելու անհրաժեշտությունը:

1. *Փորձարարական ենթափուլն* ընդգրկել է ուսումնական պլանով նախատեսված անգլերեն պատմագիտական ենթալեզվի ուսուցման ողջ դասընթացը՝ բակալավրատի առաջինից չորրորդ կիսամյակները: Այդ ժամանակահատվածում անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական ուսուցումն իրականացվել է երեք փուլով, որոնց առաջ դրվել են կոնկրետ նպատակներ և խնդիրներ: Ուսուցման գործընթացը կազմակերպվել է բացառապես խնդրո առարկա մեթոդական համալիրի շրջանակում մշակված տեքստերի, վարժությունների և թեստերի հիման վրա:

Անգլերեն լեզվի փորձարարական ուսուցումն իրականացվել է հետևյալ ընթացակարգով.

ա) Ունկնդրության փուլային ուսուցման հիմքում ընկած էր հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման կարողությունների և հմտությունների փոխկապակցված զարգացումը:

բ) Ուսուցման յուրաքանչյուր փուլում ունկնդրության նշված բաղադրիչների յուրացման գործընթացը վերահսկվել է միջանկյալ և հանրագումարային թեստային հարցումների միջոցով:

գ) Ուսուցման յուրաքանչյուր փուլի հանրագումարային թեստերով հարցման են ենթարկվել նաև ստուգողական խմբի ուսանողները:

դ) Փորձարարական և ստուգողական յուրաքանչյուր խմբի ուսանողների ամփոփիչ հարցման ընդհանրացված տվյալների հիման վրա ստացվել է ըստ ունկնդրության բաղադրիչների ուսուցման այս կամ այն փուլում տվյալ խմբի կողմից ձեռք բերված ունակությունների և կարողությունների զարգացման աստիճանի օբյեկտիվ պատկերը:


ե) Փորձարարական և ստուգողական խմբերի հանրագումարային տվյալները համեմատվել են համապատասխանաբար նրանց մեկնարկային և նախորդ փուլերի տվյալների հետ:

զ) Փորձարարական ուսուցման ընթացքում նշված բազմակողմանի և բազմամակարդակ համեմատությունները հնարավորություն են ընձեռել մի կողմից անհրաժեշտ ճշգրտումներ մտցնել ուսուցման գործընթացում, մյուս կողմից, հիմնավորված տվյալների հիման վրա, ի հայտ բերել փորձարարական և ստուգողական խմբերում սովորողների ունկնդրական ունակությունների և կարողությունների զարգացման ընթացքը:

Ստորև ներկայացնում ենք փորձարարական և ստուգողական խմբերում ըստ ունկնդրության բաղկացուցիչների երեք փուլից յուրաքանչյուրի ամփոփիչ ընդհանրացված տվյալները առանձին աղյուսակներով.

Աղյուսակ 7

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Աղյուսակ 7-ում ներկայացված տվյալների համաձայն՝ անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական ուսուցման առաջին փուլի ամփոփիչ հարցման արդյունքներով փորձարարական խումբը բոլոր ցուցանիշներով գերազանցել է ստուգողական խմբին: Այս փուլում կիրառված տեքստերն ու վարժությունները նշանակալիորեն նպաստել են հաղթահարելու հնչյունաբանական, բառային և քերականական այն դժվարությունները, որոնք խոչընդոտում են ունկնդրական ունակությունների և կարողությունների զարգացմանը: Ասվածի վկայությունը փորձարարության առաջին փուլում արձանագրված ունկնդրության բաղադրիչների արդյունավետ զարգացումը հավաստող աղյուսակ 7-ի տվյալներն են: Դրանց համաձայն՝ առաջին փուլի ավարտին, ըստ ունկնդրության բաղադրիչների, փորձարարական և ստուգողական խմբերի ձեռք բերած ունակությունների և կարողությունների զարգացման մակարդակների միջև առկա տարբերությունը տոկոսային հարաբերությամբ կազմել է հնչույթային լսողությունից 12%, օպերատիվ հիշողությունից 6% և խոսքի հավանական կռահումից 11%:


Կիրառված ուսումնամեթոդական համալիրի արդյունավետությունը ունկնդրության փորձարարական ուսուցման առաջին փուլում ավելի ստույգ պարզելու համար անհրաժեշտ է տվյալ փուլի ամփոփիչ հարցման արդյունքները համեմատել նաև նախափորձարարական ենթափուլի տվյալների հետ: Այդ տեսանկյունից աղյուսակներ 6-ի և 7-ի համեմատությունը ցույց է տալիս, որ ունկնդրության բոլոր բաղադրիչների

զարգացման ուղղությամբ փորձարարական խումբը էական առաջընթաց է ունեցել: Տոկոսային ցուցանիշներով առաջընթացը կազմել է հնչույթային լսողությունից 13%, օպերատիվ հիշողությունից 15% և խոսքի հավանական կռահումից 18%:

Նշված տվյալները հավաստում են, որ կիրառված ուսումնամեթոդական համալիրը հաստատուն հիմք է ստեղծել անգլերեն լեզվով ունկնդրության ունակությունների և կարողությունների հետագա նպաստավոր զարգացման համար:

Աղյուսակ 8

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ




Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 8-ի գծապատկերները, փորձարարության երկրորդ փուլում ունկնդրության բաղադրիչների զարգացման մակարդակով փորձարարական խումբը զգալիորեն առաջ է անցել ստուգողական խմբից: Տոկոսային հարաբերությամբ այդ տարբերությունը կազմում է համապատասխանաբար՝ հնչույթային լսողությունից 22%, օպերատիվ հիշողությունից 13% և խոսքի հավանական կռահումից 18%: Այդ տվյալները վերստին հաստատում են անգլերեն լեզվով մասնագիտական կողմնորոշման ունկնդրության փորձարարական ուսուցման բարձր արդյունավետությունը:

Նշված ցուցանիշների և փորձարարության առաջին փուլում գրանցված արդյունքների համեմատությունից պարզվեց, որ ունկնդրության ոչ բոլոր բաղադրիչներն են համաչափ զարգանում: Մասնավորապես աղյուսակներ 7-ի և 8-ի տվյալների համաձայն՝ օպերատիվ հիշողության զարգացման ընթացքը հետ է մնում հնչույթային լսողության և խոսքի հավանական կռահման ընդհանուր զարգացման ընթացքից: Դրանից պետք էր հետևություն անել, որ փորձարարության հաջորդ փուլում անհրաժեշտ է ինտենսիվացնել օպերատիվ հիշողության ուսուցման ուղղությամբ տարվող աշխատանքը:

Ըստ մեթոդական համալիրի մտահղացման՝ ունկնդրության ուսուցման երկրորդ փուլի հաջող ելքը վճռորոշ նշանակություն ունեցող փորձարարության ընդհանուր հաջողությունը ամրագրելու համար: Եթե փորձարարության առաջին փուլը հետապնդում էր պատմագիտական ենթալեզվի շրջանում ունկնդրական հիմնարար ունակություններ և կարողություններ ստեղծելու նպատակ, ապա երկրորդ փուլը պետք է ապահովեր խոսքային գործունեության այդ տեսակի այնպիսի մակարդակ, որը ուսանողներին հնարավորություն կընձեռներ պատմագիտական ուսումնական տեքստերից աստիճանաբար անցնել բնագիր տեքստերի բնականոն ունկնդրությանը: Դատելով աղյուսակ 8-ում ներկայացված տվյալներից՝ կարելի է հաստատել, որ երկրորդ փուլի առջև դրված հիմնական նպատակը իրականացվել է:

Աղյուսակ 9

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Աղյուսակ 9-ում ներկայացված գծապատկերները ցույց են տալիս, որ փորձարարության երրորդ՝ ավարտական փուլում, ունկնդրության ունակությունները և կարողությունները շարունակել են շատ արագ զարգանալ: Տվյալ փուլի ամփոփիչ հարցման արդյունքների համաձայն՝ ունկնդրության առանձին բաղադրիչների զարգացման մակարդակով փորձարարական և ստուգողական խմբերի միջև տարբերությունը տոկոսային հարաբերությամբ կազմել է համապատասխանաբար՝ հնչույթային լսողությունից 27%, օպերատիվ հիշողությունից 18% և խոսքի հավանական կռահումից 31%: Այդ ցուցանիշները գոհացուցիչ են, մանավանդ եթե հաշվի առնենք, որ փորձարարության երրորդ փուլը տևել է մեկ կիսամյակ՝ 52 լսարանային ժամ:

Փորձարարական հետազոտության երրորդ փուլի արդյունքում ստացված հիշյալ արդյունքները հաստատում են անգլերեն լեզվով պատմագիտական տեքստեր ունկնդրելու փորձարարական խմբի ձեռք բերած բարձր ընկալունակությունը, ուստիև մեր կողմից մշակված մեթոդական համակարգը կիրառման անառարկելի նպատակահարմարությունը: Ասվածը հաստատվում է նաև ստուգողական խմբի ցույց տված ընդհանուր արդյունքով: Դա խոսում է այն մասին, որ ունկնդրության ուսուցման գործող համակարգը աներկբայորեն զիջում է առաջարկվող մեթոդական համակարգին:


Փորձարարության երրորդ փուլում ունկնդրության ուսուցումն էապես տարբերվում էր նախորդ երկու փուլերից, քանի որ հետապնդում էր խոսողության հետ սերտորեն փոխկապակցված զարգացման նպատակ: Այդ տեսակետից աղյուսակ 9-ում արձանագրված փորձարարական խմբի ցուցանիշները վերաբերում են ոչ միայն տեքստեր բնականոն ունկնդրելու, այլև դրա հիման վրա բանավոր հաղորդակցման այլ գործառույթներ իրականացնելու ուսանողների ձեռք բերած ունակություններին և կարողություններին: Գիտափորձի ընթացքը և արդյունքները ցույց տվեցին, որ պատմագիտական տեքստերի արդյունավետ ունկնդրությունը հնարավորություն է ընձեռում արագորեն զարգացնել մասնագիտական այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են ամենատարբեր բանավոր աղբյուրներից լրացուցիչ տեղեկատվության ստացումը, նախապատրաստված և հանպատրաստից հաղորդումը, ընկալված բովանդակության վերարտադրումը, հարց ու պատասխանների հիման վրա պատմական իրողությունների քննարկումը, մտքերի փոխանակումը և այլն:

Ի մի բերելով անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական ուսուցման վերը նշված բոլոր արդյունքները՝ կարելի է փաստացի հավաստել, որ գործադրված մեթոդական համակարգն ապահովել է պատշաճ արդյունավետություն ողջ այդ գործընթացում: Ըստ փորձարարության՝ հաջորդական փուլերի ունկնդրության զարգացման ստույգ հարաբերակցությունը ի հայտ բերելու համար անհրաժեշտ է նաև համադրել այն ցուցանիշները, որոնք փորձարարական և ստուգողական խմբերի ամփոփիչ հարցման արդյունքում արձանագրվել են վերը ներկայացված աղյուսակներում:

Ուստի, փորձարարական և ստուգողական խմբերի ունկնդրական ունակությունների և կարողությունների վերաբերյալ աղյուսակներ 6, 7, 8 և 9-ում գրանցված ընդհանուր արդյունքների համեմատությունը, որը ներկայացվում է ստորև, ըստ էության՝ արտացոլում է խոսքային գործունեության այդ տեսակի զարգացման ընթացքը (տես՝ աղյուսակ 10):

Աղյուսակ 10

ՈՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ



Աղյուսակ 10-ի տվյալների համաձայն՝ նախափորձարարական շրջանում արձանագրված անզլերեն լեզվով պատմագիտական տեքստեր ունկնդրելու փորձարարական և ստուգողական խմբերի անկատար ունակությունները փորձարարական շրջանում դինամիկ զարգացում են ունեցել: Ընդ որում՝ այդ նույն տվյալների վկայությամբ փորձարարական խմբում ընդգրկված ուսանողների ունկնդրության զարգացման առաջընթացը զգալիորեն գերազանցել է փորձարարական խմբի համապատասխան ցուցանիշները: Աղյուսակ 10-ի գծապատկերները ցույց են տալիս, որ, ըստ գիտափորձի երեք փուլերի, փորձարարական խմբի առաջընթացը տոկոսային հարաբերությամբ կազմել է համապատասխանաբար՝ 45%, 62% և 81%: Ստուգողական խմբի համապատասխան ցուցանիշները կազմել են 36%, 44% և 56%, չնայած փորձարարական խմբի համեմատ տվյալ խմբի ունկնդրական հնարավորություններն ի սկզբանե փոքր-ինչ ավելի բարձր են եղել: Ունկնդրական ունակությունների և կարողությունների ընդհանուր մակարդակի բացարձակ առաջընթացը փորձարարական խմբում կազմել է 55%, իսկ ստուգողական խմբում՝ 26%: Նշված խմբերի ունկնդրության զարգացման ընդհանուր առաջընթացի տոկոսային տարբերությունը կազմել է 29%:

Ամփոփելով անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական ուսուցման ողջ գործընթացի արդյունքները, որոնք արտացոլված են վերը պատկերված հինգ աղյուսակներում, մենք տեսնում ենք, որ փորձարարական խումբը բոլոր ցուցանիշներով գերազանցել է ստուգողական խմբին: Գիտափորձի ընթացքը և արդյունքները հաստատեցին, որ փորձարարական խմբի ունկնդրական ունակությունների և կարողությունների հաստատուն առաջընթացը պայմանավորված է կիրառված մեթոդական համակարգի արդյունավետությամբ, որի հիմքում ընկած է խոսքային գործունեության այդ տեսակի կարևորագույն բաղադրիչների՝ հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կոահման ներդաշնակ զարգացումը:

3. *Հետփորձարարական շրջանում* հետազոտական աշխատանքով պետք էր բացահայտել, թե պատմության բաժնի ուսանողների կողմից ձեռք բերված անգլերենի ունկնդրական կարողությունները որքանով են նպաստել մասնագիտական ոլորտում այդ լեզվով բանավոր հաղորդակցվելու, պատմագիտության շրջանակում տարբեր գործառույթներ իրականացնելու կոմպետենտության զարգացմանը: Ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբի հետ այդ աշխատանքը կատարվել է հիմնականում դիտարկումների, թեստային հարցումների և զրույցների միջոցով:

Հետփորձարարական շրջանում իրականացված հետազոտությունը նպատակ ուներ ստուգել մեր նախնական վարկածն այն մասին, որ եթե առաջարկվող մեթոդական համակարգի գործադրման արդյունքում ուսանողների մեջ ձևավորվի անգլերենի ունկնդրական արդյունավետ համակարգ, ապա դա էականորեն կնպաստի այդ լեզվով բանավոր պատշաճորեն հաղորդակցվելու, ուստի և մասնագիտական տարբեր գործառույթներ ծավալելու փոխկապակցված խնդիրների լուծմանը: Այդ վարկածի հիմքում ընկած է մեթոդիկայում բազմիցս ապացուցված այն դրույթը, ըստ որի՝ տվյալ ենթալեզվի շրջանակում համակարգված ձևավորվող և զարգացող խոսքային գործունեության տեսակները ինչպես համարժեք դրսևորվելու, այնպես էլ շարունակապես կատարելագործվելու հիմնարար նախադրյալներ ունեն: Ասվածի փաստացի ապացույց կարելի է համարել նաև պատմագիտական ենթալեզվի շրջանակում մեր կողմից իրականացված ունկնդրության փորձարարական

արդյունավետ ուսուցումը, որի հաջողության գրավականը հանդիսացավ այդ գործընթացի բաղադրիչների՝ հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման ունակությունների և կարողությունների ներդաշնակ զարգացումը:

Հետփորձարարական շրջանում մեր հետազոտական աշխատանքի առաջ խնդիր էր դրված բացահայտել անգլերեն պատմագիտական բնագիր տեքստեր ունկնդրելու փորձարարական և ստուգողական խմբերի կարողությունները, որի շնորհիվ հնարավոր է իրականացնել մասնագիտական որոշակի գործառույթներ: Խոսքը վերաբերում է նշված տեքստերի բնականոն ունկնդրությանը, որի առկայությամբ պատմագիտության ապագա մասնագետները կարող են գործնական օգուտ քաղել, ինչպես, օրինակ, մեկ անգամ տեքստը լսելով՝ ըմբռնեն դրա ընդհանուր բովանդակությունը, ըստ անհրաժեշտության՝ մտապահեն տեքստում ամփոփված տեղեկատվության մանրամասները՝ անձնանունները, տեղանունները, տարեթվերը, ունկնդրելիս ուշադրությունը կենտրոնացնեն հանգուցային բառերի, փաստերի և հասկացությունների վրա, կռահեն ներունակ՝ անձանոթ բառանյութի իմաստը և այլն: Քանի որ ունկնդրական այդօրինակ գործունեությունն իրականանում է առավելապես հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման կարողությունների միջոցով, ուստի հենց այդ երեք ուղղություններով էլ կազմակերպվել է հետփորձարարական շրջանի հետազոտական աշխատանքը:

Ունկնդրության նշված բաղադրիչների զարգացման աստիճանը ի հայտ բերելու հետազոտությանը մասնակցել են փորձարարական և ստուգողական խմբերի հավասար թվով՝ 25-ական ուսանողներ: Անգլերեն լեզվով հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման կարողությունների բացահայտման համար մշակվել են 4-ական թեստերից բաղկացած համալիր հանձնարարություններ: Հաստատող հետազոտությունից հնարավորինս օբյեկտիվ արդյունքներ ստանալու նպատակով ձգտել ենք թեստային հանձնարարությունները մշակել առավել ընդգրկուն և համակողմանի հարցադրումներով: Որպեսզի թեստային հարցման ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբի ուսանողները

կարողանան առավելաչափ դրսևորել իրենց կարողություններն ուն հմտությունները, նրանց համար ստեղծվել են հավասար և նպաստավոր պայմաններ:

Անգլերեն լեզվով ունկնդրության քննարկվող հետազոտությունն իրականացվել է որոշակի գործողությունների և ստացված արդյունքների հաշվարկման հետևյալ ընթացակարգով:


Պետք է նշել, որ ունկնդրության ամեն մի բաղադրիչի զարգացման աստիճանը բացահայտելու համար կիրառված չորս թեստային հանձնարարություններն ընդգրկել են տարբեր քանակի հարցեր, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվել է 1 միավորով: Այդ հաշվարկի համաձայն՝ ունկնդրության տվյալ բաղադրիչի հարցման արդյունքում ստացված մեկ ուսանողի ճիշտ պատասխանների ընդհանուր գումարը փաստացի պետք է դիտվի իբրև նրա կողմից ձեռք բերված ունկնդրական կարողությունների զարգացման որոշակի մակարդակ: Հետևաբար, միևնույն խմբի ուսանողների դրական պատասխանների միագումար արդյունքը պետք է գնահատել իբրև տվյալ խմբի ունկնդրական կարողությունների ընդհանուր ներուժ: Նույն կերպ, իրար գումարելով առանձին վերցրած փորձարարական և ստուգողական խմբերի միագումար արդյունքները, մենք ստացել ենք թե՛ մեկ, թե՛ մյուս խմբի ուսանողների հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման կարողությունների զարգացման հետփորձարարական շրջանի ընդհանրական պատկերը:

Ունկնդրության բաղադրիչների թեստային հարցման արդյունքները մշակվել և հաշվարկվել են տոկոսային հարաբերությամբ հետևյալ կերպ. օրինակ՝ մենք գիտենք, որ թեստային հանձնարարությունների տվյալ համալիրը բաղկացած է 63 հարցից, և որ 1 ուսանող ճիշտ պատասխանել է 25 հարցի: Ավանդական մոտեցմամբ տվյալ ուսանողի ձեռք բերած ունկնդրական կարողությունների տոկոսային հարաբերությունը որոշելու համար պետք է ընդհանուր հարցերի թվից հանել ճիշտ պատասխանների թիվը՝ կիրառելով հետևյալ բանաձևը՝ $25 \times 100 / 63 = 39\%$: Այս բանաձևի հիման վրա՝ տոկոսային հարաբերությամբ հաշվարկվել են բոլոր այն տվյալները, որոնք, ըստ ունկնդրության երեք բաղադրիչների, արձանագրվել են փորձարարական և


ստուգողական խմբերի թեստային հարցման արդյունքում: Տոկոսները ներկայացվում են ամբողջական թվերով (տես՝ տրամագրեր 1, 2, 3):

Տրամագիր 1


ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ



ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ



ԽՈՍՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿՌԱՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ



Վերը ներկայացված երեք տրամագրերի Ա և Բ հատվածները, միմյանց լրացնելով, ավելի համակողմանի և ճշգրիտ պատկերացում են տալիս ունկնդրության բաղադրիչների մակարդակով փորձարարական և ստուգողական խմբերի հետփորձարարական շրջանի կարողությունների վերաբերյալ:


Հիշյալ տրամագրերի Ա հատվածում ներկայացված ունկնդրության բաղադրիչների վերաբերյալ տվյալները՝ հնչույթային լսողությունից 62%/38%, օպերատիվ հիշողությունից 56%/44% և խոսքի հավանական կռահումից 73%/27%, արտացոլում են փորձարարական և ստուգողական խմբերի ունկնդրական համամասնական կարողությունները: Պետք է նշել, որ ունկնդրության բաղադրիչների վերաբերյալ այդ տվյալներն արտացոլում են տվյալ ժամանակահատվածում երկու խմբի կարողությունների միջև եղած հարաբերական, բայց ոչ բացարձակ տարբերությունը, քանի որ ներառում են նաև միանման դրական արդյունքներ, որոնք թեստային հարցման արդյունքում արձանագրվել են թե՛ մեկ, թե՛ մյուս խմբում: Դրանք առանձին ներկայացված են տրամագրերի Բ հատվածում և ըստ բաղադրիչների նշված հերթականության՝ կազմում են 18%, 23% և 25%: Այդ տվյալները կարևորվում են այնքանով, որքանով որ դրանցից զատված զույգ տվյալները՝ 53%/29%, 45%/32% և 59%/25%, բացահայտում են փորձարարական և ստուգողական խմբերի ունկնդրական կարողությունների բացարձակ տարբերությունը, որը հետփորձարարական շրջանում կազմել է հնչույթային լսողությունից 24%, օպերատիվ հիշողությունից 13% և խոսքի հավանական կռահումից 34%:

Սույն ենթագլխի աղյուսակներում և տրամագրերում ամփոփված տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել փորձարարական խմբում կիրառված մեթոդական համակարգի ուսուցողական փաստացի հնարավորություններն անգլերենի ունկնդրության ինչպես առանձին բաղադրիչների, այնպես էլ դրանց փոխկապակցված կարողությունների զարգացման գործընթացում: Այդ տեսանկյունից փորձարարական շրջանում ունկնդրության բաղադրիչների փուլային կատարելագործման ընթացքը և հետփորձարարական շրջանում դրսևորված դրանց զարգացման միտումները հավաստում են, որ հնչույթային լսողության, առավել ևս խոսքի հավանական կռահման կարողությունները


համեմատաբար ավելի արագ են զարգացել, քան օպերատիվ հիշողության կարողությունները (տես՝ աղյուսակներ 11, 12, 13):

Աղյուսակ 11


ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ



ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ



ԽՈՍՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՒՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ



Աղյուսակներ 11, 12 և 13-ը համակողմանի լուսաբանում են սույն հետազոտության բոլոր փուլերում անգլերենի ունկնդրության հիմնական բաղադրիչների զարգացման ինչպես կանխատեսելի, այնպես էլ անկանխատեսելի արդյունքները: Դրանք ի հայտ են բերում հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման կարողություններին ոչ միայն անհավասարապես տիրապետելու փորձարարական և ստուգողական խբերում արձանագրված ստույգ տվյալները, ոչ միայն երկու խմբերի միջև դրսևորված այդ բաղադրիչների անհամազոր զարգացման ընթացքը, այլև հենց փորձարարական խմբում արձանագրված դրանց անհամամասնական զարգացման միտումները: Որպես ունկնդրության համարժեք կարողություններ՝ հիշյալ բաղադրիչների անհամամասնական զարգացումը, որն ի սկզբանե հնարավոր չէր կանխատեսել, չէր կարող իր բացասական ազդեցությունը չթողնել ուսուցման գործընթացի վրա: Խնդիրն այն է, որ անհրաժեշտ է բացահայտել այն գործոնները, որոնք ուսումնամեթոդական միևնույն համալիրի կիրառության և փորձարարության միևնույն պայմաններում ունկնդրության բաղադրիչների անհամամասնական զարգացման պատճառ են հանդիսացել:

Հիմք ընդունելով նախափորձարարական շրջանի մեկնարկային տվյալները՝ փորձարարական և հետփորձարարական շրջաններում ունկնդրության բաղադրիչների ոչ համարժեք զարգացման դինամիկան կարելի է բացատրել տվյալ հետազոտական գործընթացի թե՛ կանխատեսելի և թե՛ անկանխատեսելի որոշ հանգամանքներով:

Աղյուսակ 11-ի տվյալների համաձայն՝ անգլերեն պատմագիտության ենթալեզվի շրջանակում հնչույթային լսողության ունակությունների և կարողությունների փուլային ձևավորումն ու զարգացումը կրել են համաչափ և արագընթաց բնույթ: Պետք է նշել, որ ունկնդրության տվյալ բաղադրիչի զարգացման ընթացքը լիովին համապատասխանում է փորձարարական ուսուցման առջև դրված խնդրի իրականացման նախնական վարկածին:

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլերեն մասնագիտական խոսքի հավանական կռահման կարողությունների զարգացման ընթացքը գերազանցել է ակնկալվող նախնական արդյունքները: Դա պետք է բացատրել երկու գործոնով. առաջին՝ անգլերեն պատմագիտական ենթալեզվի սպասվածից ավելի

արագ յուրացմամբ, երկրորդ՝ առաջին գործոնով պայմանավորված և դրա հետ փոխկապակցված ներունակ բառապաշարի յուրացմամբ: Հայտնի է, որ օտարալեզու այս կամ այն ենթալեզուն և ներունակ բառապաշարը ձևավորվում և զարգանում են տեքստերի հետ աշխատելու արդյունքում: Այս տեսակետից անգլերենի ունկնդրության փորձարարական ուսուցման գործընթացում մեծաքանակ տեքստերի ուսումնասիրությունը լրացուցիչ խթան է հանդիսացել ներունակ բառապաշարի յուրացման համար համար: Ըստ այդմ՝ մայրենի և ռուսերեն լեզուներից ուսանողներին հայտնի առանձին անձնանունները, տեղանունները, տարեթվերը, պատմական իրողությունները և փաստերը, անգլերեն խոսքում ճանաչելու ուսանողների փորձը մեծապես նպաստել է խոսքի հավանական կռահման, ինչպես նաև բնագիր տեքստեր բնականոն ունկնդրելու կարողությունների նպատակասլաց ձևավորմանն ու զարգացմանը:

Աղյուսակներ 11, 12 և 13-ի համեմատությունից ակնհայտ է, որ ողջ հետազոտության ընթացքում օպերատիվ հիշողության ունակությունների և կարողությունների զարգացման ընթացքը նշանակալիորեն զիջում է մյուս երկու բաղադրիչներին: Փորձարարական խմբի ուսանողության օպերատիվ հիշողության զարգացման համեմատաբար ավելի դանդաղ տեմպերն ի հայտ են եկել փորձարարության հենց առաջին փուլից, ինչն, անշուշտ բացասաբար է անդրադարձել խոսքային գործունեության այդ տեսակի ընդհանուր կոմպետենցիայի վրա: Որպես խնդրի լուծում՝ օպերատիվ հիշողության առաջընթացը հնչույթային լսողության և խոսքի հավանական կռահման կարողությունների զարգացման մակարդակին մոտեցնելու ուղղությամբ ձեռնարկվել են լրացուցիչ միջոցներ:

Այսպիսով, քննության առարկա աղյուսակներում և տրամագրերում ներկայացված հետազոտության արդյունքները հաստատում են, որ փորձարարական խմբում անգլերենի ունկնդրության երեք հիմնական բաղադրիչի զարգացման ուղղությամբ փորձարարական և հետփորձարարական շրջաններում արձանագրվել է թեկուզ և ոչ համարժեք, սակայն ընդհանուր առմամբ, հաստատուն առաջընթաց, որի արդյունքում ուսանողները ձեռք են բերել ունկնդրության անհրաժեշտ կոմպետենտություն: Միևնույն ժամանակ մենք չենք անտեսում այն հավանական ելքը, որ այդ

բաղադրիչների ավելի ներդաշնակ զարգացման պարագայում կարող էր արձանագրվել ունկնդրական կարողությունների էլ ավելի բարձր մակարդակ:

